

ՀՈՍՄԻ ՊԱՊՈՒՆ ԿԵՐԱՅԱՍՏԱՏԵՑ՝ «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ 20-ՐԴ ԴԱՐՈՒ ԱՌԱՋԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆՆ Է»



Հռոմի Պապը եւ Հայ Կաթողիկէ պատրիարքը Վատիկանի մէջ

Յունիս 3-ին Ֆրանչիսկոս Սրբազան Քահանայապետը յատուկ ունկնդրութիւն շնորհեց Հայ կաթողիկէ ամենապատիւ տէր Ներսէս Պետրոս ԺԹ. կաթողիկոս պատրիարքին, որուն ընկերակցող պատուիրակութեան մաս կը կազմէին Անարատ Յղութեան հայ քոչրերու ընդհանուր մեծաւորուհի մայր Եւդոքսիա Քէշիշեան, Քահանայապետական, Լեւոնեան հայ վարժարանի մեծաւոր հայր Գէորգ Ծ.վ. Նորատունկեան, փոխ-տեսուչ՝ հայր Գրիգոր վրդ. Պատիշահ, մի քանի հաւատացեալներ, ինչպէս նաեւ հայ հաղորդամիջոցներու ներկայացու-

ցիչներ: Պատուիրակութեան անդամները ընդունելէ առաջ, Սրբազան Քահանայապետը եւ ամենապատիւ Հոգեւոր Տէրը ունեցան առանձնակի գրոց մը, որուն ընթացքին, ընդհանուր ակնարկով մը անդրադառնալէ ետք հայ կաթողիկէ Եկեղեցւոյ մասին, ամենապատիւ Հոգեւոր Տէրը Սրբազան Քահանայապետէն խնդրեց, որ Սուրբ Աթոռը հանդիսաւորապէս մասնակցի Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցի յիշատակումին,

Շաբ.ը էջ 4

ԼՈՒԻՋԻԱՆԱ ՆԱՅԱՆԳԻ ԾԵՂԱԿՈՅՏԸ ԾԱՆՉՑԱԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆԸ



Սփիւռքի նախարարը հանդիպում կ'ունենայ Վազգէն Գալթաֆեանի եւ ՄԻՀԿ Հայաստանի վարչութեան անդամներուն հետ

Հայ Ամերիկեան Խորհուրդի Լուզիանայի մասնաճիւղի տարած աշխատանքներուն շնորհիւ, Նահանգի Ծերակոյտը ճանչցաւ Լեւոնային Ղարաբաղի հանրապետութեան անկախութիւնը: Յունիս 30-ին Ծերակոյտը վաւերացուց թիւ 151 բանաձեւը, որ կու գայ պաշտօնապէս ճանչնալու Լեւոնային Ղարաբաղի հանրապետութիւնը, գորակցութիւն յայտնելով, որ ան զարգանայ որպէս ազատ եւ անկախ երկիր ու կարե-

լիութիւն ունենայ իր քաղաքացիներուն ապահովել այդ ազատութիւնները: Բանաձեւը միաժամանակ կոչ կ'ընէ Միացեալ Նահանգներու նախագահին եւ Գոնկրէսին, որպէսզի աջակցին Լեւոնային Ղարաբաղի ազատ ինքնորոշման իրաւունքին ու անոր անկախութեան եւ ան կարելիութիւնը ունենայ կառուցողական իր մասնակցութիւնը բե-

Շաբ.ը էջ 5

ԾՈՆ ՔԵՐՐԻ.- «ԲՈԼՈՐՍ ԿՈՒՋԵՆՔ ԼՈՒԾՈՒԱԾ ՏԵՍԵԼ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԸ»



Էդուարդ Նալբանդեան եւ Ճոն Քերրի Պետական Քարտուղարութեան կեդրոնէն ներս

Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Ճոն Քերրի Յունիս 3-ին եւ 4-ին Ուաշինկթընի մէջ յաջորդական հանդիպումներ ունեցաւ Ատրպէյճանի եւ Հայաստանի արտաքին գործոց նախարարներու՝ էլմար Մամետեարովի եւ Էդուարդ Նալբանդեանի հետ, քննարկելով Լեւոնային Ղարաբաղի հարցը: Յունիս 4-ին, ընդունելով էդուարդ Նալբանդեանին Ճոն Քերրի նախ ըսած է, որ Հայաստան կարելոր գործընկեր է Միացեալ Նահանգներուն՝ շարք մը հարցերու մէջ: Ապա, ան անդրադարձած է զարաբաղեան հարցին, ընդգծելով, որ այդ ինդիքի լուծման համար քայլեր պէտք է ձեռնարկեն ոչ միայն Հայաստանն ու Ատրպէյճանը, այլ նաեւ տարածաշրջանի

միւս երկրները: «Ակնյայտ է, որ ամենակարեւոր հարցը, որ մենք բոլորս կ'ուզենք լուծուած տեսնել, Ղարաբաղի սառեցուած հակամարտութիւնն է: Չափազանց կարեւոր է, որ բոլոր կողմերը փորձեն ճանապարհ գտնել փակուղիէն դուրս գալու համար, որ այս հակամարտութիւնը կը պահէ մշտապէս սրուած եւ հաւանական վտանգներով լեցուն վիճակի մէջ», - յայտարարած է Քերրի, յատուկ շեշտելով, որ բոլոր կողմերը ըսելով նկատի ունի ոչ միայն Ատրպէյճանին, այլ նաեւ Թուրքիային, Ռուսաստանին եւ Իրանին: Ճոն Քերրի նաեւ յայտնած է, որ զարաբաղեան հարցէն բացի մտադիր է փակ հանդիպումի

Շաբ.ը էջ 4

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ. «ԱՏՐՊԵՅՃԱՆՈՒՄ ԴՐՈՒԱԾ ԱԿԱՆԵՐԸ ՍՊԱՌՆՈՒՄ ԵՆ ՊԱՅԹԵԼ»

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան Յունիս 5-ին հրաւիրած է Ազգային Անվտանգութեան Խորհուրդի նիստ: Օրակարգի հարցերու շրջագիծէն ներս քննարկուած են Հայաստանի ուժանիւթի անվտանգութեան եւ տեղական ինքնակառավարման ամրապնդման հարցերը: Հայաստանի նախագահն անդրադարձած է նաեւ Ատրպէյճանին՝ մասնաւորապէս, այն հանգամանքին, որ ըստ Սարգսեանի, «այդ երկրի իշխանութիւնները փոխանակ զբաղուեն սեփական պրոբլեմներով, լծուել են Հայաստանի դարդին դարման լինելու գործին»: Սերժ Սարգսեան ըսած է, որ 3-4 տարիէն տարածաշրջանին մէջ պատկերը լիովին պիտի փոխուի եւ Հայաստանը պէտք է պատրաստ ըլլայ անոր: «Փորձագէտներն ատրպէյճանական անխուսափելի ֆիւսակոյին արդէն երկու-երեք տարուց են սպասում: Ծարժուելով դասական բռնապետութեան կանոններով, այդ երկրի իշխանութիւնները

զբաղուած են միայն սեփական ժողովրդին հայկական թշնամուկերպարի հրամցմամբ, զարչահոտ պատկերացումներ տարածելով մեր մասին: Մինչդեռ հենց Ատրպէյճանում դրուած հասարակական-քաղաքական եւ տնտեսական ականներն են սպառնում պայթել եւ պայթել շատ արագ ու կարծես՝ միաժամանակ: Միւս կողմից գալիս են անթաքոց բռնապետութեան կամ բռնապետական ռեժիմի հետեւանքները: Ընդդիմախօսների բանտարկելը, ազատ մամուլի գոյութեան մասին գրեթէ տեղեակ չլինելը, հարկադրանքը, անուելի կոռուպցիան կրկնակի ուժգնութեամբ են յիշեցուելու այս երկրում նաւթադուլարների նուազմանը գուզընթաց», - ըսած է Հայաստանի նախագահը, աւելցնելով, որ եթէ երկու տարի առաջ ատրպէյճանցի երիտասարդները կը վախնային ու կը լռէին, այսօր արդէն, թէեւ փոքր խումբերով, բայց արդէն կը քննարկեն, որ խօսք ըսելու ժամանակը շուտով պիտի գայ:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՄԱՐՏԱԿԱՆ ԽԱՉԻ «ԱՄՊԵՏՆ» ՈՒ ԶՈՐԱԴԻԶԻ ՄՍԱՂԱՅԸ

ՀԱՅԿ ԱՐԱՄԵԱՆ

Մայիսի 8-ին Սերժ Սարգսեանը ստորագրել էր հրամանագիր Սիւնիքի մարզպետ Սուրբիկ Խաչատրեանին Մարտական խաչ 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրելու մասին: Ըստ ամենայնի, նկատի են առնուել նրա ծառայութիւնները Ղարաբաղեան պատերազմում, որի ժամանակ Սուրբիկ Խաչատրեանը Գորիսի առանձնակի գումարտակի հրամանատարն էր: Սակայն, միևս կողմից, հարց է առաջանում, թէ այդ ինչ ծառայութիւններ են, որոնք գնահատուած են հրադադարից 19 տարի անց: Եւ անմիջապէս էլ կասկած է առաջանում, որ այդ «ծառայութիւններից» պէտք է անցնէին ըստ տարիների, որպէսզի ինչ որ քանի մոռացուէին:

Ղարաբաղեան պատերազմի մասին հայ ժողովուրդն այդպէս էլ չի իմանալու ճշմարտութիւնը: Որովհետեւ նրանք, ովքեր գիտեն ճշմարտութիւնը, այդ մասին երբեք հրապարակաւ չեն խօսում: Պատերազմի իրական հերոսները նոյնպէս չեն խօսում, նրանք համեստօրէն լռում են: Փոխարէնը, պատերազմի մասին ասուած ու խօսուած է այն, ինչը կապ չունի իրականութեան հետ, եւ կամ նենգափոխուած է այդ իրականութիւնը:

Ղարաբաղեան պատերազմի մասին հայ ժողովուրդն այդպէս էլ չի իմանալու ճշմարտութիւնը: Որովհետեւ նրանք, ովքեր գիտեն ճշմարտութիւնը, այդ մասին երբեք հրապարակաւ չեն խօսում: Պատերազմի իրական հերոսները նոյնպէս չեն խօսում, նրանք համեստօրէն լռում են: Փոխարէնը, պատերազմի մասին ասուած ու խօսուած է այն, ինչը կապ չունի իրականութեան հետ, եւ կամ նենգափոխուած է այդ իրականութիւնը:

Սուրբիկ Խաչատրեանին թերեւս պարգևատրել են պատերազմի վերջին շրջանում նրա գործունէութեան համար: Նա, ինչպէս նշուեց, մօտ 150 հոգանոց գումարտակի հրամանատարն էր, որը գործում էր Ղարաբաղի հարաւային ճակատում: Սովորաբար, գումարտակների հրամանատարները գտնուում էին առաջին գծում, եւ նրանցից էր կախուած մարտական գործողութիւնների ելքը: Հարաւային ճակատում կռուած հրամանատարները պատմում են, որ Սուրբիկ Խաչատրեանին առաջին գծում այդ ժամանակաշրջանում չեն տեսել: Փոխարէնը, ըստ հրամանատարների, նա «քաջագործութիւններ» էր կատարում թիկունքում: Օրինակ, այդ ժամանակ նա շրջում էր Նիսսան Պատրոլ մեքենայով, որը ձեռք էր բերել Սուլթանլուի գինու կոմբինատի թալանից ստացուած եկամտով: Դա խոշոր կոմբինատ էր, որտեղ սպիրտի աճուէլի պահուստներ կային: Սուրբիկ Խաչատրեանը, ըստ հրամանատարների, հիմնականում զբաղուած էր թալանով եւ այս գործը հասցրել էր կատարելութեան: Մասնաւորապէս, նրա հրամանով պայթեցուել էր Կապանը հարաւային ճակատի հետ կապող երկու կամուրջ, որոնք ռազմավարական նշանակութիւն ունէին ճակատի մատակարարման համար: Այս ճանապարհը թէ անվտանգ էր, թէ նաեւ բաւական կարճ, բացի

այդ՝ համեմատաբար որակեալ: Պայթեցնելու իմաստն այն էր, որպէսզի սիւնեցիներն իրենց աւարը չկարողանային այս ճանապարհով տեղափոխել եւ օգտուէին Խնձորեսկի ճանապարհից, որտեղ Սուրբիկ Խաչատրեանը «պոստ» ունէր եւ կարող էր վերահսկել անցուղարձը: Պատերազմի վերջին շրջանն ամենածանրն էր հայկական կողմի համար: 1994 թ. Յունուարից հարաւային ճակատում ստրպէյճանցիներն աննախադէպ գանգուածային յարձակում սկսեցին Հորադիզ կայարանի ուղղութեամբ: Հայկական բանակի հրամանատարութիւնը Սուրբիկ Խաչատրեանին էր վստահել 4 քիլոմետր երկարութեամբ հատուածը: Հրամանատարները պատմում են, որ Սուրբիկ Խաչատրեանն այդպէս էլ անձամբ չէր ելած հայերի համար վճռական այդ ճակատամարտում, իր գումարտակին թողնելով բախտի քմահաճոյքին: Նրան վստահուած հատուածի մի մասը մնաց բաց, որտեղից ստրպէյճանցիները կարողացան թափանցել հայերի թիկունքը մօտ 30 քմ տարածքով: Սկսուեց իսկական մտադաց, եղան հազարաւոր զոհեր, այդ թւում մեծ կորուստներ ունեցաւ Սուրբիկ Խաչատրեանի գումարտակը: Ձոհերի դիակները մարտի դաշտից հանեցին Հաղրութի գումարտակի մարտիկները եւ յանձնեցին նրանց

հարազատներին: Սուրբիկ Խաչատրեանը զարմանալի կենսունակ արարած է: Չնայեա՞ծ այս հանգամանքին, չնայեա՞ծ Հայաստանի ու Ղարաբաղի պաշտպանութեան նախարարների դժգոհութեանը, բանակի հրամանատարների դժգոհութիւններին, նա կարողացել է մնալ Չրի երեսին եւ խուսափել պատասխանատուութիւնից: Սուրբիկ Խաչատրեանի եւ նրա հարազատների, մասնաւորապէս եղբայրների՝ Աղալարի ու Հոպոպի անուններն այս տարիներին շօշափուած էին Սիւնիքում տեղի ունեցած մի քանի խոշոր յանցագործութիւնների կապակցութեամբ: Ըստ հայկական մամուլի հրապարակումների, խօսքը մէկ տասնեակից աւելի հաշուող քրէական գործերի մասին է, իսկ դրանց «ամպլիտուդը»՝ թմրամոլութիւնից, երիտասարդ աղջկան Գորիսի հանրախանութում բռնաբարութեան փորձից մինչեւ մի երիտասարդի սպանութիւն: Իսկ սպանութեան պարագան առաւել քան սահմակեցուցիչ էր՝ ըստ մամուլում հրապարակուած քրէական գործի նիւթերի, Լիսկայի եղբայրները սպանուածին դանակի

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ «ԴԵՄԱՐՇ»

ԿՈՐԻԻՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Երբ Սերժ Սարգսեանը չմասնակցեց Բիշքեկում կայացած ՀԱՊԿ զագաթնաժողովին, Բաղրամեան 26-ի տակ աշխատող լրատուամիջոցները, «անկախ» վերլուծաբանները եւ Դաւիթ Շահնազարեանները տարածեցին, թէ բա չէք ասի, խիստ արեւմտամէտ եւ առաջադէմ Սերժ Սարգսեանը «դեմարշ» է արել Վլադիմիր Պուտինի դէմ:

Իրենք իրենց ու հաւի ուղեղ ունեցողներին ուզում էին համոզել, որ ռուսական յատուկ ծառայութիւններից շնորհակալական մետալ ստացած, ՌԴ ռազմաբազաների ներկայութիւնը Հայաստանում 49 տարով երկարաձգած եւ վերջին երկու նախագահական ընտրութիւններից չետոյ Պուտինից անյարմարութեան ստիճանի հասնող շնորհակալութիւն չայտնած Սերժ Սարգսեանը խիստ վրդովուել է գազի գնի, Մաքսային միութեան եւ այլ «մոմենտներով» ու դեմարշ է անում:

Նկատենք, սակայն, որ արտաքին քաղաքական ասպարէզում դեմարշի ընդունակ է դիմել այն նախագահը, ով չունի ներքին լեգիտիմութեան սուր դեֆիցիտ: ՀՀ-ի ղեկավարն այդպիսին չէ, հետեւաբար՝ ծիծաղելի են այն գնահատականները, որոնք տրուած են ՀԱՊԿ զագաթնաժողովին մեկնել-չմեկնելու հետ կապուած:

Խնդիրն այն չէ, որ Պուտինը դեմարշի արժանի է կամ արժանի չէ: Խնդիրն այն է, որ Սերժի դեմարշը վիրտուալ տարածքում էր եւ հետապնդում էր լրիւ այլ նպատակ: Դա իւրաքանչիւր դեմարշ էր, քանզի դեմարշ անողը չէր խօսում, բայց իր փոխարէն դեմարշին ֆոն էին սպահովում գեբելսեան քարոզչամեքենան ու քաղաքական դաշտի յաճախորդները: Հիմա դրանք բոլորը հեր-

թական անգամ «քաշուեցին», եւ ահա թէ ինչու:

Այն, որ դեմարշի թէզը հերթական բլեֆն է, հայ ժողովուրդը համոզուեց երէկ:

Ինչպէս յայտնի է, օֆշորների մեծ սիրահար Տիգրան Սարգսեանը Մինսկում ՌԴ վարչապետի հետ հանդիպման ժամանակ յայտարարել է, որ Հայաստանն ու Ռուսաստանը պէտք է շտապ յուշագիր ստորագրեն Մաքսային միութեանը ինտեգրուելու շուրջ՝ այն համաձայնեցնելով նախագահների հետ:

«Չկայ ոչ մի կասկած այս հարցում, ու մեր նախագահները նոյնպէս խօսել են այս հարցի շուրջ: Հիմա տեխնիկական մակարդակում պէտք է որոշել, թէ ինչ տեմպերով, ինչ քայլերով է պէտք առաջ շարժուել», - նշել է Տիգրան Սարգսեանը, ով մէկ տարի առաջ ռուսական «Վեդոմոստի» թերթում հանդէս էր եկել մի հրապարակմամբ, որտեղ աշխարհաքաղաքական պատճառներով իմաստազուրկ էր համարել Հայաստանի ընդգրկուելը Մաքսային միութեան մէջ:

Տեղին է յիշեցնելը, որ վերջերս տեղի ունեցած ինքնասուլիսի ժամանակ Սերժ Սարգսեանը Մաքսային միութեան թեմայով յայտարարել էր, թէ նման բան չկայ եւ մեզ այնտեղ չեն սպասում: Հիմա պարզուած է, որ ՀՀ եւ ՌԴ նախագահների միջեւ այդ թեմայի շուրջը քննարկում եւ լիակատար փոխըմբռնում է եղել:

Ահա այսպիսի զարգացումներ տեղի ունեցան Սերժ Սարգսեանի «դեմարշից» յետոյ: Եւս մէկ-երկու այսպիսի «դեմարշ», ու Սերժ եւ Տիգրան Սարգսեանները կը խօսեն ՀՀ-ի՝ ՌԴ կազմի մէջ մտնելու մասին: Սրանցից ամէն ինչ սպասելի է: «7 ՕՐ»

տասնեակ հարուածներ էին հասցրել, այդ թւում՝ դանակը մտցրել էին հետանցքը եւ վերեւ քաշել: Մարզպետն ինքը բազմաթիւ անգամ յայտնուել է ուշադրութեան կենտրոնում, սկսած ընտրութիւններից, վերջացրած բռնութիւններով:

Իհարկէ, որեւէ պատիժ այս ամէնի համար չի եղել, եւ աւելին՝ եղել է պարզեւտրում: Մարտական խաչի շքանշանը ազգային հերոսին հաւասարուող շքանշան է: Շքանշանը ստանալուց յետոյ Սիւնիքի մարզպետի շուրջ տեղի ունեցաւ հերթական յանցագործութիւնը՝ սպանուեց Գորիսի նախկին քաղաքապետը, նրա եղբայրը՝ գործառնախ հրամանատարը, ծանր վրիճակում գտնուած է հիւանդանոցում: Այս անգամ էլ Սուրբիկ Խաչատրեանը կ'ազատուի պատժից. դատելով սպանութեանը հետեւած առաջին օրերի տեղեկատուութիւնից, նրան հետեւողականօրէն մաքրում են՝ իբր տեղում չի եղել, քնած է եղել: Ձերբակալուել են նրա որդին ու թիկնապահը, սպանութիւնը կատարելու կասկածանքով. որդուն թերեւս ազատ կ'արձակեն, թիկնապահը կը նստի մի երկու տարի, եւ վերջ:

«ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶՆՆԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱԿՍԱՅԱՅԵԼԻ ԱՂԲԻՐԸ ԶԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՍԻՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՐԴԻՆ ԵՒ ԹԻԿՆԱՊԱՅՐԸ ԿԱԼԱՆԱԴՈՐՈՒԹԵԼ ԵՆ

Լիազորութիւնները ժամանակաւորապէս դադարեցրած Սիւնիքի մարզպետի որդին եւ թիկնապահը կալանաւորուած են:

Պաշտպանութեան նախարարութեան քննչական ծառայութիւնը նրանց մեղադրանքներ է առաջադրել Քրէական օրէնսգրքի երեք յօդուածներով՝ յատկանիշներով: Տիրաւոր իրաւունքները եւ Զարգանդ Նիկողոսեանը մեղադրուած են շատերի կեանքի համար վտանգաւոր եղանակով կատարած սպանութեան, դիտաւորութեամբ առողջութեանը ծանր վնաս պատճառելու եւ ապօրինի գէնք-գինամթերք կրելու մէջ: Փաստօրէն, ըստ քննչական մարմնի, Յունիսի 1-ին մարզպետի որդին եւ թիկնապահը Բուդաղեան եղբայրների վրայ տանը պահուող ապօրինի գէնքից են կրակ բացել:

Սիւնիքի մարզի ընդհանուր իրաւասութեան դատարանը մերժել է իրաւունքները եւ Նիկողոսեանի նկատմամբ նշանակուած երկամսեայ կալանքը գրաւով փոխարինելու միջնորդութիւնները:

Մարզպետ Սուրիկ իրաւասութեանի տան մօտ տեղի ունեցած դէպքի հետեւանքով, անցած շաբաթ օր գոհուել էր Գորիսի քաղա-

քապետի նախկին թեկնածու Աւետիք Բուդաղեանը: Վերաւորուել էին նրա եղբայրը՝ Արտակ Բուդաղեանը եւ Նիկոլայ Աբրահամեանը, ով մարզպետի ազգականն ու թիկնապահն է: Կրճ քաղաքացիները եւ վնասուած քննարկումները Արտակ Բուդաղեանը նախ Գորիսի հիւանդանոց էր տեղափոխուել, ապա Երեւան՝ Զինուորական հոսպիտալ: Գորիսի գործադիր հրամանատարին հնարաւոր է մէկ անգամ էլ վերահաստէն:

Գորիսի քաղաքապետի նախկին թեկնածու Աւետիք Բուդաղեանի հարազատները «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում համոզմունք յայտնեցին, որ տեղի ունեցածի համար մեղաւոր է Սիւնիքի մարզպետը: Նրանք նշում էին, որ սպանուած Աւետիք Բուդաղեանը Գորիսում միակ մարդն էր, ով 2010 թուականին համարձակուել էր թեկնածութիւնն առաջադրել մարզպետի հովանաւորութիւնը վաճելով գործող քաղաքապետի՝ Հանրապետական կուսակցութեան ներկայացուցիչ Նելսոն Ոսկանեանի դէմ: Գորիսի քաղաքապետի յաջորդ ընտրութիւնները նախատեսուած են եկող տարի:

«ՉԱՄԱԿԱՐԳԸ ՈՉ ՄԻԱՅՆ ՉԻ ՈՒՋՈՒՄ, ԱՅԼԵՒ ՉԻ ԿԱՐՈՂ ՓՈՒԽԵԼ ԻՐ ԲՆՈՅԹՆ ՈՒ ԷՈՒԹԻՒՆԸ»

Ազգային նպատակների եւ ինդիւստրիայի առաջադրման եւ իրականացմանն ունակ կառավարման համակարգ ունեցող պետութեան հիմնադրման քաղաքական գործընթացի նախաձեռնող խումբը՝ Նախախորհրդարանը տարածել է յայտարարութիւն, որում անդրադարձել է Գորիս քաղաքում տեղի ունեցած միջադէպին:

Յայտարարութեան մէջ Մասնաւորաբար ասուած է.

«2013 թ. Յունիսի 1-ի երեկոյեան Գորիս քաղաքում տեղի ունեցած յայտնի միջադէպի գոհեւրից մէկը Հայրենիքի պաշտպանութեան գործին իր կեանքով նուիրուած հերթական հայրերին է՝ զօրամասի հրամանատար, գնդապետ Արտակ Բուդաղեանը:

Դեռ չի լրացել քրէական բարքերի վրայ հիմնուած համակարգին գոհ գնացած գինուորական բժիշկ, բուժօճառայութեան մայր, երկու մանկահասակ երեխաների հայր Վահէ Աւետեանի՝ առանձնակի դաժանութեամբ կատարուած սպանութեան դէպքի մէկ տարին: Այդ գործի հանգամանքները նախաքննութեան մարմնի եւ դատախազութեան գործակցութեամբ կոծկուեցին, մեղաւորների մի զգալի մասը չեն կանչուած քրէական պատասխանատուութեան:

ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ ԺԻՐԱՅՐ ՍԵՖԻԼԵԱՆԻ ԴԵՍ

Ժիրայր Սէֆիլեանին սպանուողները նպատակ են դրել ոչնչացնելու ազգային մտածողութիւնն ունեցող եւ հայրենիքին նուիրուած հայրերին: Այս մասին յայտարարութիւն է տարածել «Շուշիի առանձնակի գումարտակ» ազատամարտիկների միաւորումը:

«Ազգութեան եւ հայրենադաւուածքը սպանութեան սպառնալիք են ուղղել Շուշիի առանձնակի գումարտակի նախկին հրամանատար, մեր մարտական ընկեր, «Շուշիի առանձնակի գումարտա-

կի ազատամարտիկների միաւորում» հասարակական կազմակերպութեան նախագահ Ժիրայր Սէֆիլեանին, ինչպէս նաեւ հետապնդում եւ հալածում են նրա քաղաքական համախոհներին:

«Մեր հայրենիքում սովորական երեւոյթ է դառնում մարդկանց ահաբեկումը նրանց հայրենանուէր գործունէութեան համար: Նման օրինակ է սոյն թուականի Ապրիլի 2-ին Հայրենիքի եւ իր գիւղի հոգեւոր ապրող Պոռչեանի գիւղապետ Հրաչ Մուրադ-

ԱՐՏԱԿ ԶԱՔԱՐԵԱՆ. «ՉԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՉԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆՆ ԱՅԼԵՆՏՐԱՆՔ ՉԿԱՅ»

Հայ-ռուսական համագործակցութիւնն այլընտրանք չունի, արձագանքելով Մաքսային միութեանն ինտեգրուելու մասին Միւսկոմ Հայաստանի վարչապետի արտայայտած պատրաստակամութեանը, «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում նման կարծիք յայտնեց Ազգային ժողովի արտաքին յարաբերութիւնների մշտական յանձնաժողովի նախագահ, հանրապետական Արտակ Զաքարեանը:

«Մեր ռազմավարական գործընկերներն են, եւ հայ-ռուսական համագործակցութիւնը երբեք չի կարելի համեմատութեան մէջ դնել այլ հարթութեան համագործակցութեան հետ», - ասաց Զաքարեանը:

Հայաստանը այժմ Եւրամիութեան հետ բանակցում է Ասոցիացիան համաձայնագրի ու խորը եւ համապարփակ ազատ առեւտրի պայմանագրի շուրջ: Անցած տարեկանը Եւրամիութեան արտաքին յարաբերութիւնների գլխաւոր յանձնակատարի խօսնակ Մաքսայ Կոչիեանիչը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում յայտարարել էր՝ եթէ Հայաստանը որոշի միանալ որեւէ մաքսային միութեան, ապա դա անհամատե-

ղելի կը լինի Եւրամիութեան եւ Հայաստանի միջեւ կնքուելիք երկկողմանի խորը եւ համապարփակ ազատ առեւտրի պայմանագրի հետ:

Եւրամիութեան հետ իրականացուող որեւէ ծրագիր չի դադարեցուի, անգամ չի դանդաղի, համոզուած է Աժ արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովի նախագահը: Զաքարեանն ասում է՝ Եւրամիութիւնը վերջին շրջանում հարցը կտրուկ չի դնում՝ կամ Եւրամիութեանը, կամ Ռուսաստանի հետ մաքսային միութիւն, քանի որ հասկանում է՝ չի կարող կորցնել Հայաստանը եւ հարցականի տակ դնել Արեւելեան գործընկերութեան ծրագիրը:

Աժ արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովի նախագահը, յղում կատարելով եւրոպացի պաշտօնեաներին, ասաց՝ Եւրամիութեան եւ Մաքսային միութեան հետ համագործակցութիւնները չեն հակասում միմեանի:

Եթէ նախկինում Հայաստանի իշխանութիւնները հերքում էին Մաքսային միութեանը անդամակցելու հնարաւորութիւնը, այժմ այդպիսի հաստատակամութիւն չկայ:

ԽԱՆՏՈՒՄՆԵՐ Է ԱՐՁԱՆԱԳՐԵԼ ԻՒՍԻՍ-ՉԱՐԱԿ ԱՒՏՈՍԱՅՐՈՒՂՈՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՈՒՄ

Վերահսկիչ պալատի նախագահ Իշխան Զաքարեանն լրագրողների հետ հանդիպմանը «խայտառակութիւն» որակեց Հիւսիս-Հարաւ ճանապարհային միջանցքի շինարարութեան ընթացքում իրականացուող վերահսկողութիւնը:

«Անգն աչքով տեսնում ենք բացարձակապէս անորակ աշխատանք», - յայտարարեց Իշխան Զաքարեանը՝ որպէս ապացոյց ներկայացնելով մի շարք լուսանկարներ:

Հայաստանի եւ Վրաստանի սահմանային կէտից աւելի քան 500 կմ բարձրակարգ, բետոնիա ծածկոյթով աւտոմոբիլային ճանապարհի շինարարութեան աւարտը նախատեսուած է 2017 թուականին: Ծրագրի ընդհանուր արժէքը 962 միլիոն դոլար է:

Շինարարական աշխատանքները վերահսկող ծրագրի կառավարման խորհրդատուն է «Սաֆէշ» ֆրանսիական ընկերութիւնը՝ իսպանական «էպիտիսա» ընկերութեան հետ համատեղ: Ծրագրի կառավարման խորհրդատուի պարտաւորութիւնն է նաեւ ֆինանսական կառավարման եւ գնումների գործընթացի գնահատումը:

Վերահսկիչ պալատի նախագահը հրապարակեց լուսանկարներ, որոնք ապացուցում էին, որ «տեխնիկական վերահսկողութիւն իրականացնող ընկերութիւնը բացարձակապէս չի կատարել համաձայնագրով իրեն վերապահուած լիազորութիւնները», ինչի կապակցութեամբ կազմուել 3 արձանագրութիւն, որոնք ներկայացուել են ֆրանս-իսպանական համատեղ կազմակերպութեանը. - «Մենք 13 կէտով խախտումներ ենք տուել»:

Եւրոպական պալատի վերադարձը: Հրաչ Մուրադեանը նաեւ Շուշիի առանձնակի գումարտակի հիմնադիրներից էր: Նրա սպանութեան մեղաւորները մինչ օրս չեն բացայայտուել եւ անպատիժ են



Վերահսկիչ պալատի նախագահ Իշխան Զաքարեան

Այս տարուայ Ապրիլին, «Հիւսիս-Հարաւ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման պետական ոչ առեւտրային կազմակերպութեան» գործադիր տնօրէն Արա Յովսէփեանն ազատուել է աշխատանքից:

Իշխան Զաքարեանն ասաց, որ խախտումները բացայայտուելու պէս գեկուցել է Սերժ Սարգսեանին. - «Արդիւնքում ծրագրերի իրականացման տնօրէնը ազատուել է աշխատանքից»:

«Զգիտեմ ինչի մասին է խօսքը», - նշուած խախտումների վերաբերեալ «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին պատասխանեց Արա Յովսէփեանը՝ շարունակելով. - «Մի ամիս առաջ արձանագրութիւն եղել է, դրան պատասխան ուղարկուել է: Այդ աշխատանքները ո՛չ ընդունուել էին, ո՛չ էլ վճարուել էին: Այսինքն՝ որեւէ չարաշահում մի ամիս առաջ չի եղել: Բացառուում են դրանք»:

Յովսէփեանը հրապարակել մեկնաբանել իրեն աշխատանքից ազատելու մասին որոշումը:

մնացել: Իսկ անպատիժ լիութեան այդ միջոցով յարուցում է հանրութեան զայրոյթը եւ կարող է հանգեցնել անկանխատեսելի հետեւանքների», ասուել է յայտարարութեան մէջ:

ԼՈՒՐԵՐ

«ՐԱՅԱՍՏԱՆԸ, ԱԴՐԲԵՋԱՆԸ ԵՒ ԿՐԱՍՏԱՆԸ ԿՈՐՑՆՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՊԱՐԷՉՈՒՄ»

Հարավկովկասեան տարածաշրջանի վերաբերեալ ուշագրաւ յօդուած է հրատարակել ամերիկեան հեղինակաւոր The American Interest պարբերականը: Յօդուածագիրներ Դենիս Կորբոյը, Վիլյամ Քորթնին, Ռիչարդ Կոլլարիչը եւ Քենեթ Շալովիցը, վերլուծելով Անդրկովկասում կատարուող զարգացումները, կարծիք են յայտնում, որ տարածաշրջանի նշանակութիւնը միջազգային ասպարէզում գնալով նուազում է, ինչի պատճառը գոյութիւն ունեցող հակամարտութիւնները (ղարաբաղեան, աբխազական եւ հարաւօսական) եւ կառավարման կոռումպացուած համակարգերն են: Իրավիճակը շտկելու ուղին, ըստ վերլուծաբանների, ժողովրդավարական բարեփոխումների ուղով ընթանալն ու հակամարտութիւնները լուծելու ուղղութեամբ քայլեր ձեռնարկելն է...

Հրապարակման բովանդակութիւնը թարգմանաբար ներկայացնում ենք ամբողջութեամբ.

«Էթնիկ հակամարտութիւնների եւ պետական կառավարման արատաւոր համակարգերի պատճառով թուլացած հարավկովկասեան երկրները (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան) կորցնում են իրենց նշանակութիւնը միջազգային ասպարէզում: Իսկ արեւմտեան երկրները, մտահոգ լինելով իրենց տնտեսական խնդիրներով եւ Մերձավոր եւ Հեռավոր Արեւելքում առկայ ճգնաժամերով, մոռանում են այս տարածաշրջանի մասին: Արեւմուտքի աշակցութիւնը ստանալու համար (որի կարիքը երեք երկրներն էլ զգում են) հարավկովկասեան երկրները պէտք է բարեփոխումներ իրականացնեն եւ նուազեցնեն տարածաշրջանում առկայ լարուածութիւնը:

20 տարի առաջ Լեռնային Ղարաբաղի (գտնուում էր Ադրբեջանի կազմում: Բնակչութեան մեծ մասը հայեր էին) համար Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ տեղի ունեցած պատերազմի հետեւանքով հարիւր հազարաւոր մարդիկ փախստական դարձան: Չնայած 1994թ-ին կնքուած զինադադարի մասին համաձայնագրին՝ այստեղ ժամանակ առ ժամանակ փոխհրաձգութիւն է տեղի ունենում: Միջազգային միջնորդական ջանքերի ձախողումներին գուգահեռ՝ էներգալիքներով հարուստ Ադրբեջանն օտար երկրներին գնում է սպառազինութիւնների հաշուին ընդլայնում է իր ռազմական ներուժը՝ երբեմն էլ գերազանհատելով իր հնարաւորութիւնները: Հայաստանն էլ կարող է «պարծենալ» Ռուսաստանի հետ կնքած՝ անվտանգութիւնն ապահովելու մասին համաձայնագրով եւ իր տարածքում ռուսական ռազմաբազայի առկայութեամբ: Հայաստանն էլ, ըստ էութեան, մեկուսացուած վիճակում է, եւ այն եւս շատ առումներով գերազանհատում է իր հնարաւորութիւնները: Իսկ 2008 թ-ին ռուսական զօրքերի կողմից Աբխազիայի, Հարաւային Օսիայի եւ յարակից մի շարք շրջանների (Վրաստանում) բռնազաւթումն աւարտուեց փոքր խաղաղութեան մասին համաձայնութեամբ (նկատի ունի 2008 թ. վրաց-ռուսական պատերազմը, որի հետեւանքով Վրաստանն ամբողջո-

վին կորցրեց վերահսկողութիւնն ինչպէս Հարաւային Օսիայի, այնպէս էլ Աբխազիայի նկատմամբ (Tert.am) Ռուսաստանը ճանաչեց Հարաւային Օսիայի եւ Աբխազիայի անկախութիւնը): Վերոնշեալից բացի տարածաշրջանային անվտանգութեանը սպառնում են Ադրբեջանում կոռումպացուած իշխանութեան գոյութիւնը եւ անկարգութիւնները, ինչպէս նաեւ Հայաստանում եւ Վրաստանում պետական մարմինների անկայունութիւնը:

Այդուհանդերձ, տարածաշրջանը դրական կողմեր էլ ունի: Հարաւային Կովկասը կարեւոր երթուղի է՝ մերձկասպեան տարածաշրջանից նաւթն ու գազը համաշխարհային շուկայ հասցնելու համար: Այն ցամաքային տրանսպորտային հանգույց է, որ կապ է հաստատում Եւրոպայի, միջերկրածովեան երկրների, Կենտրոնական Ասիայի եւ Չինաստանի հետ: Ադրբեջանն էներգալիքների խոշոր արտադրող եւ արտահանող է, իսկ Կասպից ծովի աւազանի ռեսուրսները կարեւոր են Եւրոպայի էներգետիկ կախուածութիւնը Ռուսաստանից նուազեցնելու համար:

Այդուհանդերձ, հաշուի առնելով որոշ միտումներ ժամանակի ընթացքում Հարաւային Կովկասի տարածաշրջանային նշանակութիւնը նուազում է: Համաշխարհային առեւտրում Ադրբեջանի մասնաբաժինը նուազում է, քանի որ աշխարհի այլ տարածաշրջաններում ակտիւօրէն զարգանում են նոր յեղափոխական տեխնոլոգիաները, որոնք ուղղուած են հումքի արդիւնահանման ծաւալների մեծացմանը: Չնայած Մետաքսի ճանապարհի դերն Աֆղանստանում ՆԱՏՕ-ի ուժերին աշակցելու հարցում կարեւոր է, այդուհանդերձ երբ գորքերն Աֆղանստանից դուրս բերուեն, ապա տարածաշրջանի հանդէպ հետաքրքրութիւնը կը նուազի:

Փետրուարին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը վերընտրուեց այդ պաշտօնում: Երկրում, սակայն, սկսուեցին բողոքի ակցիաներ, քաղաքական վիճակն անկայունացաւ, կոռուպցիան ծաղկեց: Ադրբեջանի եւ Թուրքիայի կողմից շրջափակուած լինելու պայմաններում Հայաստանը բարելաւում է յարաբերութիւններն իրանի հետ: Երկրի կրթուած բնակչութիւնը, սակայն, չի ստանում իր ներուժին եւ որակաւորմանը համարժէք աշխատավարձ: Համաշխարհային բանկի տուեալներով՝ մէկ շնչին բաժին ընկնող միջին եկամուտը, ըստ գնողունակութեան համարժէքութեան, ընդամէնը 6 100 ամերիկեան դոլար է:

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի ավտորիտար վարչակարգի պատճառով դժգոյութիւններն այդ երկրում գնալով աճում են: Մարտի 10-ին իշխանութիւնները Չրցան մեքենաների եւ ռետինէ գնդակների միջոցով ցրեցին Բաքուում անցկացուող շարժումուած ակցիան: Նաւթի եւ գազի արտահանումից ստացուող եկամուտների հաշուին երկրում միջին եկամուտը կազմում է 8 960 ամերիկեան դոլար: Սակայն հումքի արդիւնահանման ծաւալներն այս երկրում աւելանում են, արտահանմանը՝ նուազում: Այս տարեվերջին

ՐԱՅ ԽԱՂԱՂԱՊԱՅՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԼԻԲԱՆԱՆ ՄԵԿՆԵԼ ԱՅՍ ՏԱՐՈՒԱՅ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հայաստանի պաշտպանութեան նախարարի մամուլի խօսնակ Արծրուն Յովհաննիսեանն հաստատեց այն տեղեկութիւնները, որ ՄԱԿ-ը դիմել է Հայաստանին՝ Լիբանանում, Սիրիայի սահմանին կից հայ խաղաղապահներ տեղակայելու համար:

«Լիբանանում ՄԱԿ-ի հովանու ներքոյ իրականացուող խաղաղապահ առաքելութիւն հրամանատար երկիր հանդիսացող Իտալիան պաշտօնապէս ՄԱԿ-ի միջոցով դիմել է Հայաստանին առաքելութեան կազմում հայկական զօրախումբ ընդգրկելու առաջարկութեամբ: Զօրախումբը իրականացնելու է խաղաղապահ առաքելութեանը բնորոշ սովորական գործառնություններ: Հայկական զօրախումբը ընդգրկելու վերաբերեալ ընթացում են բանակցութիւններ ՄԱԿ-ի եւ Իտալիայի պաշտպանութեան նախարարութեան հետ՝ կառուցուածքի, տեղակայման վայրի, ապահովման, քանակի եւ միւս հարցերի շուրջ», - «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց խօսնակը՝ յաւելելով, որ բանակցութիւնների

նպատակով յաջորդ շաբաթ Հռոմ է մեկնելու Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան մասնագիտական աշխատանքային խումբը, ինչին կը յաջորդի Հայաստանի գինուած ուժերի գլխաւոր շտաբի պետի այցը Իտալիա՝ աւելի մանրամասն պայմանաւորուածութեան համար:

«Նախատեսուում է, որ արդէն այս տարուայ ընթացքում Լիբանան կը գործողութի հայկական երկու խաղաղապահ դասակ՝ մինչեւ 50-60 հոգի», - յաւելեց Յովհաննիսեանը:

Ըստ պաշտպանութեան նախարարութեան մամուլի խօսնակի, ՄԱԿ-ը Իտալիայի միջոցով նման առաջարկ է արել Հայաստանին՝ հաշուի առնելով հայ խաղաղապահների բարձր հեղինակութիւնն ու նրանց իրականացրած խաղաղապահ առաքելութեան բարձր մակարդակը:

Հայ խաղաղապահները, խաղաղապահ առաքելութիւն են իրականացնում Կոսովոյում եւ Աֆղանստանում:

ԿՈՒՋԵՆՔ ԼՈՒԾՈՒԱԾ ՏԵՍԵԼ ՂԱՐԱԲԱՂԻ ՅՈՐՑԸ

Շաբուճակուած էջ 1-էն

ընթացքին Հայաստանի արտաքին գործոց նախարարին հետ քննարկել նաեւ հայ-ամերիկեան տնտեսական համագործակցութիւնը, Հայաստանի մէջ ժողովրդավարութեան ամրապնդումը ու տնտեսութեան զարգացումը, ինչպէս նաեւ «Ամերիկայի բարեկամ հայ ժողովուրդի ապահովութիւնը»:

Իր պատասխան խօսքին մէջ էր նախարարը Նալբանդեան ըսած է, որ հայ-ամերիկեան յարաբերութիւնները այժմ կը գտնուին պատմութեան մէջ ամենաբարձր մակարդակի վրայ: Երկու երկրներն ալ, ըստ Հայ նախարարի, կը կիսեն միեւնոյն տեսակէտը՝ Ղարաբաղի հարցով, առ այն, որ ինդիքը պէտք է լուծուի բացառապէս խաղաղ ճանապարհով, միջազգային իրաւունքի սկզբունքի՝ ուժ չգործադրելու, ազգերու ինքնորոշման եւ տարածքային ամբողջականութեան հիման վրայ:

«Հայաստանն ու Միացեալ Նահանգները միեւնոյն դիրքորոշումն ունեն նաեւ հա-թուրքական յարաբերութիւններն առանց նախապայմանների կարգաւորելու հարցում, ինչպէս նաեւ կիսում են

ժողովրդավարութեան, հիմնարար իրաւունքների, ազատութեան, շուկայական տնտեսութեան միեւնոյն արժէքները», - յայտարարած է Նալբանդեան:

Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարը նաեւ յատուկ երախտագիտութիւն յայտնած է նախագահ Պարաք Օպամայի վարչակազմին՝ հայ-ամերիկեան յարաբերութիւններու սերտացման գծով ունեցած մեծ ներդրումին համար:

Հանդիպումի ընթացքին ձոն Քերրի ըսած է, որ իր համար յատկապէս հաճելի է ողջունել Հայաստանի արտաքին գործոց նախարարին, քանի որ ինք բազմաթիւ ընկերներ ունի հայ համայնքին ներս եւ տարիներ շարունակ աշխատած է անոնց հետ՝ շարք մը հարցերով:

«Կը կարծեմ որ, բոլորը գիտեն, որ Մասաչուսեթսը Հայաստանէն դուրս ապրող ամենամեծ հայկական համայնքներէն մէկունն ստան է, որուն համար մենք շատ երջանիկ ենք», - ըսած է ԱՄՆ-ի պետական քարտուղար եւ Մասաչուսեթսի նախկին ծերակուտական Չոն Քերրի:

ՀՈՍԻ ՊԱՊԸ ՎԵՐԱՐԱՍՏԱՏԵՑ

Շաբուճակուած էջ 1-էն

եւ այս առիթով քահանայապետական յորդոր մը ուղղէ համայնքը իստոնեաներուն, ներկայացնելու համար 1915-ի Մեծ Եղեռնի նահատակներուն վկայութիւնը: Հոգեւոր Տէրը ինդրեց նաեւ որ վատիկանի պետութիւնն ալ մասնակցի այս հարիւրամեակի յիշատակութեան՝ դրոշմաթուղթերու հրատարակութեամբ:

Այս մտերմիկ հանդիպումէն ետք, Հոգեւոր Տիրոջ ընկերացող պատուիրակութիւնը ներկայացաւ Սրբազան Քահանայապետին եւ

աջահամբոյրէն ետք, հայ կաթողիկէ հաւատացեալներուն անունով Անոր նուիրեց պրոնգեալ «Ուշեւելութիւն» մը, որուն հեղինակն է լիբանանահայ արուեստագէտ՝ Բաֆֆի Թոգաթլեան: Ըստ «Բատիօ Վատիկան»-ի, այս առթիւ արտասանած խօսքին մէջ, Սրբազան Քահանայապետը նշեց թէ Հայոց Յեղասպանութիւնը «20րդ դարու առաջին ցեղասպանութիւնն է», եւ յորդորեց ներկաները աշխատելու միշտ Եկեղեցւոյ եւ ազգին միութեան ի նպաստ, ապրելով համերաշխութեամբ եւ ընդդիմանալով սատանային փորձութիւններուն:



ԹԵ ԻՆՉՊԵՍ ՍԱԿԱԲԱԹԻ ԶԱՅ ԶԱՍԱՅՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԼՈՒԻՉԻԱՆԱՅԻ ՍԵՆԱՏՈՒՄ ԱՐՑԱԽԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ ԳԱՆԱՉՈՂ ԲԱՆԱՉԵԻՆ ԸՆԴՈՒՆՈՒԵՑ

ՄԴ-ՀԿ ԿՎ անդամ, ԱՄՆ Լուիզյան նահանգի Հայ ամերիկեան խորհրդի ատենապետ Վազգէն Գալթիանը, ում ջանքերով Արցախի անկախութիւնը ճանաչող բանաձեւը մուտք գործեց Լուիզյանայի նահանգային Սենատ, այս օրերին Երեւանում է:

HayNews.am-ի հետ զրոյցում Գալթիանը պատմեց, թէ ինչպէս է բանաձեւը յայտնուել նահանգային Սենատում. «Ապրիլի սկզբին զանգ ստացայ ԱՄՆ-ում Արցախի ներկայացուցիչ Ռոբերտ Աւետիսեանից, եւ բաւական երկար խօսակցութիւն ունեցանք Ապրիլի 24-ի վերաբերեալ: Նա խնդրեց օգնել, որպէսզի Արցախի վերաբերեալ մի բանաձեւ ներկայացնենք Լուիզյանայի նահանգի սենատում: Բանաձեւի վրայ միասին աշխատեցինք, բնականաբար ժամանակի ընթացքում այն որոշ փոփոխութիւններ կատարուեց»:

Գալթիանը յայտնեց. «Այս բանաձեւը Սենատի խորհրդին ներկայացուցեց Մայիսի 29-ին, իսկ արդէն Մայիսի 30-ին այն դրուեց քուէարկութեան: Բանաձեւը ներկայացրեց սենատոր Էդ Միլերը: Նկատենք, որ իրեն անձամբ թուրքիայի հիւպատոսի կողմից զանգեր են եղել. սենատորից պահանջել է, որպէսզի նա չներկայացնի բանաձեւը. ընդհանուր առմամբ, նման ճնշումներ եղել են նաեւ թուրքիայի այլ ներկայացուցիչների կող-

մից՝ կրկին հեռախօսազանգերի տեսքով: Չնայած դրան՝ քուէարկութիւնն անցած ու բանաձեւը յաջողութեամբ ընդունուեց»:

Հարցին՝ ովքե՞ր են աջակցել ձեզ այդ այս հարցում, Գալթիանը պատասխանեց. «Ինձ աջակցել են օտարերկրացի բազմաթիւ քաղաքական գործիչներ: Նկատենք, որ սա մեծ յաջողութիւն էր այն առումով, որ Լուիզյանայի Հայ համայնքը բաւական փոքրաթիւ է այլ նահանգների համեմատ: Լուիզյանայի մայրաքաղաք Պատիս Ռոսթոմ, որտեղ եւ գործում է Սենատը, այժմ ապրում է 28 Հայ ընտանիք միայն ընդհանուր 3,3 միլիոն բնակչութեան մէջ: Իսկ ողջ Լուիզյանայի նահանգում մօտ 100 Հայ ընտանիք կայ»:

Հայ Ամերիկեան խորհրդի ներկայացուցիչը յաւելեց, որ այժմ աշխարհի 4 կողմից շնորհաւորում են մեր այս յաղթանակը. «Այս յաղթանակն, ի դէպ, անպատեղի էր շատերի համար: Արցախի ներկայացուցիչն անձամբ շնորհակալական նամակ պէտք է ուղղի Էդ Միլերին, ով իշխող Դեմոկրատական կուսակցութեան անդամ է»:

Վերջում Գալթիանը նկատեց, որ մօտ 1,5 ամիս տեւած իրենց աշխատանքների սկզբում ինքը զգացել է, որ աշխատանքները ճիշտ հիմքի վրայ է դրուած. «Այդ ընթացքում համոզուած էի, որ յաջողութիւն ունենալու ենք»:

ԼՈՒԻՉԻԱՆԱ ՆԱՅԱՆԳԻ ԾԵՐԱԿՈՅՏԸ

Շարունակուած էջ 1-էն

րել՝ միջազգային հանրութեան կողմէ տարուող այն աշխատանքներուն, որոնք կը ձգտին արդար եւ մնայուն խաղաղութիւն ապահովել այդ կարեւոր տարածաշրջանին ներս:

Այսպիսով, Մասաչուսեթսէն, Ռոտ Այլընտէն եւ Մէյնէն ետք, Լուիզիանան կը դառնայ ամերիկեան չորրորդ նահանգը, որ պաշտօնապէս կը ճանչնայ Լեռնային Ղարաբաղի հանրապետութեան անկախութիւնը:

ՄԴ-ՀԿ Կեդրոնական վարչութեան անդամ եւ ՀԱՍԻ-ի Լուիզիանայի մասնաճիւղի ատենապետ ընկ. Վազգէն Գալթիանը այս օրերուն

գտնուելով Հայաստան իր գոհունակութիւնը յայտնեց օրէնսդիր մարմինի որոշումին առթիւ: Ան Յունիս 4-ին հանդիպում ունենալով ՀՀ Սփիւռքի նախարար Հրանտ Յակոբեանի հետ մանրամասնութիւններ փոխանցեց Լուիզիանայի հայութեան, ինչպէս նաեւ այդ որոշումի մասին:

Իր ողջոյնի խօսքին մէջ նախարար Յակոբեան շնորհակալութիւն յայտնեց Վազգէն Գալթիանին եւ Լուիզիանայի մէջ ապրող այն 100 Հայ ընտանիքներուն, որոնք թէեւ փոքր համայնք կը կազմեն, սակայն գործնական մասնակցութիւն կը բերեն նահանգի հասարակական-քաղաքական կեանքին:

ԶԱՅԱՍՏԱՆ, ԱՂԲԵՋԱՆ ԵՒ ՎՐԱՍՏԱՆ

Շարունակուած էջ 4-էն

նախատեսուած նախագահական ընտրութիւնները կ'անցկացուեն իշխող վարչակարգի վերահսկողութեան ներքոյ եւ, ամենայն հաւանականութեամբ, կ'արձանագրուի Ալիեւի «հերթական յաղթանակը»:

Վրաստանում 2003թ-ին տեղի ունեցած «Վարդերի յեղափոխութեան» արդիւնքում իշխանութեան եկան երիտասարդ, արեւմտամէտ ուժեր (գործող նախագահ Միխէիլ Սաակաշվիլիի գլխավորութեամբ՝ Tert.am), որոնք սկսեցին բազմաթիւ բարեփոխումներ իրականացնել: Սակայն իր դիրքերն ամրապնդելուց յետոյ Միխէիլ Սաակաշվիլին հակուեց դէպի ավտորիտարիզմը: Անցած տարուայ Հոկտեմբերին անցկացուցին Վրաստանի պատմութեան առաջին արդար եւ ազատ ընտրութիւնները, որոնք ժամանակ յաղթանակ տարաւ ընդդիմադիր դաշինքը (գործող վարչապետ Բիձինա Իվանիշվիլիի գլխավորութեամբ՝ Tert.am): Այդուհանդերձ, պետական կառավարման համակարգում վարչապետ Բիձինա Իվանիշվիլի եւ նախագահ Միխէիլ Սաակաշվիլի միջեւ առկայ մրցակցութեան եւ միմեանց չվստահելու պատճառով քաղաքական լարուածութիւն այս երկրում շարունակուած է պահպանուել:

Ժողովրդավարական սկզբունքները խթանելու Վրաստանի օրինակը բացառիկ է Հարաւային Կովկասի համար: Այդուհանդերձ, Սաակաշվիլի եւ նրա թիմակիցների նկատմամբ Իվանիշվիլիի ճամբարի սկսած քրէական հետապնդումները կասկածի տակ են առնում այդ ձեռքբերումները: Իվանիշվիլին, անվտանգութեան եւ տնտեսական զարգացման ինտեգրման հարցերում հայեցքն ուղղելով դէպի Արեւմուտքը, միաժամանակ նուազեցնում է Ռուսաստանի հետ յարաբերութիւններում առկայ լարուածութիւնը. այդ երկիրը համաձայնել է վերականգնել վրացական գինու, հանքային ջրի եւ գիւղատնտեսական ապրանքների ներմուծումը: Այս գործընթացը, սակայն, հեշտ չի ընթանայ՝ հաշուի առնելով այն, որ Ռուսաստանն Աբխազիան եւ Հարաւային Օսիան ճանաչել է որպէս անկախ պետութիւններ: Մէկ շնչին բաժին ընկնող եկամուտն այստեղ մեծ է՝ 5 350 դոլար է, իսկ գործազրկութեան ցուցանիշը հասել է 30 տոկոսի:

Վլադիմիր Պուտինը փորձում է միաւորել նախկին խորհրդային Միութեան հարեւանների՝ Մաքսային միութեան կազմում, Հայաստանն ու Վրաստանը, սակայն, հակուած են համագործակցելու «աւելի հարուստ Եւրամիութեան հետ»: Աղբեջանը եւս նախընտրում է համագործակցել եւրոպացիների հետ, որոնք իր հներգակիրների գլխավոր սպառողներն են, չնայած որ քննադատում են Բաքուին՝ մարդու իրաւունքները խախտելու համար:

Ամենակարեւորն այն է, թէ Հարաւային Կովկասի երկրներն ինչ են անում՝ իրենք իրենց օգնելու համար: Լեռնային Ղարաբաղի համար Հայաստանի եւ Աղբեջանի միջեւ ինչ-որ պատահականութեամբ ռազմական գործողութիւնների վերակտումը մարդկային մեծ ողբերգութեան կարող է հանգեցնել՝ մեծ թիւով զոհերով... Լարուածութիւնը տարածաշրջանում կարող է պահպանուել այնքան ժա-

մանակ, քանի դեռ այդ երկրների ոչ լիբերալ դեկավարները չեն դադարել «բանեցնել ազգայնականութեան խաղաքարտը»՝ իրենց իշխանութիւնը պահելու համար: Չնայած ժողովրդավարական ուժերը եւս կարող են խաղալ այդ խաղաքարտով: Միջազգային միջնորդական ջանքերն ամենայն հաւանականութեամբ կը շարունակուեն, սակայն այդ առաքելութիւնն Արեւմուտքի համար առաջնահերթութիւն չի լինի այնքան ժամանակ, մինչեւ կողմերը համաձայնութեան չզան գիշումների գնալու հարցում: Ժողովրդավարական եւ տնտեսական բարեփոխումները, յատկապէս Հայաստանում եւ Աղբեջանում, կարեւոր նշանակութիւն ունեն եւ դրանց իրականացման անհրաժեշտութիւնը վաղուց արդէն հասունացել է:

Ամբողջ տարածաշրջանում աճում է աղքատութեան եւ կոռուպցիայի մակարդակը՝ էլ աւելի խորացնելով առկայ սոցիալական խնդիրները: Սա վերաբերում է նաեւ Աղբեջանին, որը, չնայած իր նաւթային պաշարներին, «առանձնանում է» եկամուտների անհամաչափ բաշխման համակարգով:

ԱՄՆ-ի կողմից Հարաւային Կովկասին յատկացուող տնտեսական օգնութեան չափը գնալով նուազում է, իսկ Եւրամիութիւնը ջանքերը կենտրոնացրել է իր Ֆինանսական խնդիրների վրայ: Եթէ Հարաւային Կովկասի երկրները լրացուցիչ ջանքեր չգործադրեն իրենց խնդիրները լուծելու ուղղութեամբ, ապա Արեւմուտքի օգնութիւնն էլ կը նուազի: 2008թ-ին Ռուսաստանի ներխուժումը Վրաստան ցոյց տուեց, որ անհրաժեշտ է աւելի ակտիւ եւ գժուական լինել այս երկրներին օգնութիւն տրամադրելու հարցում, որպէսզի նրանք կարողանան դիմակայել պարտադրանքի միջոցներին: Երբ Աղբեջանի էներգետիկ կարեւորութիւնը նուազի, ապա այդ երկիրն Արեւմուտքի ուշադրութիւնը կը կարողանայ «գրաւել» ժողովրդավարական ձեռքբերումներով: Հայկական սփիւռքը զգալիօրէն օգնում է Հայաստանին, սակայն դա բաւարար չէ. մեկուսացումից դուրս գալու համար աւելի մեծ միջազգային աջակցութիւն է անհրաժեշտ: Իսկ դա նշանակում է, որ անհրաժեշտ է բարելաւել վիճակը երկրի ներսում:

Թէեւ հարակովկասեան երկրներն «առաջընթացի ճանապարհով» շատ դանդաղ են ընթանում, այդուհանդերձ՝ Արեւմուտքը պէտք է շարունակի ջանքերն այդ տարածաշրջանի կայունութիւնը եւ անվտանգութիւնն ամրապնդելու ուղղութեամբ: Եւրամիութիւնը պէտք է ազատ առեւտրի պայմանագիր կնքի Հայաստանի եւ Վրաստանի հետ, ինչպէս նաեւ Աղբեջանի հետ, երբ վերջինս դառնայ Առեւտրի համաշխարհային կազմակերպութեան անդամ: Նոյնը պէտք է անի նաեւ ԱՄՆ-ը: Արեւմուտքի կողմից այդ երկրների քաղաքացիական հասարակութիւններին աջակցելը կարեւոր նշանակութիւն ունի:

Եթէ հարակովկասեան երկրները չեն ցանկանում մեկուսացուած մնալ, ապա պէտք է բռնեն դրական փոփոխութիւններ կատարելու ուղին եւ հրաժարուեն նոր հակամարտութիւններից: Հակառակ դէպքում տարածաշրջանի ապագան մշուշոտ կը լինի»:

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 100,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel :----- Fax :-----

ԵՒ «ԴԵՊԻ ԱՊԱՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ» ՅԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԵԱՅՔ ԵՒ «ԴԵՊԻ ԱՊԱՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ»

ՄԱՆԷՅԱԿՈՐԵԱՆ

Անկախութիւնից անմիջապէս յետոյ, երբ խզուեցին տնտեսական ու քաղաքական կապերը նախկին պետութեան երկրների հետ ու դրան գումարուեցին արդէն եղած երկրաշարժի, այնուհետեւ պատերազմի հետեւանքները, երկիրը բոլոր առումներով յայտնուեց ծայրահեղ ծանր վիճակում, այդ ժամանակ ամիսներ շարունակ կառավարութիւնը գերիսնդիւր էր դարձրել քաղաքների, փողոցների, գիւղերի ու ավանների անուանումների փոխումը, արձանների հեռացումը, բուհերի ու դպրոցների անուններից խորհրդային Միութեան յայտնի դէմքերի անունների հանելը, կինոթատրոններն ու հրապարակները անուանափոխելը: Ժիշտ այսպէս. «Նաւը խորտակուած է, իսկ անձնակազմը, նստած, նրա ներքին ձեւաւորման վրայ է աշխատում»: Խորհրդարանը, բան ու գործ թողած, ամիսներով «նստած էր անունների վրայ»: Ծառը Ազնաւուրը իր վերջերս տուած յայտնի հարցազրույցում, անդրադառնալով ցեղասպանութիւն բառին, ասել է. «Դրսում բառերի պատերազմ է, իսկ ներսում մարդիկ տառապում են»: Զեւական կողմը գերիսնդիւր դարձրած մեր ղեկավարութիւնն, աւաղ, սկզբից ի վեր միայն գբաղուած է քանդելով հինն ու նորը չկառուցելով: Քանդում է, քանի որ դա կոմունիստական սխալ բարձր մնացուկ է, չի կառուցում, քանի որ ունի լուրջ «արդարացում». երկիրն աղքատ վիճակում է, պիտուէր գումարներ չկան: Յաւօք, մեր դարերով եկած քաղաքակրթութիւնն ու շինարար ազգ լինելը լրգունդ դարձրած մեր երկրի մանուկն անգամ մեծանում է այդ գիտակցութեամբ. պարծենալ ծագումով, քարկոծել եւ քանդել հինն ու ոչինչ չկառուցել: Այսօր հերթը հասել է Գիտութիւնների ազգային ակադեմիային: Չէ, ինչո՞ւ այսօր, նրա գլխին սուրը կախուեց անկախացման հենց առաջին տարիներից սկսած արդէն, երբ մի հրամանով ակադեմիկոս դարձան բոլոր թղթակից անդամներն, ու յետոյ էլ կազմը կրկնապատկուեց: Գուցէ չգիտակցուեց, թէ դէպի ուր է տանում այդ քաղաքականութիւնը: Ո՛չ, շա՛տ լաւ գիտակցուեց... դա ամբողջ հանեց պրեզիդենտ Վիկտոր Համբարձումեանին: Նա սկզբում անգիշտում պաշքարեց, ասելով՝ դուք գիտակցուած փչացնում էք ակադեմիան, այնուհետեւ դիմում գրեց՝ հրա-

ժարուելով պրեզիդենտութիւնից ու ակադեմիկոսի կոչումից: Արժանաւորների կողքին բարձր կոչումներով յայտնուեց միջակութիւնն ու դարձաւ յետագայի համար յարմար փաստարկ՝ մատնացոյց անելու «ակադեմիական ոչինչ չանող ծերակոյտին» ու հնարաւորութիւն ստանալ քանդելու կառուցն ու տիրանալու գիտահետազոտական ինստիտուտներին կամ աւելի ճիշտ՝ թիւններին ու հողերին: Ինչպէս որ դարեր շարունակ եկեղեցիներն ու եկեղեցապատկան հողերն են եղել ամենալաւ դիրքում ու ամենագեղեցիկ վայրում, խորհրդային ասթիստական իշխանութիւնն այս անգամ կրթութեան տաճարների ճարտարապետական տեսքին ու վայրին էր մեծ կարեւորութիւն տուել: Աւաղ, այդ քաղաքականութիւնն էլ պատճառ է դարձել, որ այսօրուայ օլիգարխները դրանց դիտեն որպէս յարմար «օբեկտացուներ» ու ջանք ու փող չինայն տիրանալու: Ընդունելով հանդերձ խորհրդային պետութեան յանցագործ կողմերը, իրաւունք չունենք չիտստովանելու, որ նա՝ Հայրենականից յետոյ ոտքի կանգնելու ճանապարհը գիտութեանը զարկ տալու մէջ տեսաւ: Գաղտնիք չէ, թէ ինչ անխնայ ձեւերակալութիւններն ու կոտորածի ենթարկուեց ինտելիգենցիան խորհրդային կարգերի յաղթանակից յետոյ: Դրա աւելի ահաւոր փուլը յայտնի 1937 թիւն էր: Երկրորդ համաշխարհայինի նախօրէին համատարած ձերբակալման, աքսորի ու մահապատժի էր ենթարկուած երկրի գաղափարական սերունդը:

Կայ մի յայտնի պատմութիւն. Պ. Լ. Կապիցան, օգտուելով իր՝ քաղաքացիական անկախ կարգավիճակից, նամակ գրեց Ստալինին, ասելով, որ պէտք է ազատ արձակել Լանդաուին եւ այլ յայտնի գիտնականներին: Այդ չլսուած համարձակութիւնը պատճառ եղաւ, որ նրան հրաւիրեն Կրեմլ: Զրոյցի ժամանակ, երբ Սոլոտովը բազմիմաստ հարց տուեց նրան՝ Դուք գիտէ՞ք, թէ այստեղից ուր կարող էք գնալ: Նա յանդուգն պատասխանեց՝ Իհարկէ գիտեմ՝ տուն, հարցին, թէ ինչո՞ւ է այդպէս համոզուած, նա պատասխանեց՝ շուտով երկիրը կը մտնի պատերազմի մէջ, ու ձեզ պէտք կը գան Լանդաուն, միւս գիտնականները եւ ե՛ս: Դուք դա չէք կարող չգիտակցել: Իհարկէ, նրանք գիտակցում էին ու աւելի խորը գիտակցեցին պատերազմի

հենց առաջին թափից, երբ կորցրին համարեա՛մ ամբողջ ռազմական ռեզերվը: Իհարկէ, Ստալինն ու Բերիան բարութիւնից չէր, որ անմիջապէս բանտերից ու աքսորավայրերից ազատեցին բոլոր Լանդաուի ու Կորոլիովի նման մարդկանց եւ նոյնիսկ շտապ հրամաններով յետ բերուեցին նրանք անգամ, ովքեր գնդակահարութեան էին դատապարտուած: Գիտնականները ոչ միայն անցան ստեղծագործ աշխատանքի, այլեւ նրանց համար ստեղծուեցին ամենալաւ պայմանները: Գիտութեան դոկտորի աշխատավարձը սահմանուեց աւելի բարձր, քան ստանում էր նախարարը: Դէ իհարկէ բարութիւնն ու գիտնականի հանդէպ ունեցած յարգանքը չէր պատճառը, այլ գիտակցութիւնը, թէ ուր է հասցրել գիտութեան անտեսումը: Յաղթանակի եւ յետպատերազմական երկիրը ոտքի հանելու գրաւականներից էր դա ու համաշխարհային գերտէրութիւն դառնալու կարեւորագոյն գրաւականը:

Եւ հենց Ստալինգրադեան դաժան ճակատամարտի տարում, Կուրսկի ահեղ ճակատամարտին նախապատրաստուելու շրջանում բացուեց Հայաստանում Գիտութիւնների ազգային ակադեմիան՝ 1943 թ. Նոյեմբերի 10-ին: Պրեզիդենտ դարձաւ հիմնադիրներից մէկը՝ Յովսէփ Օրբելին: Արագ ստեղծուեց կազմ, որտեղ տեղ գտան առաջին ակադեմիկոսներ Յ. Օրբելին, Վ. Համբարձումեանը, որքան էլ գարմանալի լինի՝ Ա. Իսահակեանը, Ա. Տէրտէրեանը եւ այլք: Պատերազմող երկիրը սեւեռուեց գիտութիւնն ու կրթութիւնը զարգացնելու վրայ. բացուեցին բազմաթիւ բուհեր, նոր ֆակուլտետներ, դպրոցներ, որոնցում՝ պարտադիր ուսուցում: Անձամբ Լավրենտի Բերիայի «ատրճանակի հսկողութեամբ» անթերի սկսեց աշխատել կրթութեան համակարգը, գրուեցին դասագրքեր, բուհերում ու դպրոցներում դասաւանդել սկսեցին ամենալաւ մասնագէտները: 44-ին առաջ քաշուեց յայտնի «Ռուսական ատոմային ծրագիրը» եւ ստեղծուեց խորհուրդ, որի մէջ էր Աբրահամ Ալիխանովը, ով բացեց Տիեզերական ճառագայթների հետազոտման կայանն Արագածում ու եղբօր՝ Արտեմ Ալիխանեանի հետ ստեղծեց վերջերս հիմնադրամի վերածուած Երեսանի ֆիզիկայի ինստիտուտը: Երեսուն տարում մեր՝ գիտութեան ոլորտում աշխարհում վերջին տեղերում գտնուող երկիրը դարձաւ այդ ոլորտի առաջիններից մէկը:


Մի քանի տարին մեկ բացուած էին նոր ինստիտուտներ: 70-ականներին մենք ունէինք ԽՍՀՄ-ում գերհզօր եւ ամբողջ աշխարհում ճանաչուած ակադեմիական համակարգ: Դա հայաստանեան գիտութեան ոսկէ շրջանն էր: Համբարձումեանը, չթաքցնելով հպարտութիւնը, յաճախ էր տարբեր առիթներով ասում, որ գիտական արդիւնքով Հայաստանը Խորհրդային Միութիւնում գտնուած է 3-րդ տեղում, բայց բնակչութեան թուով տասնեակ անգամներ է գիշում 1-ին ու 2-րդ տեղերն զբաղեցնող Ռուսաստանին ու Ուքրաինային, իսկ մէկ գիտնականին ընկնող արտադրանքով գրաւում է առաջին տեղը: Դա տեղի ունեցաւ պետութեան քաղաքականութեան արդիւնքում: Աշխարհը տեսաւ, որ կայ քարտէզի վրայ համարեա՛ չերեւացող մի փոքրիկ երկիր, որ ունի գիտական հզօր պոտենցիալ: Բաւական է՝ ստեղծել պայմաններ եւ այն կը փայլի ու կարարի եւ հիմնարար, եւ կիրառական գիտութիւնների բնագաւառում: Աշխարհը տեսաւ, բայց աւաղ, ոչ մի կերպ չի տեսնում մեր ղեկավարութիւնը, որը գիտութեան դոկտորին այսօր տալիս է վարորդից ցածր աշխատավարձ, չի տեսնում, որ՝ ինչ տեմպով հզօրացել էր գիտութիւնը 30 տարում, այսօր նոյն տեմպով յետ է գնում. այն ժամանակ ամէն հինգ տարին մէկ բացուած էր նոր ինստիտուտ ու ծաղկում, այսօր ամէն հինգ տարին մէկ քանդուած ու փակուած է ինստիտուտ ու մտնում օլիգարխի կոչուող գազանի երախը: Այսօր ԳԱԱ-ն միակ կառուցն է, որի համակարգում գործող գիտահետազոտական ինստիտուտները՝ չունենալով ո՛չ նորմալ ֆինանսաւորում, ո՛չ ժամանակակից սարքաւորումներ, տալիս են մեծ արդիւնք: Մեր ազգը հպարտանալու մի լուրջ պատճառ ունի, նա գիտութեան այդ է: Իսկ մեր նախագահը, երիտասարդ գիտնականների հետ հանդիպման ժամանակ, հնչեցրեց չտեսնուած ու չլսուած մի միտք՝ կարծում էք լա՞ւ կը լինի, որ բոլորը գիտնական դառնան: (Իմա՛ չենք թողնելու):

Ինտելեկտուալ մեծ պոտենցիալը առիթ է հպարտանալու եւ ոչ թէ՛ անհանգստանալու, յարգելի՛ պարոն նախագահ: Բոլորը գիտնական չեն կարող դառնալ, իսկ նրանց, ովքեր կարող են, իհարկէ պէտք է թողնէք, աւելին՝ պէտք է ստեղծէք բոլոր պայմանները, որպէսզի զարգանայ գիտութիւնը, հետեւաբար՝ երկիրը:

www.massisweekly.com


Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909




SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403b
--	---	---



A.B.A. INSURANCE SERVICES



Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աձիրաժնէլաւ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

ՄԻՆ ՊԱՏՐԱՆՔՆԵՐՈՒ ԵՒ ԴԱԺԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴՐՈՒԱԳՆԵՐԵՆ)

ԱԻԵՏԻՍՈՒԱԶՄԻԿ

Մայիս 28-ին նշեցինք Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրության 95-րդ տարեդարձը: Երկու քուկէս տարի ապրած հանրապետության կեանքը ամենափոթորկալի եւ ճակատագրական հատուածն է մեր նորագոյն պատմութեան էջերուն մէջ: Արեւուի եւ խարխափումներով լի ժամանակաշրջան մը, որ ուսումնասիրութեանց եւ վիճաբանութեանց առատ նիւթ հայթայթած է պատմաբաններու, յուշագրողներու, կուսակցական գործիչներու թէ պարզապէս պատմասէր հանրութեան համար: Այդ ժամանակաշրջանին նուիրուած են հարիւրաւոր ուսումնասիրական հատորներ (ոչ միայն հայերէն), յուշագրութիւններ, քննարկումներ եւ թէ էլոյթներ: Պատմութիւն, որ մէկ անբաժանելի մասնիկն է մեր կեանքին, հայրենիքին եւ տարեգրութեան, քանզի անոր հետեւանքներն ու արձագանքները առ այսօր կը ներգործեն հայ կեանքին վրայ: Առաջին հանրապետութիւնը հիմնաքարն է անոր յաջորդած երկու հանրապետութիւններուն եւ շողկապող օղակը այն շղթային, որ կը սկսի յետեղեռնեան իրադարձութիւններէն հասնելու մինչեւ Հայաստանի խորհրդայնացում (1920) եւ փետրուարեան եղբայրասպանութիւն (1921): Այսօրուան Հայաստանի քարտէզը, մեծ մասամբ, այդ շրջանին է որ կազմուեցաւ եւ լաւապէս հասկնալու համար այժմու Հայաստանի տարածքին եւ սահմաններուն կազմաւորումը, պէտք է խորապէս ուսումնասիրել 1917-1923 թուականներուն ինկած ժամանակահատուածը՝ Հայաստանի առաջին հանրապետութեան պատմութիւնը ներառելով:

Բնականաբար, նորաբողոք Հանրապետութիւնը պիտի դիմագրուէր բազմապիսի դժուարութիւններ: Մեծ Եղեռնէն մագապուրծ արեւմտահայ գաղթականութիւն, սով ու համաճարակ, ընկերային-ստեղծական լեռնակուտակ դժուարութիւններ, արեւմտահայ-արեւելահայ բացայայտ հակասութիւններ, անգրագիտութիւն, սահմաններու պաշտպանութեան հարց, բանակաշինութիւն, ներքին ապահովութիւն, առողջապահութիւն, բոլոր սահմաններէն եկող ռազմական ճնշումներ (Վրաստան, Ատրպէյջան, Թուրքիա եւ խորհրդային ուժեր), արեւմտեան քաղաքական-ռազմական շահագրգռութիւններ, միջազգային խորհրդաժողովներ, հայրենիքի կառուցման առաջնահերթութիւն, միջ-կուսակցական զգվուտուքներ եւ այլն: Դժուարին պատասխանատուութիւն կ'ենթադրէր երկրին ղեկավարման պաշտօնը: Ոչ միայն հեռատեսութիւն, այլ՝ իրատեսութիւն եւ իրադրութեանց ճիշդ ընթերցում կը պահանջուէր օրուան վարիչներէն: Պատմութիւնը, իրօք, ծանրակշիռ բեռ մը դրած էր Հայաստանի ղեկավարութեան ուսերուն. հաւանական ճախողութիւնը՝ սերունդներու դատապարտումին պիտի արժանացնէր զանոնք, փոքր յաջողութիւնները՝ աննկատ պիտի մնային, որովհետեւ ներքին եւ արտաքին պայմանները հակամէտ էին այլթաքումի հնարաւորութեան, քան դրական զարգացումներու: Խճճուած

եւ կնճռոտ հանգրուան մըն էր 1918-1920 թուականներու Հայաստանի եւ հայութեան կացութիւնը եւ ամենախորագէտ նաւապետն անգամ իր նաւը մեծ տքնանքով պիտի առաջնորդէր դէպի խաղաղ նաւահանգիստ. ի հարկէ եթէ յաջողէր...: Հայաստանի առաջին հանրապետութիւնը անմիջական ծնունդն էր անդրկովկասեան իրադարձութեանց եւ 1918-ի մայիսեան հերոսամարտերուն (Սարգարապատ, Բաշ Ապարան, Ղարաքիլիսա): 1917-ի խորհրդային յեղափոխութիւնը եւ ռուսական զօրքերուն Արեւմտեան Հայաստանէն անսպասելի նահանջը, օսմանեան բանակին լայն հնարաւորութիւն ընձեռեց լայնածիր արշաւանքով մը խոյանալու դէպի Արեւելեան Հայաստան: Դժբախտաբար, հայկական փոքրաթիւ ուժերը չկարողացան կասեցնել այս նախադրձակ եւ անսանձահարկ սրբնթաց հոսքը, որ 1918-ի Մայիսին արդէն կը սպառնար Երեւանին, եւ ափ մը մնացած Հայաստանին, զաւթելէ ետք Վանը, Էրզրումը, Կարսը, Սարղամիշը, Ալեքսանդրապոլը: Խորհրդային յեղափոխութիւնը Անդրկովկասի մէջ ստեղծեց ռազմական, քաղաքական, ապահովական, վարչական, տնտեսական եւ հոգեբանական լուրջ բաց մը, որու հետեւանքով Անդրկովկաս ինքզինք լքուած զգալով ռուսական ընդհանուր ընտանիքէն (ցարական օրերէն մնացած), անոր բաղկացուցիչ ազգութիւնները որոշեցին իրենց սեփական ճակատագիրը տնօրինել ինքնուրոյն պետական միաւորներ կեանքի կոչելով: Այս ծիրէն ներս Մայիս 26-ին անկախացաւ Վրաստան, Մայիս 27-ին Ատրպէյջանն եւ վերջապէս հայկական կողմին այլ ելք չէր մնար եթէ ոչ Հայաստանը հռչակել անկախ պետութիւն... Թիֆլիսէն: Հոն հաստատուած Հայ Ազգային Խորհուրդը կը ստանձնէր Հայաստանի տարածքներուն վարչական ղեկավարութիւնը եւ որ հետագային կորիզը պիտի ըլլար Հայաստանի Հանրապետութեան իշխանութեան եւ կառավարութեան: Ուրեմն, Սարգարապատի հերոսամարտը եթէ ռազմական եւ իրողական վկայագիրը եղաւ անկախութեան հռչակման, ապա անկախութեան յայտարարութիւնը քաղաքական եւ իրաւական աքթըր եղաւ հանրապետութեան ծնունդին:

Այսպիսով, տարածաշրջանային ռազմաքաղաքական պայմանները, ռուսական ազդեցութեան չքացումը, թրքական սպառնալիքը եւ հայ ժողովուրդի դիմադրական կամքը աշխարհի քարտէզին վերակենդանացուցին Հայաստան անունը: 600 տարիներու բռնակալութեան եւ ստրկութեան կապանքը փշրուեցաւ, ազատութեան ոգին անգամ մը եւս սաւառնեցաւ եւ հայը դարձաւ իր հայրենիքէն մաս մը մնացած հողատարածքին տէրն ու ղեկը, յետ երկարատեւ մաքառումներէ, գուպարներէ եւ հերոսական ոգորումներէ:

* * *

Ի հարկէ, մէկ յօդուածով անհնար է ներկայացնել երկու քուկէս տարուան պատմութեան անցքերը. հատորներու կը կարօտի նման նախաձեռնութիւն: Սակայն կ'արժէ անդրադառնալ երեք յոյժ կարեւոր դրուագներու, որոնք ճակատագրական բնույթ ունեցան եւ առ այսօր առիթ կը հանդիսանան

խորհրդածութեանց եւ մտորումներու, ուսանելի դասեր քաղելու մեր մօտիկ անցեալի պատմութենէն:

Տեղին է նշել, որ այսօրուան Հայաստանի տարածքին առնչուած բոլոր միջազգային եւ շրջանային դաշնագիրները կնքուեցան այդ ժամանակահատուածին (Պրեսթ Լիթովսք, Պաթում, Սեւր, Սեն Ռեմոյի կոնֆերանս, Լոնտոնի խորհրդաժողով, Սեւր, Ալեքսանդրապոլ, Մոսկուա, Կարս, Լոզան): Ուստի, այդ ժամանակաշրջանին ուսումնասիրումը որքան պատմագիտական բնույթ ունենայ, նոյնքան եւ աւելի քաղաքական-դիւանագիտական նշանակութիւն ունի բոլորս շահագրգռող:

ա) Երկու քուկէս տարիներու ընթացքին, Հայաստանի Հանրապետութիւնը ակնատես եղաւ երկու ներքին ուժգին խռովութեանց. մին՝ Թուրք-ազերիներու դրդումով թաթար եւ իսլամ բնակչութեան ապստամբութիւնը, յատկապէս Նախիջևանի մէջ: Միւսը՝ պոլշեհիկեան ապստամբութիւնը 1920 Մայիսին: Արդարեւ, 1920 Ապրիլին Ատրպէյջանի մէջ կը հաստատուէին խորհրդային կարգեր. նախկին մուսաւաթականներ կրելով կարծիք դրօշներ եւ ունենալով խորհրդային ուժերուն նեցուկը ձեռք կը բերեն զգալի առաւելութիւններ Ղարաբաղի, Չանգեզուրի եւ Նախիջևանի մէջ: Տարածաշրջանը կ'ընթանար խորհրդայնացման ուղղութեամբ: Հայաստանի վարիչները փոխանակ ընդունելու կատարուած իրողութիւնը եւ համակերպելու շրջակայ իրադարձութեանց, արիւնալի կերպով կը ճնշեն հայ պոլշեհիկեան խռովութիւնը Կարսի, Ալեքսանդրապոլի, Չանգեզուրի, Նոր Պայազետի, Երեւանի եւ այլ վայրերու

մէջ: Պարզ է, Հայաստանի պոլշեհիկները ոգեւորուած էին ազերի պոլշեհիկներու յաջողութենէն: Ապստամբութեան ղեկավարութեան մեծ մասը կը գնդակահարուէր. շատեր կ'ապաստանին Խ. Ատրպէյջան, որպէս գաղափարակից եւ զինակից ապահով վայր:

Կարեւոր հարց մը արդեօք այդ օրերուն եթէ խորհրդային իշխանութիւն հաստատուէր, Հայաստանի քարտէզը այլ կերպ չէր ձեւաւորուէր. մանաւանդ որ Խ. Ռուսաստան եւ քեմալական Թուրքիա դաշնակիցներ էին եւ Ռուսաստան կրնար միջամտել կացութեան եւ սահմաններ գծուէին հայոց համար աւելի բարենպաստ ելքով: Հայաստանի վարիչները կառչած իրենց աթոռներուն, հետեւողականօրէն վարեցին հակախորհրդային քաղաքականութիւն, այսինքն՝ փորձեցին թիափարել հոսանքն ի վեր: Անոնք տարուած արեւմտեան խոստումներով եւ հրապուրուած այդ կողմորոշմամբ՝ անտեսեցին զարգացող իրականութիւնը:

Գրականագէտ Լեւոն Հախվերտեան իր՝ «Թումանեանը եւ իր ժամանակը» (1995, Երեւան) հատորին մէջ կը գրէ. «Մեր օրերի հմուտ պատմաբան, յատկապէս Հայաստանի առաջին հանրապետութեան պատմութեան մասնագէտ Ռիչարտ Յովհաննիսեանին լսենք. ...իբրեւ պատմաբան եւ իբրեւ սրտացաւ հայ կ'ըսեմ, թէ երանի 1920 թ. այն ապստամբութիւնը յաջողէր եւ մի գուցէ Կարսը մնար, Սուրմալուն կը մնար մեր ձեռքը, Մասիսը մեր ձեռքը կը մնար: Բայց պէտք է հասկանալ նաեւ այն ժամանակուայ կառավարողներուն (էջ 84): Ուրիշ տեղ մը. «Լոյս ձորճը չէ՞ր, որ իր յուշերի յայտնի գրքում

Շաք.ը էջ 17



**ՀԱՅՅ. ԱՌԱՋԵԱՆՈՒԹՅԱՆ ԵՎԵՂԵՏԻՈՅ
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ**

Հովանաւորութեամբ
Գեորգ. Տ. ՅՈՒՆԱՆ ԱՐՔ. ՏԵՐՏԵՐԵԱՆԻ

Մասնակցութեամբ
ԱՅՆԹԱՊԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

**ԾՆՆԴԵԱՆ 100ԱՄԵԱԿԻ
Հանդիսութիւն**

**Բազմալատակ Կրթական Մշակ
Տիար ԵՐՈՒԱՆԻ ՊԱՊԱՅԵԱՆԻ**

Կիրակի, Յունիս 16, 2013

*Սրբոց Դեանդեանց Մայր Տաճարին մէջ
լինելուցս Ս. Պատարագին պիտի ընթերցուի*

**ԳԱՐԵԳՈՒ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱՌՈՂՎՈՒՄ
ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԸ**

Պատարագի տարամբ
Պաշտօնական Հանդիսութեան ժամը 1:00-ին
Օրուան Բանախօս

Տարթ. Սիմոն Սիմոնեան

*Առաջնորդարարն ԶՕՐԱՅԵԱՆ Թանգարանի
Սիրալիբ հոսէր բոլորին*

3325 N. Glenoaks, Blvd., Burbank, CA 91504

ԿՐԹԱԿԱՆ ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ՄՇԱԿ ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆԻ ՀԱՐԻՐԱՄԵԱԿԻՆ ՆՈՒՐՈՒԱԾ՝ ՈՒՂԵՐՉ

ԹՈՐԳՈՄ ՓՕՍԹԱՃԵԱՆ

Կրթական բազմապատակ մշակ՝ Երուանդ Պապայեանի ծննդեան դարադարձը առիթ կը հանդիսանայ որ բանաստեղծական նմանողութեամբ մը՝ պատկերացնել փորձեմ իր կրթական, վարչական եւ գրական արդիւնաշատ գործունէութիւնը:

Ֆրանսացի բանաստեղծ Պօուլէրի մէկ քերթուածէն է որ կը փափաքիմ բերել այդ նմանութիւնը: Պոտլէն՝ «բանաստեղծը» կը նմանցնէ, ովկիանոսներու անվերջ հեռուորութեանց վրայ անվատ համբերութեամբ ճախրող՝ Ալպաթրոս թռչունին:

Նոյն նմանութեամբ եւս՝ Երուանդ Պապայեանի Հայ կրթութեան, Հայ դպրութեան եւ Հայ ժողովուրդի բարօրութեան ընծայած իր երկարատեւ ծառայութիւնն ու նուիրումը՝ յար եւ նման է Ալպաթրոս թռչունի երկարատեւ եւ անվատ ճախրանքին:

Երուանդ Պապայեան եւս ընդունակ է միայն բարձրագոյն թիւիչին եւ ինչպէս որ բանաստեղծը կը նշէ՝ ան «իշխանն է երկնքին»: Ան չի վախնար մարտնչել «Փոթորիկին դէմ»: Անտարբեր է ան՝ աջ եւ ասեակ «արձակուած նետերու դէմ»:



Նկարագրով՝ անվախ է ան եւ արի:

Երուանդ Պապայեան իր ապրած երկարատեւ տարիներու ընթացքին իրեն համար իտէպլ նկատած է միշտ եւ միայն դէպի վեր թռիչքը: Տենչը՝ բարձրագոյնին եւ կատարեալին:

Եւ ինչպէս որ Պոտլէն կ'ըսէ՝ Երուանդ Պապայեան դէպի բարձրերը ճախրելու վարժուած է միայն: «Իր թեւերը Հսկայի՝ Ձինք կ'արգիլեն Քալելու»:

Առողջութեան եւ յարատեւութեան ջերմագոյն մաղթանքներ:

ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՄԱՐԶԱԿԱՂԵՐՈՒ ՇԱՐԱԹԱԿԵՐԶ ՖՐԵՉՆՈՅԻ ՄԷՉ



Յիշատակութեան Օրուան շաբաթավերջին՝ Մայիս 24-26, 2013 անգամ մը եւս զեղեցիկ առիթը ընծայեց Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի երիտասարդութեան, որպէսզի միասին ըլլան եւ մասնակցին նաեւ եկեղեցական արարողութեանց:

Մարգարեալներ սկսան բացման արարողութեամբ, որուն ընթացքին մասնակից բոլոր խումբերը ներկայացուցան եւ երիտասարդները ունկնդրեցին Առաջնորդ Սրբազան Հօր քաջալերական խօսքերը եւ արժանացան իր օրհնութիւններուն:

Շաբաթ օրուան խաղերէն ետք, ընկերային ձեւով տեղի ունեցաւ Ֆրէզնոյի Սուրբ Պօղոս Հայց. Եկեղեցու Սրահին մէջ: Իսկ Կիրակի օրը երիտասարդները մասնակցեցան Սուրբ Պօղոս Հայց. Եկեղեցու մէջ Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ մատուցուած Սուրբ Պատարագին եւ Սուրբ Հաղորդութիւն ստացան: Մարգարեալներու առթիւ զանազան Ծուխերէն ժամանած Հոգեւոր Հովիւներ Ծուխի Հոգեւոր Հովիւ՝

Արժ. Տ. Արշէն Աւագ Քհնյ. Այվագեանի գլխաւորութեամբ մասնակցեցան ժամերգութեան եւ Սուրբ Պատարագին: Ինչպէս անցեալին, այս տարի եւս ախոյեանական խաղերը լեցուած էին խանդավառութեամբ թէ՛ մարզիկներու եւ թէ՛ ալ անոնց ծնողներու կողմէ: Երեկոյեան տեղի ունեցած ճաշկերոյթի ընթացքին խումբերը եւ անհատապէս մասնակից մարզիկները ստացան իրենց բաժակները եւ արժանացան ջերմ զնահատութեան:

Այս տարի Մարգարեալներու Շաբաթավերջին յատուկ հանգանակութիւն կատարուեցաւ, որմէ գոյացած հասոյթին կէսը պիտի յատկացուի »Հայ Քրիստոնէայ Երիտասարդաց Առաքելութիւն Դէպի Հայաստան« Ծրագրին՝ ի նպաստ Հայաստանի Մարտունի Ծրջանի Ծովինար Գիւղի ծրագրին: Փափաքողներ կրնան իրենց չէքերը ուղարկել Առաջնորդարան՝ WESTERN DIOCESE-ARMENIAN CHURCH (in memo: CYMA Service Project):


ԳԻՆԵՉՕՆ ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆԻ «ՄՈՐՄՈՔՈՂ ԱՆՑԵԱԼԻ ԱՐԱՅԵՏՆԵՐՈՎ» ԳՐՔԻ

Մշակութասէր ընտրանի հասարակութիւն մը փութացած էր Կլէնտէյլի հանրային գրադարանի ընթերցասրահը, Ուրբաթ, Մայիսի 31ին երեկոյեան, անգամ մը եւս հաղորդակից դառնալու Դոկտ. Մինաս Գոճայեանի «Մորմոքող Անցեալի Արահետներով» գիրքին: Արդարեւ Մինաս Գոճայեան բազմաթիւ անգամներ այցելած էր մեր պատմական հողերը, սակայն այս մէկը ուխտագնացութիւն մըն էր եւ միաժամանակ ունէր տարբեր իմաստ ու բովանդակութիւն:

ՌԱԿ-ի Հայ Իրաւանց Խորհուրդի Հովանաւորութեամբ կազմակերպուած սոյն միջոցառումին հանդիսավարն էր Հրաչ Սեփեթեան, որ իր բացման խօսքին մէջ շեշտեց կարեւորութիւնը նման գիրքերու եւ վաւերագիրներու, որոնց մէջ կ'արտացոլան պահանջատէր հայ ժողովուրդի փաստավաւերագրական տուեալները, ականտեսի վկայութիւնները:

Սրտի խօսքերով ելոյթներ ունեցան Միհրան Թումաճեան, բժիշկ Յակոբ Այնթապեան եւ Մարտիրոս Վարդանեան, որոնք գնահատանքով արտայայտուեցան Դոկտ. Մինաս Գոճայեանի սոյն աշխատութեան մասին, որ նախապէս լոյս տեսած էր «Նոր Օր»ի մէջ:

Լիլի Սարաֆեան Սարմէնի՝ «Հայրենի Տուն» քերթուածի արտասանութիւնով պահ մը մեզ փոխադրեց մեր պայմանական հողերը: Ներկաները հետաքրքրութեամբ դիտեցին ուխտագնաց Մ. Գոճայեանի տեսաերկը, որուն մէջ ցաւով նշմարեցինք ավերուած դարձած մեր պատմական չուշարձանները, ինչպէս նաեւ Կիլիկիոյ եւ այլ շրջաններու դաւարագեղ դաշտե-



րը, կամուրջներն ու ջրվէժները: Իր ողջոյնի խօսքին մէջ Դոկտ. փրոֆ. Արտեմ Սարգիսեան յատկապէս նշեց որ «Այս ուխտագնացութեան հատորէն քարերն անգամ կը խօսին, ինչպէս հեղինակը՝ կ'ըմբօստանայ այս կացութեան դէմ, որ անփոփոխ կը մնայ արդէն շուրջ 100 տարի...»:

Սոյն գիրքը հանգամանօրէն ներկայացուց Գէորգ Յակոբեան: Ան առանձնապէս անդրադարձաւ մեր պահանջատիրութեան եւ յարեց՝ «Կը շտկուի մի օր ոչ միայն ցաւը, այլ՝ մորմոքը եւ թուրքը կ'ընդունի իր ըրածը: Յանկալի է, որ այս գիրքը թարգմանուի թրքերէնի քանի որ յոյժ բախնդիր աշխատութիւն մըն է»:

Տիկին Արշօ Մելիքեան-Ու-

Մար.ը էջ 18

ՅՈՒՆԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ
GREEK NIGHT
 FEATURING
THE BOUZOUKI TRIO



Կալամպուրեանի՝
ԿԼԵՆՏԵՅԼԻ
 ԱՐՄԵՆ ԿԻՏՈՒՐ
 ՄԱՍՆԱՃԻՒՂԻ

Շաբաթ, 22 Յունիս 2013
 Երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ
 Հ.Մ.Մ.-ի «Կարօ Սոցալապեան» սրահին մէջ
 1060 N. Allen Ave., Pasadena

◆◆◆

ՄՈՒՏՔԻ ՆՈՒԵՐ՝ \$35.00
 ՏՈՒՍԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ՝
 ԱՎՕ ՄԱԶՄԱՆԵԱՆԻՆ (818) 913-9311
 ԿՄԻ ԿԱՐՕ ՊԵՐԱՐԵԱՆԻՆ (818) 913-4024

Massis Weekly

Volume 33, No. 21

Saturday, June 8, 2013

Pope Francis Reaffirms Armenian Genocide Recognition



VATICAN CITY — Pope Francis has publicly stood by his past statements describing the 1915 mass killings and deportations of Armenians in the Ottoman Empire as Genocide.

Pope Francis reiterated his view on the subject during a meeting with the Lebanon-based Armenian Catholic Patriarch Nerses Bedros XIX held at the Vatican this week.

A video report on the meeting circulated by the Catholic TV news agency Rome Reports (Romereports.com) showed him greeting Nerses Bedros and several Armenian Catholics accompanying the patriarch. One of them, a woman, told Francis that her family was a genocide

victim as she introduced herself.

“It was the first major genocide of the 20th century,” replied the Pope.

Francis has described the World War I-era deaths of some 1.5 million Armenians as genocide on at least one occasion in the past, when he was Archbishop Jorge Mario Bergoglio of Buenos Aires. Speaking in 2006, he also urged Turkey to acknowledge the genocide.

The late Pope John Paul II likewise called the slaughter of Ottoman Armenians “the first genocide of the 20th century” when he visited Armenia in 2001. But his successor Benedict XVI, who resigned in March, refrained from using the word genocide with respect to the 1915 massacres.


Notoriously Violent Governor of Syunik ‘Temporarily’ Resigns Over Deadly Shooting

YEREVAN -- The notoriously violent governor of Armenia’s south-eastern Syunik province said on Monday that he is “temporarily” stepping down in connection with a weekend shootout outside his villa that left one of his local rivals dead and two other men injured.

Suren Khachatryan announced his decision following the arrest of his son Tigran and one of his bodyguards on suspicion of involvement in the late-night incident in Goris, a provincial town that has long been his de facto fiefdom.

Khachatryan is notorious for his violent conduct and was in the center of several major scandals connected with beatings and arbitrary behavior of his relatives or bodyguards. Khachatryan was also in a “war of words” with former opposition presidential candidate Raffi Hovannisian, who accused him of rigging the February vote in Syunik in favor of President Serzh Sarkisian.

The authorities in Yerevan, meanwhile, were in no rush to sack or prosecute Khachatryan despite renewed allegations by opposition and civic activists about impunity enjoyed by powerful government loyalists in Armenia.



Suren Khachatryan

Law-enforcement authorities gave few details of the shooting, saying only that it followed a bitter dispute involving Avetik Budaghian, a 43-year-old local businessman and his brother Artak, who is the commander of an Armenian army unit stationed in the area. Avetik died on the spot, while Artak and another man, who is apparently linked to the governor, were hospitalized with serious gunshot wounds.

Police units sent from Yerevan reportedly searched the houses of Khachatryan and his relatives shortly

Continued on page 4

Louisiana State Senate Recognizes Independence of Karabakh

BATON ROUGE, LOUISIANA - The Louisiana branch of the Armenian Council of America (ACA) reports the Louisiana State Senate passed a Senate Resolution 151 (SR 151) on Thursday, May 30, 2013 recognizing the Nagorno Karabakh Republic and expressing support to develop as a free and independent nation in order to guarantee its citizens those rights inherent in a free and independent society. The resolution also urges the U.S. President and Congress to support the self-determination and democratic independence of the Nagorno Karabakh Republic and its constructive involvement with the international community’s efforts to reach a just and lasting solution to security issues in that strategically important region.

SR 151 was spearheaded by Louisiana State Senator Edwin R. Murray D-New Orleans, a distinguished member of the state legislature representing Louisiana’s 4th Senate District, worked closely with ACA of Louisiana to ensure the resolution’s passage. “Considering the amount of lobbying and threats conveyed by the Turkish and Azeri governments within the Loui-



Louisiana State Senator Edwin Murray

siana State Senate against SR 151, it’s passage is a testament to the integrity of our State Legislators,” said Louisiana ACA Chairman, Mr. Vasken Kaltakdjian. “Hard work and perseverance for a just cause will always pay off, and I thank Senator Murray along with the other Legislatures for retaining their principles.”

“We were glad to hear the news

Continued on page 3

Armenian FM, US Secretary of State Meet in Washington



Foreign Minister Edward Nalbandian and Secretary of State John Kerry

WASHINGTON, DC — US Secretary of State John Kerry and Armenian Foreign Minister Edward Nalbandian had a meeting at the Department of State in Washington, D.C., on June 4.

“It’s my pleasure today to welcome Foreign Minister Edward Nalbandian from Armenia. And for me, it is a particular pleasure to welcome him because I think everybody knows Massachusetts is home to one of the largest populations of Armenians outside of Armenia, so we’re very happy. I have many, many friends in the Armenian community, and for years, have worked with my friends in Armenia on a number of different issues, Secretary Kerry said before the meeting with the Armenian Foreign Minister.

“Armenia today is an important partner with United States in a number of initiatives. Importantly, they’re helping us in Afghanistan with ISAF, they’ve played a key role in Kosovo helping to keep peace there. And one of the most issues, obviously, that we all really want to try to see resolved one day is the frozen conflict of Nagorno-Karabakh. It is critical that all the parties – when I say all the parties, I mean, obviously, the Azerbaijanis, but also Turkey, Russia, Iran, others – try to find a way to help break the impasse that has kept this struggle alive and always potentially dangerous,” he stated.

“We also have other issues of great

Continued on page 3

Advanced Russian Missiles Deployed in Armenia



Iskander-M s missiles systems

YEREVAN (RFE/RL) -- Russia has deployed in Armenia state-of-the-art ballistic missiles capable of striking targets more than 400 kilometers away, according to a source in the Armenian Defense Ministry.

Speaking on the condition anonymity, the source told RFE/RL's Armenian service (Azatutyun.am) over the weekend that several Iskander-M systems are currently stationed at undisclosed locations in the country. The source declined to clarify whether they were delivered to the Armenian armed forces or the Russian military base headquartered in Gyumri.

The Defense Ministry in Yerevan did not officially and explicitly refute the information. Ministry spokesman Artsrun Hovannisian was quoted by 168.am Monday as saying only that the Armenian army has no Iskander-Ms in its arsenal.

Citing an unnamed Russian military source, the Russian news agency Regnum reported on May 15 that Moscow is likely to deploy the advanced surface-to-surface missiles as part of the ongoing modernization of its base in Armenia.

Designated by NATO as SS-26 Stone, Iskander-M is regarded by military analysts as one of the most advanced missile systems of its kind in the world. The system known for its precision was developed in the 1990s and adopted by the Russian army in 2006. With an operational range of at least 400 kilometers, its 7.3-meter-long missiles can overcome existing missile-defense systems, according to Russian military

officials and experts.

Russian-Armenian military ties appear to have deepened further in the last few months, with Russia's Defense Minister Sergey Shoygu and chief of the General Staff, Colonel-General Valery Gerasimov, visiting Armenia early this year. Armenian Defense Minister Seyran Ohanian held follow-up talks with Shoygu a mid-April trip to Moscow.

President Vladimir Putin and his Armenian counterpart Serzh Sarkisian also discussed defense cooperation when they met near Moscow on March 12. Sarkisian reportedly thanked Putin for "good progress" in bilateral military ties made since their previous meeting in December.

A Russian-Armenian defense agreement signed in August 2010 commits Moscow to helping Yerevan obtain "modern and compatible weaponry and special military hardware." Russian assistance is vital for the implementation of a five-year plan to modernize the Armenian army that was adopted by the Sarkisian administration later in 2010. The plan puts the emphasis on the acquisition of long-range precision-guided weapons.

The Armenian military has been equipped until now with only Scud-B and Tochka-U ballistic missiles that have firing ranges of 300 kilometers and 120 kilometers respectively. The Soviet-era systems are less advanced than Iskander-M. The military makes no secret of its readiness to use them against Azerbaijan's oil and gas installations in case of a renewed war for Nagorno-Karabakh.

Samantha Power Nominated as US Ambassador to the United Nations

WASHINGTON, DC -- Samantha Power is President Barack Obama's pick to succeed Susan Rice as the ambassador to the United Nations. The Dublin native and longtime Obama adviser is a former journalist, Harvard professor and Pulitzer Prize winning author for a book on genocide.

Over the years, she has earned a reputation for being a passionate human rights advocate and highly outspoken political aide.

Her second book, "A Problem from Hell: America and the Age of Genocide" offers a survey of the origin of the word genocide, the major genocides of the 20th century, as well



as an analysis of some of the underlying reasons for the persistent failure of governments and the international community to collectively identify, recognize and then respond effectively to genocides ranging from the Armenian Genocide to the Rwandan Genocide.

Inauguration of Armenian Patriarch of Jerusalem



Inauguration ceremony of newly elected Armenian Patriarch of Jerusalem

JERUSALEM -- The inauguration ceremony of newly elected Armenian Patriarch of Jerusalem His Eminence Archbishop Nourhan Manoogian was held in the Mother Cathedral of Saint James in Jerusalem. The new Patriarch, accompanied by the bishops, moved to the major sacristy of the Mother Cathedral from the Patriarchate, where he knelt and recited his oath bareheadedly.

After the recitation of the oath, Grand Sacristan, Archbishop Sevan Gharibian handed over the patriarchal crozier to the Patriarch as a symbol of assuming the patriarchal office.

His Grace Archbishop Nathan Hovhannisyan recited the congratulatory address of the Supreme Patriarch and Catholicos of All Armenians Karekin II. Archbishop Varuzhan Herkelyan read the letter of His Holi-

ness Catholicos Aram I of the Holy See of Cilicia on the occasion of the inauguration. Aram Ateshian, the Patriarchal Vicar of the Armenian Patriarchate of Constantinople, who attended the inauguration ceremony, congratulated the newly elected Patriarch and as a gift presented him a Holy Grail.

The Christian spiritual leaders of Jerusalem, the Deputy Mayor of Jerusalem, Palestinian delegation, along with a number of ambassadors and many other distinguished guests attended the inauguration ceremony.

Archbishop Nourhan Manoogian has been elected the Armenian Patriarch of Jerusalem on January 24. The patriarchal throne remained vacant since the former Armenian Patriarch of Jerusalem Rev. Archbishop Torkom Manoukian passed away after long illness at the age of 93.

Armenia Invited to Join the UN Peacekeeping Mission in Lebanon



Armenia soldiers serving in United Nations peacekeeping forces

YEREVAN — Armenia plans to contribute troops this year to a United Nations peacekeeping force deployed in southern Lebanon, the Defense Ministry in Yerevan said on Tuesday.

"Italy, which leads the UN peacekeeping mission in Lebanon, has officially offered Armenia through the UN to add an Armenian contingent to the mission," the ministry spokesman, Artsrun Hovannisian, told RFE/RL's Armenian service (Azatutyun.am).

"Negotiations are now underway with Italy's Defense Ministry and the UN regarding the structure, deployment site, number of troops, supplies and other issues," Hovannisian said. A

team of Armenian military officials will travel to Rome next week to discuss the issue with their Italian counterparts, he said.

A specialized working group of the Ministry of Defense will leave for Rome next week to continue the negotiations. This will be followed by the visit of the Chief of General Staff of the Armed Forces. Two Armenian peacekeeping platoons are likely to be deployed in Lebanon by the end of the current year.

One Officer of RA Armed Forces has been involved in the UN observa-

Knesset MP: Israel Must Recognize Armenian Genocide

JERUSALEM, ARMENPRESS - "Armenpress" reporter in Jerusalem had a conversation with the leader of Israel's "Meretz" party, member of Knesset Zahava Gal-On regarding the issue of discussions dedicated to the Armenian Genocide recognition in the plenary session of Knesset, organizing open public discussions, and a number of other issues as well.

- The issue of the Armenian Genocide recognition was discussed at the plenary session of Knesset on Your initiative, and a decision was made to pass it to the Knesset Committee. Has the Knesset Committee already decided which Ministry's commission should discuss this issue?


- The issue is still under the consideration of the Knesset Committee. The Knesset Committee has not passed it to any ministerial commission. But next week we shall check it out if it is possible to pass it to the Commission of the Ministry of Education.

We want to clarify if it is possible to organize an open public discussion to invite experts of the realm and representatives of the Armenian Community of Israel. This issue has not been clarified yet.

Two years ago the Knesset passed the Armenian Genocide issue to the Commission of the Ministry of Education, which even managed to organize one public discussion.

- What was the reason for terminating the discussions in the same commission and passing the issue to the Knesset Committee?

- Unfortunately, it's a part of political conjuncture, result of political and state interests of the Israeli Government. At that time the relations between the Israeli Government and Turkey were intense because of the Marmara ship events, hence the Israeli Government permitted the open discussion. Currently, Israel is improving its relations with Turkey and does not want to permit any open discussion, save that in the Knesset plenary ses-



Knesset member Zahava Gal-On

sion. - What are Your expectations regarding the Armenian Genocide recognition in the respect of the restoration of warm relations between Israel and Turkey, which launched two months ago?

- In my opinion the time has come for the Israeli Government to reach an agreement with Turkey, a state agreement, and reconcile with Turkey and not to use the Armenian Genocide issue for political reasons, but to recognize the Armenian Genocide without linking it to its relations with Turkey.

- Can the Armenian Patriarchate of Jerusalem or the newly elected Armenian Patriarch help You regarding the recognition of the Armenian Genocide by the Israeli Government?

- Yes. I find that the newly elected Armenian Patriarch of Jerusalem must have meetings with the incumbent Deputy Minister of Foreign Affairs Ze'ev Elkin and the Prime Minister of Israel and raise this issue before them. They exercise vast influence in the Knesset.

I want to repeat that lobbyist activity is of a certain importance in this issue. We must stand above everything. This must be a moral issue and not an object of political speculations.

Interview by Archimandrite Koryun Baghdasaryan

Armenian FM, US Secretary of State Meet in Washington

Continued from page 1

importance to us: the economic partnership, the development of the economy and strengthening of democracy, and the security of our friends, the Armenian people," Secretary Kerry said.

Armenian Foreign Minister Edward Nalbandian thanked Secretary Kerry for the warm welcome and said it's a pleasure to him to be in Washington.

"Both countries have a good interaction in the international arena covering international regional security, proliferation, fight against terrorism, as you mentioned, peacekeeping operations from Kosovo to Afghanistan, other challenges, who are sharing vision - same vision - that it is important to continue efforts to find exclusively peaceful solution to the Nagorno-Karabakh conflict based on the principles and norms of international law, particularly non-use of force, excessive force, self-determination, territo-

rial integrity who are sharing the vision that the relations between Armenia and Turkey should be normalized without preconditions, who are sharing the same values of democracy, fundamental freedoms, liberty, human rights, market economy, who are very thankful that during the last two decades since our independence, United States extended very important support for Armenia, and we are thankful for that, Minister Nalbandian said.

"I would like to use also opportunity to express our gratitude to the President Obama Administration for remarkable contribution to the strengthening of Armenian-American relations, which are today in their highest point. And I'm sure and confident that with our joint efforts, we could elevate that to new heights. And the trust and understanding between our two countries is - are the best pillars to extend further our relations," the Armenian Foreign Minister said.

Louisiana State Senate Recognizes Independence of Karabakh

Continued from page 1

that the Louisiana State Senate has endorsed Artsakh's freedom and sovereignty," said Permanent Representative of the Nagorno Karabakh Republic to the United States, Mr. Robert Avetisyan. "We are grateful to Senator Murray and everyone who supported and voted for the Resolution. Artsakh will continue to develop as a democratic nation, and support from American legislators reinforces our determination to aim further achievements based on our shared values of human rights and liberties".

The Louisiana State Legislature becomes the fourth state legislative body to recognize the Nagorno Karabakh Republic and ask the United States Administration, along with Congress to support the self-determination and democratic independence of the Nagorno Karabakh Republic. Previous States to do so are Massachusetts, Rhode Island and Maine.

The full text of the resolution is provided below:

"WHEREAS, Nagorno Karabakh, also known as Artsakh, has historically been Armenian territory, populated by an overwhelming majority of Armenians, which was illegally severed from Armenia by the Soviet Union in 1921 and placed under the newly created Soviet Azerbaijani administration; and

WHEREAS, February 20, 1988, marked the beginning of the national liberation movement in Nagorno Karabakh, which inspired people throughout the Soviet Union to stand up against tyranny and for their rights and freedoms, helping to bring democracy to millions and contributing to world peace; and

WHEREAS, the United States Congress has repeatedly expressed support for the legitimate freedom as-

pirations of the people of Nagorno Karabakh; and WHEREAS, on September 2, 1991, the legislature of Nagorno Karabakh declared formation of the Nagorno Karabakh Republic, in accordance with then acting legislation; and

WHEREAS, on December 10, 1991, the people of the Nagorno Karabakh Republic voted in favor of the independence, and on January 6, 1992, the democratically elected legislature of the Republic formally declared independence; and

WHEREAS, since proclaiming independence, the Nagorno Karabakh Republic has registered significant progress in democracy building, which has been most recently demonstrated during the July 19, 2012, presidential elections that were assessed by international observers as free and transparent.

THEREFORE, BE IT RESOLVED that the Senate of the Legislature of Louisiana hereby encourages and supports the Nagorno Karabakh Republic's continuing efforts to develop as a free and independent nation in order to guarantee its citizens those rights inherent in a free and independent society.

BE IT FURTHER RESOLVED that the president and Congress of the United States of America are hereby urged to support the self-determination and democratic independence of the Nagorno Karabakh Republic and its constructive involvement with the international community's efforts to reach a just and lasting solution to security issues in that strategically important region.

BE IT FURTHER RESOLVED that a copy of this Resolution be transmitted to the president of the United States, the secretary of the United States Senate, the clerk of the United States House of Representatives, and to each member of the Louisiana delegation to the United States Congress.

Armenia to Join the UN Peacekeeping Mission

Continued from page 2

tion mission in Lebanon since 2012. Armenia's participation in the UN Interim Force in Lebanon (UNIFIL) requires the consent of its parliament. The Armenian government has yet to approach the National Assembly for that purpose.


The UNIFIL was deployed along Lebanon's border with Israel and the Israeli-controlled Golan Heights in 1978 to maintain peace and stability in the area. The multinational mission cur-

rently numbers around 11,000 troops from over 30 countries, including Italy, Germany and Turkey. Its mandate was broadened by the UN following the 2006 war between Israel and the Lebanese Hezbollah movement.


Hovannisian said that Armenia was offered to join the mission because of its peacekeepers' positive record in other international trouble spots.

Over 130 Armenian soldiers are currently deployed in Afghanistan, while 35 others serve in Kosovo.

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծահասակներու և մանուկներու Քարոզիչութիւնը բուժում: Գլխացաւ, վզի, մէջքի, յոզային և մկանային ցտեր: Ինքնաշարժի վթարի նեոնանթով պատասխան վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

"Lost and Found in Armenia" in Theaters on June 7th



LOS ANGELES -- "Lost and Found in Armenia", starring Jamie Kennedy and Angela Sarafyan, comes out in theaters on June 7th. This is the first Armenian-American movie ever filmed in Armenia, and the majority of the film is in Armenian with English subtitles. We're big fans of the film, its message, and the impact that it can have on the Armenian community.

"Lost & Found in Armenia" is the story of Bill (Jamie Kennedy), an American tourist who vacations to Turkey to get his mind off a bad break up. In a comedic and dangerous turn of events, Bill unknowingly ends up in a small village in Armenia, where he is accused of being a Turkish spy. It is in that small village, he meets a beautiful Armenian girl (Angela Sarafyan), who helps him escape from misfortune.

"Lost & Found in Armenia" is a Red Tie Films production with Award-winning director Gor Kirakosian (Big

Story in a Small City) and award-winning producer Valerie McCaffrey (American History X, Neo Ned) along with Maral Djerejian (Sideways) and starring comedian Jamie Kennedy (Malibu's Most Wanted, Scream) and Angela Sarafyan (A Beautiful Life, The Twilight Saga: Breaking Dawn). Shooting Locations were in San Diego, Los Angeles, and Armenia. Red Tie Films is the first Armenian-American production team to shoot in Armenia.

The film opens throughout Los Angeles at the AMC Burbank 8, Beverly Hills Laemmle Music Hall, and Encino Town Hall 5, it will also be released in Washington, DC, Boston, Detroit, New Jersey / Philadelphia, and Fresno. In addition, it will also be available on VOD the same day nationwide. As with all independent films, it's important to get a strong showing during opening weekend.

Notoriously Violent Governor of Syunik

Continued from page 1

after the incidents, confiscating large amounts of weapons and ammunitions.

Khachatryan did not report for work and switched off his mobile on Monday. "I regret that I could not prevent the tragic incident that took place near my house," he said in a statement posted on the website of Syunik's provincial administration. "An objective inquiry should now answer all questions."

"I have decided to give up my duties of governor until the end of the inquiry and have already received permission from my superior body," he added.

Some media reports claimed that Khachatryan sought a meeting with President Serzh Sarkisian but was snubbed by the latter. Sarkisian's press secretary, Arman Saghatelian, did not confirm or refute those reports.

In Goris, meanwhile, relatives of the Budaghian brothers blamed Khachatryan for the shootings. "This was the result of lawlessness reigning in this town for more than 10 years," one of them told RFE/RL's Armenian service (Azatutyun.am). "At the heart of that lawlessness is the current governor of Syunik. I am convinced that he had a hand in this."

The brothers have reportedly had a tense rapport with Khachatryan and his extended family. Avetik Budaghian, the slain businessman, challenged Goris Mayor Nelson Voskanian, a Khachatryan protégé, in the last local election held in 2010. Budaghian cried foul during that mayoral race.

Local residents approached by an RFE/RL correspondent were clearly too scared to comment on the shock killing,

however. "People are not just scared, they shudder [with fear,]" said one middle-aged man. "Switch off your camera," he said when asked to elaborate.

"Please don't ask me questions," said another, female resident of the picturesque town.

Khachatryan, who is better known in Armenia with his "Liska" nickname, has held sway in Goris and nearby villages ever since the early 1990s. Independent media outlets have long implicated him and his relatives in violent attacks on local business rivals as well as government critics, including a Syunik newspaper editor whose car was set on fire in 2005.

The controversial governor, who is a senior member of the ruling Republican Party of Armenia (HHK), risked dismissal in 2008 as he faced an embarrassing government inquiry into a newspaper report that accused him of beating up a teenage boy. He was eventually cleared of any wrongdoing.

Khachatryan, who was appointed as Syunik governor in 2004 by then President Robert Kocharian, managed to retain his position even after assaulting in a Yerevan hotel lobby in late 2011 a businesswoman who accused him of fraud. Although the incident was captured by a surveillance camera, law-enforcement bodies refused to bring criminal charges against him on the grounds that the woman did not suffer serious physical injuries.

Official results of Armenian elections held over the past decade have shown President Sarkisian and his HHK winning more votes in Syunik than in any other part of the country. Critics say this is the reason why the ruling party has never censured the governor until now.

Meridianian 7th & 8th Grade Students' Trip to the East Coast



From May 4th to May 11th of this year, C. and E. Meridianian Armenian Evangelical School's 7th and 8th grade students accompanied by Principal Lina Arslanian and English and Social Studies Department Chair, Sona Kassardjian as well as seven parents traveled on an educational trip to Washington DC, Philadelphia, and New York. This trip was comprised of some of the most popular sites in United States. Students had the opportunity to visit our Nation's Capital, the many unique historical sites, government buildings, and informative museums. They gained a clearer understanding about how our national government works, and they were able to touch American history through the many attractions they visited.

The tour allowed students to experience the wonder of our Nation's Capital in a fun and exciting way. They explored the National Archives, visited Capitol Hill, Lincoln, Korean, Vietnam, WWII, Jefferson, FDR, Washington, and Iwo Jima Memorials. In addition, they were amazed as they visited the Smithsonian Museums and the National Air and Space Museum. Furthermore, they felt proud as they vis-

ited the many Armenian monuments and memorials that are located in Washington DC as well as ANCA and the Armenian Embassy. They also experienced the unique and awe-inspiring ceremonies at the Arlington National Cemetery as well as the Tomb of the Unknown Soldiers.

Meridianian students were exposed to so many experiences. They had the opportunity to see all the classic destinations in both Washington DC and Philadelphia including the White House, Mt. Vernon, Independence Hall, Congress Hall, Liberty Bell, and the Armenian Genocide Memorial. This trip also included many notable and memorable sites in New York: Grand Central Station, Ground Zero, Central Park, Times Square, Empire State Building, the Statue of Liberty, and Ellis Island.

Students explored the history and the government of the United States. They discovered how our nation came to be and how it operates today. Students had a firsthand experience of the fascinating aspect of our government and our country's infrastructure. In the words of the 7th and 8th grade students, to sum up this trip, it would take just one word: unforgettable!

Dream Fund at UCLA's Contribution to Meridianian School

The Board of Directors, Administration, and Faculty are proud to announce that the Dream Fund at UCLA has made a generous contribution to C. & E. Meridianian Armenian Evangelical School located in Sherman Oaks, CA.

We express our deep gratitude and appreciation to the Dream Fund at UCLA for the assistance that will help Meridianian to continue its mission. The Meridianian School focuses on providing our students with a solid foundation for them to pursue their higher education goals and to grow and develop into successful, responsible citizens.

The Dream Fund was established by what Chancellor Gene Block called "the extraordinarily generous and inspirational gift" from Kirk Krikorian through the transfer of assets of the Lincy Foundation.

Chancellor Block recognized the philanthropic gift as crucial in helping UCLA "... to thrive as a center for transformational research, innovative instruction, and durable and effective community partnerships." The Meridianian School community is pleased and proud to be a part of this initiative.

HayastanInfo.net



Save
Support
Sustain

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948



www.syanarmerianreliefund.org

«ՅՈՒՇԱՍՏԵԱՆԸ» ԿԵՐԱԿԱՆՈՒՄԷ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԻ ԿԵԱՆՔԻ ՊԱՏԿԵՐԸ

ՍՈՒՆԱ ԱԻԱԳԵԱՆ

Լիբանանահայ Վահե Թաշճեանը պատահաբար իմացաւ, որ Սիսում իր պապի հօր տունը դեռ կանգուն է

Գերմանիայում ապրող լիբանանահայ պատմաբան Վահէ Թաշճեանի բարեկամներից մէկը՝ մասնագիտութեամբ հնագէտ, տարիներ առաջ աշխատանքով գնացել էր Սիսու եւ ինչպէս շատ գթասաշրջիկներ, իջեւանել Սիսի միակ բարձրակարգ հիւրանոցում՝ «Շա-

դուրս կու գան, նաեւ իմ ընտանիքս այնտեղից դուրս կու գայ: Ինչ որ աւելի հետաքրքրական է, երբ որ կ'աշխատէի ֆրանսական արխիւներու մէջ (Նանտ քաղաքի մէջ ֆրանսական Կիլիկիոյ բոլոր արխիւները գոյութիւն ունին), գտայ հէնց Գրիգոր Մճրգեանի սպաննողներուն դատական ծրարը: Վահէ Թաշճեան Ֆրանսացիները յաջողած են բռնել այս երկու սպաննողները, ուզած են դատել, բայց յետոյ քաղաքական պատճառներով աւելի յարմար նկատած են բաց թողել»,- պատմում է Վահէ Թաշճեանը:



Սիս. Գրիգոր Մճրգեանի տունը ձախու՛մ տաճարի հէնց ներքեւում

ւերին կոնաք»-ում: Յետոյ բարեկամը Վահէին ցոյց է տուել հիւրանոցի լուսանկարը, թէ նայիր՝ ինչ գեղեցիկ հիւրանոց է, որ ժամանակին ինչ-որ հայի տուն է եղել:

Վահէ Թաշճեանը միանգամից ճանաչել է իր պապի հօր՝ Գրիգոր Մճրգեանի ապարանքը՝ մինչ այսօր կանգուն, հիւրանոց-ռեստորանի վերածուած: Վահէն ասում է, որ ապարանքի լուսանկարը միշտ պահուել է իրենց ընտանիքի արխիւներում. նախնիներն էին բերել Սիսից: Բացի դրանից՝ Սիսի հին լուսանկարներից շատերում երեւում է Գրիգոր Մճրգեանի ապարանքը, քանի որ մարդիկ լուսանկարել են Սիսի կաթողիկոսարանը, եւ ապարանքը, կառուցուած լինելով կաթողիկոսարանի հէնց առջեւում, յայտնուել է լուսանկարներում:

Հիւրանոցում դրուած է ապարանքի լուսանկարը, նոյնիսկ նշուած է տանտիրոջ՝ Գրիգոր Մճրգեանի անունը, բայց ներկայացուած կարճ պատմութիւնը խեղաթիւրուած է:

Հիւրանոցում գրուած է, թէ Գրիգոր Մճրգեանը տունը ժառանգութիւն է թողել իր անդրանիկ գաւակին՝ Խաչիկ Մճրգեանին, ով «տունը 1923թ. վաճառել է այսինչ թուրքին»:

Իրականութիւնը բոլորովին այլ է եղել. Գրիգոր Մճրգեանը լաւ կապեր է ունեցել տեղական «Իթ-թիհատ» կուսակցականների հետ եւ յաջողել է ցեղասպանութեան տարիներին իր տանը մնալ, բայց 1918թ. հէնց այդ կուսակցութեան անդամներից երկու թուրք ապարանքի առջեւ սպաննել են Գրիգոր Մճրգեանին:

«Արդէն 1919թ., երբ ֆրանսացիները եկած են Սիս, մինչեւ 1920 թուականը տակաւին հայկականութիւնը մնացած է անտեղ, եւ միայն 20 թուին է, որ բոլորն ալ

Խաչիկը, ինչպէս եւ Գրիգոր Մճրգեանի միւս բոլոր երեխաները, ծնուել էին այդ ապարանքում: Նրանք բոլորը ողջ են մնացել ցեղասպանութեան ժամանակ եւ գաղթել Կիպրոս, յետոյ Բէյրութ:

«Գրիգոր Մճրգեանի տղան՝ Խաչիկը, որ մեծ հայրս է, 1960-ական թուականներուն կապ հաստատած է իր հին-հին թուրք դրացիներուն հետ, որոնք Սիս կ'ապրէին, եւ գացած է Սիս՝ պարզապէս տունը տեսնելու. տունը լուսանկարած է, վերադարձած է, արդէն քանի մը տարի յետոյ (չգիտեմ՝ պատճառն այդ է կամ այդ չէ, այսինքն՝ սրտնեղութիւն մը ունեցած է) մահացած է արդէն: Այսինքն՝ տունը վերջին անգամ ալ տեսած է, յետոյ մահացած է»,- պատմում է Վահէ Թաշճեանը: Երբ «Յուշաստեանի» կայքում Սիսի բաժինը պատրաստ լինի, Գրիգոր Մճրգեանի, նրա ապարանքի պատմութիւնն ու լուսանկարն էլ հաւանաբար կը տեղադրուեն:

Օսմանեան կայսրութեան հայերը թողել են աւելի քան 300 յուշամատեան

Վահէ Թաշճեանը «Յուշաստեան» ծրագրի մտորէնը եւ գլխաւոր իմբազիրն է: «Յուշաստեան» միութիւնը հիմնադրուել է 2010-ին Բեռլինում եւ ունի աւելի քան 20 անդամ: «Յուշաստեանը» «Օսմանեան հայերի քաղաքների ու գիւղերի կեանքը վերականգնելու նախագիծ» է, որի նպատակն է ներկայացնել, թէ հայերն ինչպէս էին ապրում 1915-ի Ցեղասպանութիւնից առաջ: Այս կեանքի պատկերը վերականգնում է հէնց իրենց՝ Օսմանեան կայսրութիւնում ապրած եւ Ցեղասպանութեան հետեւանքով կամ դրանից առաջ գաղթած հայերի թողած յուշերի միջոցով:

«Յուշամատեանի» հիմնական սկզբնաղբիւրները աւելի քան 300 յուշամատեաններն են, որոնցում վերապրողները, 1920-ականներից սկսած, պատմել են իրենց գիւղի, քաղաքի մասին, ինչպէս նաեւ 19-րդ դարում Պոլսում, Թիֆլիսում սպանած նոյն թեմայով գրքերն են, Պոլսի, Թիֆլիսի, Բաքուի հայկական մամուլը:

Այս աղբիւրների նիւթերի միջոցով «Յուշամատեանը» հետագոտում ու ներկայացնում է Օսմանեան կայսրութեան հայերի պատմութեան բոլոր բնագագառները՝ ընկերային եւ առօրեայ կեանքի պատմութիւն, բարբառներ, գրականութիւն, երգ-երաժշտութիւն, արհեստներ, սոսեր, կրօնական բարքեր, խոհանոց եւ այլն:

«Յուշամատեանը» ձգտում է օգտուել միայն հայալեզու հայկական աղբիւրներից, քանի որ մեծ թերութիւն է համարում օսմանագիտութեան մէջ ընդունուած այն պրակտիկան, որ կայսրութեան հայերի պատմութիւնը յաճախ գրուած է՝ միայն օսմանեան, անգլիական, ֆրանսիական աղբիւրներ գործածելով: Բացի դրանից՝ օսմանագիտութեան մէջ հայերի կեանքը, առօրեան շատ քիչ են լուսաբանուած:

Ցեղասպանութիւնը վերապրածների սերունդները յաճախ «Յուշամատեանին» տրամադրում են հին լուսանկարներ, փաստաթղթեր, ինչպէս նաեւ «Յուշամատեանի» կայքում տեղադրելու համար լուսանկարում նիւթական մշակոյթի այլ իրեր, որոնք նախնիներն իրենց հետ են բերել: Վահէ Թաշճեանի խօսքով՝ իրը կրում է տուեալ ընտանիքի ամբողջ իշողութիւնը, բայց ընտանիքը յաճախ կարող է չզգալ այդ իրի կարեւորութիւնը:

«Անցեալ ամառ կատարեցինք առաջին շրջուն առաքելութիւնը. գացինք Պէյրութ եւ այնտեղ Հայկական համալսարանի հետ գործակցաբար նստանք Պէյրութի հայկական թաղամասի՝ Պուրճ Համուտի դպրոցի մէջ, ժողովուրդին կոչ ըրինք, որ ահաւասիկ «Յուշամատեանի» խումբը եկած է Պեռլինէն, ով որ հին նմոյշ մը ունի, հին իր մը ունի, լուսանկար մը ունի, նօթագրութիւն մը ունի, որեւէ բան ունի, որ իրենց տատիկը կամ պապիկը կամ աւելի նախահայրերը բերած են Օսմանեան կայսրութեանէն, թող տան, մենք տեղոյն վրայ կը լուսանկարենք եւ կը վերադարձնենք տիրոջը»,- պատմում է Վահէ Թաշճեանը:

Արդիւնքում շատ լիբանանահայեր «Յուշամատեանին» պարզապէս նուիրեցին նման իրեր, որոնք այժմ Պեռլինում են: Մարտի 27-ին Պեռլինում՝ Կանաչների կուսակցութեան մշակութային կենտրոնում, բացուեց «Յուշամատեանի» առաջին ցուցահանդեսը, ուր երկու շաբաթ շարունակ ցուցադրուեցին հիմնականում լուսանկարներ, նաեւ որոշ թուով նման իրեր:

«Յուշամատեանը» հետագոտում է ոչ միայն Արեւմտեան Հայաստանի, այլեւ ընդհանրապէս Օսմանեան կայսրութեան բոլոր այն բնակավայրերի (օրինակ՝ այսօրուայ թուրքիայի մաս համարուող արեւմտեան տարածքները՝ Կոնիա, Չմիւռնիա, կամ արաբական նահանգները՝ Պաղտատ, Հալէպ, Երուսաղէմ) պատմութիւնը, որտեղ օսմանեան շրջանում հայեր են ապրել: Մեծ թուով յուշամատեաններ գրուած են ոչ միայն Արեւմտեան Հայաստանում, այլեւ այդ միւս

Շար.ք էջ 18

Հ.Բ.Ը.Ս. ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՍԵԱՆ ԹԱՏԵՐԱՆՈՒՄԸ
Կը ներկայացնէ

ՉԱՐԼԻՆ ՄՕՐԱԲՈՅՐԸ

CHARLEY'S AUNT

Կատակերգութիւն 3 արարով
Հեղինակ՝ Պրեմոն Թոմսոն Բնակարկ՝ Գրիգոր Սարգսեան

ԿԱԼԷ - ԿԻՐԱԿԻ, ՅՈՒՆԻՍ 23, 2013 - Ժամը 5:00-ից, \$50

ՅՈՒՆԻՍ 22-16 - ՅՈՒՆԻՍ 14, 2013 / \$25
Շարք Օրերը Ժամը 8:00-ից Կիրակի Օրերը Ժամը 6:00-ից
Յունիս 22, 29 / Յուլիս 6, 13 Յունիս 30 / Յուլիս 7, 14

Հ.Բ.Ը.Մ. Վաչէ եւ Թամար Մամուկեան Կեդրոն
2495 E. Mountain Street, Pasadena

Գերակայարանը
Այդ Լիպարիտան, Գրիգոր Սիմոնեան, Ռոբէն Հարմանուսեան, Արամ Մորադյան, Արփի Սամուկեան, Թայլին Գալաճաքեան, Հրայր Աճեմեան, Գեորգ Քեչիկեան, Մարթ Աճեմեան, Ալիսոն Քեչիկեան

Տոմարը կարելի է ապահովել
• Հ.Բ.Ը.Մ. Գրասենեակ 626-794-7942
• Ապրիլ Գրաստուն 818-243-4112 • Պերճ Գրաստուն 818-244-3830
WWW.ITSMYSEAT.COM/SATAMIAN

ՀԱՄՇԵՆԱՅԱՅՈՒԹԻՒՆԸ (ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

ԱՐԱ ԱՀԱՐՈՆԵԱՆ

Թուրքիոյ Հանրապետութեան հիւսիս-արեւելքը կամ Սեւ Ծովու հարաւ-արեւելքը ընդգրկող տարածքը, պատմական հաւաստի աղբիւրներու համաձայն, կը կոչուի Համշէն: Հոն բնակութիւն հաստատած հայերուն տրուած է համշէնցի անունը (թրքերէն՝ հեմշինլի), որ կու գայ Համշէն կամ Համամաշէն տարածքաշրջանէն:

Մեծ Հայքի Սվազ, Երզնկա, Էրզրում եւ Արտասան քաղաքներու հիւսիսը գտնուող պոնտական լեռնաշղթայի ծովեզերեայ տարածքը եղած է պատմական Համամաշէնը, Ք. Յ. Տրդ դարու աւարտէն առաջ՝ հանդիսանալով Համամ Ամատունի հայ իշխանին հետեւորդներուն ապաստանած տարածքը:

Համշէն տարածքաշրջանի բնակիչները, ներկայիս կը բաժնուին երկու անջատ համայնքներու: Առաջինին մաս կազմողները կ'ապրին Արեւմտեան Համշէն (Տրապիզոնի եւ Ռիզէլի նահանգներուն մէջ) կը կոչուին հեմշինլի, կը խօսին թրքերէն ու կ'ուրանան իրենց հայկական ծագումը:

Իսկ Արեւելեան Համշէնի (որ առհասարակ կը ներառէ Արտունի նահանգին Հոփիազաւուը) բնակիչները կը խօսին հայերէնի բարբառ մը, որ կը կոչուի Հոմշէնցիա եւ կը դաւանին ունեցած ըլլալ հայկական ծագում: Ասոնք ալ, հեմշինլիներուն նման, ընդունած են մասնատակաւ սիւննի դաւանանքը:

Երրորդ համայնքն մըն ալ համշէնցիներու, որ կը պատկանի Հայ Առաքելական Եկեղեցոյ, հաստատուած է Աբխազիոյ եւ Հարաւային Ռուսիոյ՝ Քրասնոտար մարզէն ներս: Ըստ հաւաստի աղբիւրներու, Քրասնոտարի շրջանէն ներս

արեւելեան շրջանը ու Աճարիոյ սահմանը իր Արտունի նահանգով:

Ջրառատ գետակներ գոյութիւն ունին տարածքէն ներս՝ Սուսա, Սենոզ եւ Չիմիլ, որոնք կ'ուղեկեն ծովեզերեայ շրջանը: Իսկ Ֆորթունա (Ֆորթինա) եւ Սեւ (Ղարա) գետերը իրենց Ջրառատ հոսանքով Համշէնի մեծագոյն գետերը կը նկատուին:

Պոնտական լեռնաշղթան ունի երեք բարձր գագաթներ. Վահան Ամատունիի գերեզմանաքարը, Խաչքար (12926 ոտք կամ 3932 մետր), Վարչամաք (12172 ոտք, Աշտարակ, հիւսիսային Հայաստան, կամ 3711 մետր) եւ Թատոս (11677 ոտք կամ 3560 մետր): Խաչ Գար ձիւնապատ գագաթի ստորոտէն կը հոսի Ֆորթունա «Փորթանիս» գետը ու կ'ուղեկեն մշտադալար շրջանը, թափելէ առաջ Սեւ ծով, Ռիզէ (Աթինա) գաւառի մօտ, ու շրջանը գետին անունով կոչուած է Ֆորթունա Հովիտ, որ եղած է պատմական Համամաշէն կեդրոնը Համշէնի իշխանութեան, այսօրուան Հոփիա եւ Տրապիզոնի միջեւ գտնուած տարածքով: Խաչ Գար լեռան նաեւ տրուած է Փարհալ կոչումը՝ հելլենական Փարիատրէս (Paryadres) պատմական անունէն:

Անասնաբուծութիւնը եւ գիւղատնտեսութիւնը կը կազմեն շրջանի արդիւնաբերութեան կարեւորագոյն մասը: Ծովեզերեայ քաղաքներն ալ, ձկնորսութեան յատուկ ծրագիրներով, կը նպաստեն շրջանի տնտեսութեան:

Արտունի նահանգի Հոփիա քաղաքը այսօր դարձած է Սեւ ծովու հարաւային շրջանի կարեւոր գրաստանը իր ծովեզերեայ բնութեամբ: Իսկ Տրապիզոնի նաւահանգիստն ալ կարեւոր դեր կը խաղայ, զարկ տալով առեւտուրին:



ներու նշուած է 790 թուականը) Մեծ Հայքի Արարատեան, Արագածոտն, Կոտայք եւ Վասպուրական նահանգի Արտաս գաւառէն, Ամատունի տոհմի Ծապուհ իշխանը եւ իր որդին Համամը (Մեծ թուր Ամատունի իշխան Վահանի) արաբական արշաւանքներէն խուսափելով, 12.000 հայ հետեւորդներով, կը լքեն իրենց պապենական կողմը: Ամատունի իշխանները կը գաղթեն դէպի հիւսիս ու կը հաստատուին Պոնտական լեռնաշղթայի հիւսիսը՝ որ մաս կը կազմէր բիւզանդական կայսրութեան: Անոնք կը հաստատուին Խաղտիք գաւառի տարածքին, որուն հելլենական անուանումն էր Թամպուլթ: Խաղտիք գաւառը կը գտնուի Ֆորթունա եւ Սեւ գետերու հովիտէն ներս, ներկայի Տրապիզոնի եւ Հոփիայի միջեւ, Ռիզէ նահանգի շրջան:

Բիւզանդական կայսրութեան հիւրընկալ մօտեցումը Ամատունի տոհմին ընթացք կու տայ

Համշէնի Հայկական իշխանութեան, իսկ իրենց բնակած շրջանն ալ կը կոչուի Համամաշէն, որոշ շրջան մըն ալ մաս կազմելով Տրապիզոնի ժամանակաւոր կայսրութեան:

Համշէնի Հայկական իշխանութիւնը՝ Ամատունի Տոհմին՝ երբեք մաս չէ կազմած հետագային Բագրատունեաց Հայկական թագաւորութեան (885 Ք. Յ.) ու մնացած է իր բարօր վիճակով որպէս վասալ իշխանութիւն բիւզանդական կայսրութեան, նոյնիսկ 1045ի Բագրատունեաց հարստութեան անկումէն ետք, մինչեւ 1071ի Մանազկերտի ճակատամարտը: Հակառակ Սելճուքներու արշաւանքին, հայկական լեռնաշխարհի տարածքին գոյութիւն ունէին անկախ իշխանական տոհմեր, իսկ դրացի վրացական պետութեան համար ալ կարեւոր կը նկատուէր պոնտական լեռնաշղթան՝ բիւզանդական հարստութեան տկարացումին հետեւանքով: Բագրատունիներու մայրաքաղաք Անիի անկումէն ետք (1045), Սելճուքներու եւ ապա թիւրքմէն ցեղախումբերուն (դարա քոյունլու) համար, Լերտասանի մօտ գտնուող Իսպիր քաղաքը դարձած է մասնատակաւ կառավարման կեդրոնը: Իսպիրէն անոնք կը ղեկավարէին Համշէնի տարածքը, զայն հեռու պահելով քրիստոնեայ Հայերէ, վրացիներէ ու Բիւզանդացիներէ:

1489ին Համշէնի իշխանութիւնը վերջնականապէս կը գրաւուի Օսմանեան խուժան բանակին կողմէ հակառակ իր անառիկ բարձունքներուն, իսկ հայագրի վերջին իշխանն ալ Դաւիթ Բ. (Պարոն Դաւիթ) որպէս գերի կ'աքսորուի Իսպիր ուր հետագային կը սպանուի: Այս շրջանին (1497) նաեւ կը մահանայ հայկական մատենագիտութեան ծանօթ պատմագէտ ու բանասէր՝ Յովհաննէս Աբեղայ Համ-

շէնացին:

Համշէնահայութիւնը 16-18 դարերուն

16րդ դարուն Օսմանեան գործերը ոչ միայն պիտի նուաճէին Հայկական լեռնաշխարհը, իր ամբողջութեամբ, այլ նաեւ պիտի գրաւէին դրացի պետութեանց որոշ սահմանային մասեր եւս՝ մանաւանդ Սեւ ծովու հարաւային ամբողջ տարածքը, տիրապետելով Պոնտոսին: Համշէններու եօթը դարերու վրայ տարածուող իշխանական տոհմն ալ պիտի ներառուէր Օսմանեան կայսրութեան տարածքէն ներս:

Համշէնցի հայերը, իրենց դրացի Յոյներուն, վրացիներուն եւ Լազերուն հետ միասին պարտադրուած էին ընդունիլ մահմետական կրօնը: Ծրագրուած կը գործադրուէր կրօնափոխութիւնը քրիստոնեայ փոքրամասնութեանց վրայ, ինչպէս նաեւ անչափահաս պատանիները բռնի կը տարուէին իրենց տուներէն, զանոնք դարձնելու համար Օսմանեան բանակի ենիչէրիներ:

Այս ժամանակաշրջանին, մանաւանդ 1530ական թուականներուն աւելի զգալի դարձաւ Համշէնահայութեան կրօնափոխութիւնը, Խաչ Գարի Հայք. Առաքելական թեմի տկարացումին հետեւանքով: Իսկ 1640ին Համամաշէնի մէջ կառուցուեցաւ առաջին մզկիթը:

Մահմետականութիւնը չզաւանդող Համշէնները փախչելով հաստատուեցան Արեւելք գտնուող Արտունի նահանգը: Իսկ որոշ մաս մըն ալ տարածուեցաւ Օսմանեան կայսրութեան աւելի ապահով վայրերը:

Կրօնափոխութեան պարտադիր այս քաղաքականութիւնը շարունակուեցաւ մինչեւ 19րդ դարու սկզբնաւորութիւնը:

Համշէնահայութեան ներկայ իրավիճակը

Ամատունի իշխանական Տոհմի հետեւորդ հայերը, պատմական Համամաշէն կեդրոնը նկատած էին իրենց հայրենիքը, իսկ ան, Օսմանեան կայսրութեան սահմաններէն ներս գտնուելով, պարտադիր կրօնափոխութեան պատճառաւ կորսնցուցած էր իր հայկական դիմագիծը ու տոհմիկ սովորութիւնները: Այս երեւոյթը աւելի ակնբերեւ դարձաւ 19րդ դարու սկզբնաւորութեան, երբ կրօնափոխ դարձած փոքրամասնութեանց պատկանող երիտասարդներ, ստացած ըլլալով մահմետական կրթութիւն, ծրագրուած քարոզչական արշաւի անցած էին, մանաւանդ Սեւ ծովու հարաւային տարածքաշրջանի քաղաքներէն ներս:

Բայց այս պարագան 1850ական թուականներուն շրջուեցաւ, երբ



Ամատունիներու բերդը Ֆորթունա գետի հովիտին մէջ

այսօր հայութեան թիւը հասած է 800.000ի, ու համշէնցիները տեղւոյն հայկական համայնքէն ներս իրենց անվերապահ մասնակցութիւնը կը բերեն, երբեմն ալ աւանդապահ իրենց սովորութիւններով՝ պահելով հայկական մշակոյթի աւանդոյթները:

Աշխարհագրական Տուեալներ
Համշէնը որպէս աշխարհագրական տարածք, այսօրուայ Թուրքիոյ Հանրապետութեան 4 նահանգներ կը ներառէ: Պատմական Պոնտոսի արեւելեան լեռնաշղթային (Կապադոկիական Պոնտոս) ծովեզերեայ մասը՝ Սեւ ծովու հարաւ-

Տարածքաշրջանը դաշտային խոնավութիւն մը ունի առհասարակ, մշուշապատ բարձունքները օդափոխութեան որպէս վայր կը ծառայեն շրջանի բնակչութեան համար:

Իսկ անձրեւները անխուսափելի են, տարուան կարեւոր մասը կազմելով:

Պատմական տեղեկութիւններ մինչեւ 15րդ դարու աւարտը

Ըստ միջնադարեան պատմիչ Ղեւոնդի կողմէ արձանագրուած տեղեկութեանց, Ք. Յ. Տրդ դարու աւարտէն առաջ (ճշգրիտ թուական որպէս ըստ կարգ մը աղբիւր-

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԶԵՂԻՆԱԿՆԵՐԸ Ե.-ԺԴ. ԴԱՐԵՐՈՒ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ՝ ԲԱՐԵՇ. ԳԵՌՈԳՍԱՐԿ. ՓԱՆՈՅԵԱՆ

ԽԱՋԻԿ ՀԱՆՈՑԵԱՆ

Վերջերս մեծագույն գոհունակություններով և ստացած արժեքներով խիստ արժեքավոր գիրքը, որ պատրաստած է համադրած է Հայ Առաքելական Եկեղեցուց առաջ Սարկալազի գրաբար լեզուի և շարակա- նագիրտության խորունկ ուսում- նասիրություններով վաստակ ունե- ցող, և մեր կողմից առաջնություն, հոյակապ անձնակազմով, թան- կազին բարեկամ՝ Գեորգ Փանոյ- եան:

Հինգշաբթի, Յունիս 20, 2013, երեկոյան ժամը 7:00ին, Փաստի- նայի Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկե- ղեցուց մէջ (հասցէ՝ 2215 E. Colorado, Pasadena), տեղի պիտի ունենայ այս շահեկան և հետաքրքրական գիրքին ներկայացումը և զինե՞ծ- նը:

Ձեռնարկը կը հովանավորէ Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Գեորգ Ս. Յովնան Արք. Տէրտէրեան: Գիրքը պիտի ներկայացնէ մեր գաղութի բազմավաստակ գիտնա- կան-կղերականներէն, հայ եկեղեց- ւոյ շրջուն համայնագիտարան՝ դոկտ. Ս. Զաւէն Ա. Քհնյ. Արզու- մանեան: Այդ օր պիտի երգուին Հայ Առաքելական Եկեղեցուց գո- հար շարակալներ, ներկաներուն հոգեւոր մեծ բաւարարութիւն պար- գեւելով:

Այս հատորը հեղինակին երկ- րորդ ուսումնասիրութիւնն է, որ նուիրած է շարակալագիտութեան: Առաջին գիրքին նման՝ այս հե- տաքրքրական հատորը, հեղինակը նուիրած է իր թանկագին կողակ- ցին՝ ֆրանսերէն լեզուի ուսուցչու- ՚հի՝ երգչուհի և տաղանդաշատ նկարչուհի՝ ողբ. Լուսի Փանոյեանի քաղցր յիշատակին:

Հատորի մուտքին, հեղինակը զգացուած շնորհակալութեան խօսք մը դրած է, իր խորին շնորհակա- լութիւնը յայտնելով իր քեռայ- րին՝ Սրկ. Մարթայեանին (Նիւ Եորք), հոգեւոր և աշխարհիկ երաժշտութեան մեծանուն մասնա- գէտ, մանկավարժ, «Լարք» Երաժշ- տանոցի ղեկավար՝ Վաչէ Պարսում- եանին, բազմավաստակ, մտաւորա- կան-հոգեւորական Դոկտ. Տէր Զա- վէն Ա. Քհնյ. Արզումանեանին, երաժշտ.՝ Գրիգոր Փիտէճեանին, հայերէն հին երգերու մասնագէտ՝ Պետրոս Ալահայտոյեանին, Առաջ- նորդարանի պաշտօնեաներէն՝ Հայկ Մատոյեանին, Մ.Ս.Լ.Ա. գրադարա- նի պատասխանատուներ՝ Նորա Աւետեանին և վաստակաշատ գրա- դարանավարուհի՝ Սիլվա-Նաթալի Մանուկեանին: Այս բոլոր մասնա- գէտներու համախառն և ման- րակրկիտ սրբագրութեանց և վե- րանայումի արգասիքն է այս հա- տորը:

Հայ ժողովուրդը պետականօ- րէն առաջին քրիստոնեայ ժողո- վուրդը ըլլալով, խորապէս կապ- ուած է այս կրօնին հիմք հանդի- սացող Ս. Գրիգին և 1700 տարիէ ի վեր իր կեանքը իմաստաւորած է Սուրբ Մատեանով և հայ եկեղեցի- ու:



Փակագիծ մը բանալով յի- շենք, թէ Աստուածաշունչ Ս. գիրքը գրուած է մօտ 1600 տարիներու ընթացքին: Քրիստոսէ առաջ 1500 թուականէն սկսեալ, մինչեւ՝ Քրիս- տոսէ ետք 100 թուականը: Այնպէս որ Աստուածաշունչը 3500 տար- ուայ կեանք ունի:

Ս. Գիրքը բաղկացած է 66 գիրքերէ՝ (18 պատմական, 5 բա- նաստեղծական, 18 մարգարէական, 4 աւետարանական, 21 նամականի):

Ս. Գիրքը ունի 1,189 գլուխ. 41,173 համարներ: Աստուածաշուն- չը գրուած է 45 անձերու կողմէ՝ թագաւորներ, մտաւորականներ, փի- լիսոփաներ, դպիրներ, մաքսաւոր- ներ, բժիշկներ, իրաւաբաններ, և այլն:

Աստուածաշունչը զանազան անձերու կողմէ գրուած ըլլալով և 1600 տարիներու ընթացքին մշակ- ուած ըլլալով հանդերձ, ունի սքան- չելի միաբանութիւն մը, ներդաշ- նակութիւն մը և համերաշխու- թիւն մը:

Ս. Գիրքը եղած է աշխարհի ամենէն շատ կարդացուած գիրքը: Թարգմանուած է 1,659 լեզուներու և ամէն տարի 30 միլիոն օրինակ կը տպուի այս գիրքէն:

Հայ ժողովուրդի քրիստոնէա- կան հաւատքին այսքան խորունկ կապուելուն մէջ, մեծ դեր ունեցած են անշուշտ Ս. Գիրքը, մեր եկեղեց- ւոյ Ս. Պատարագը ու մանաւանդ ՀԱՅ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ:

Ինչպէս որ հեղինակը արդա- րօրէն ըսած է գիրքին մէջ, «Հայ ժողովուրդը իր միտքը, իր զգա- ցումները և հոգեկան աշխարհի խառնած է շարակալներուն մէջ և

ԳՏՆՈՒԱԾ ՕՐԱԳՐԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

ՄԵՐՈՒԺԱՆ ՏԷՐ-ԳՈՒԼԱՆԵԱՆ

Դանդաղ, անկատելի շարու- նակում էր բացուել տալգայի լու- սաբացը, և յամառօրէն տարա- ծուող ջրիկ լոյսի մէջ մենք բոլորս գունատ էինք և անքնութիւնից ճմուլթուած: Գունատ էին նոյնիսկ խարոյկի բոցերը: Ոչ մի մեքենայ այդպէս էլ դեռ չէր յայտնուել: Եւ մենութեան, լքուածութեան զգա- ցողութիւնը, ինչպէս որ մարդը թերեւս կարող էր ունենալ տիե- զերքում յայտնուելիս, մեզ մղում էր խմել երրորդ բաժակ կոնիակը:

- Այո,- ճակատը շփելով՝ իր կիսատ խօսքը շարունակեց Նիկո- լայ Վասիլեւիչը,- եթէ ապագայի տեսիլքը յստակ չէ, կորցնում ես նաեւ անցեալը, և եթէ քո թուաց- եալ մոռացող անցեալից եկող օրէնքների ամպրոպը շարունակ չի ուղեկցում քեզ, որոնք քնած են հին գրքերի մէջ, ուրեմն դու երբէք էլ չես տեսնի լուսաւոր հանգրուանի ճանապարհը և չես կարողանայ ձեւակերպել անցեալը:

Նա բարձրացրեց բաժակը, և մենք երեքով նորից շրխկացրինք, բայց նրա բաժակը նորից չզրնգաց: Եւ Ռեզոն ու ես այս անգամ բոլորովին էլ չզարմացանք, որով- հետեւ արդէն տեղեակ էինք, որ նա ապրում է մեզ գուզահեռ աշխար- հում: Նիկոլայ Վասիլեւիչը խմեց իր բաժակը, և նրա աչքերում լուսաւոր կայծեր յայտնուեցին, գուցէ խարոյկի բոցերի արտացո- լանքն էր՝ չզիտեմ, բայց նրա հայեացքը զարմանալիօրէն կեն- դանացաւ:

- Ես Ռուսաստանի ամենամե- նակ մարդն եմ, ես գիշերներով թափառում եմ մարդու կողմից

դեռ չպղծուած անտառներում և փնտռում եմ լուսնային հարսին, որը Աստուծոյ նշանն է ու թաքուն ապրում է ինչ-որ ծառի տակ, աւելի շողշողուն է, քան ադաման- դը: Եւ չվախենալով կայծակների ձայնից՝ սարսափում է խօսքից կեղծաւոր և անմիջապէս գունա- թափում՝ հեռանալով մի այլ աշ- խարհ. չէ՞ որ գուզահեռ աշխարհ- ները շատ են:

Ծանր կօշիկներով և քրքրուած ուսապարկով մեր տա- րաշխարհիկ գրուցակիցը, որն իրեն անուանել էր Նիկոլայ Գոգոլ, մեզ պարզեց իր՝ դեռեւս չիմած բաժա- կը և ասաց.

- Լոյսը բացուեց, իմ գնալու ժամն է, բայց գնալուց առաջ ուզում եմ մի բան ասել՝ ձեր և ձեր ժողովուրդների կեանքերում, ինչ- պէս իմ ժողովրդի կեանքում, միշտ էլ կը յայտնուեն պատահապաշտ առաջնորդներ, որոնք լինելով ըն- դամէնը նախասնեակներում՝ կը խօսեն հիւրասնեակների ու ննջա- րանների մասին անգամ և կ'ասեն, որ իրենք գիտեն բոլոր հարցերի պատասխանները, որ իրենք տեսել են ապագան, գտել են ճշմարտու- թիւնը... Խնդրում եմ, մի՛ հաւատա- ցէք:

Նա մի պահ լռեց, չետոյ, ձեռքերը խարոյկի վրայ տաքաց- նելով, շարունակեց.

- «Մի՛ հաւատացէք պատահա- պաշտներին, այլ հետեւէ՛ք նրան, ով ոչ թէ յայտարարում է, թէ գտել է, այլ ով ազնուօրէն ասում է, որ փնտռում է, և ձեզ էլ հրաւիրում է փնտռել իր հետ միասին, ինչպէս որ ես հիմա գնում եմ փնտռելու լուսնային հարսը իմ Ռուսաստանի համար...»

անոնց միջոցաւ աղօթած է առ Աստուած, ե՛ւ իր ուրախութիւննե- րուն, տխրութիւններուն, յաջողու- թիւններուն ե՛ւ տառապանքներուն ժամանակ»:

Այս հատորով, Բարեշ. Գեորգ Սրկ. Փանոյեան մեզի կու տայ մօտ հազար տարուան կեանք ունեցող՝ հինգերորդ դարէն մինչեւ տասն- չորրորդ դար շարակալներու հե- ղինակները: Իւրաքանչիւր շար- ակալի կանոնները, առանձնապա- րուցութիւնը: Իւրաքանչիւր շարա- կալի խմբաւորումը: Արդարեւ, շարակալագիտութեան շատ խրթին ըլլալով հանդերձ, հեղի- նակը շատ պարզ ոճով և ընթեր- ցողին հասկնալի բացատրութեամբ կու տայ իւրաքանչիւր հեղինակի պատկանած շարակալը և կը պար-

զաբանէ այդ գործը, հոգեւոր մեծ հաճոյք պատճառելով ընթերցո- յին:

Այս գիրքը հաճոյքով կարդա- լէ և փակելէ ետք, կը հիանանք Գեորգ Սրկ. Փանոյեանի այս գոր- ծին վրայ, որքան ժամանակ ճիգ դրած է այս հատորի պատրաստու- թեան համար, որպէսզի հայ ժողո- վուրդը, հայ շարակալներուն խո- րունկ ծանօթութեամբ, անդրա- դառնայ, թէ ինչպիսի մեծ հարս- տութեան տէր է ան, և արժեւորէ զայն:

Ձերմօրէն կը շնորհաւորենք մեր շատ սիրելի «Մշակ Առանց Ամօթոյ», Գեորգ Սրկ. Փանոյեան այս աստուածահաճոյ գործին հա- մար, մաղթելով անոր նորանոր հատորներ:



Վշտեւեցէ՛ք Pasadena Lunette Optical

Մէկ Յետդուրիւն
Երջանակ եւ ապակի՝
\$40.00

2 Յետդուրիւն
Երջանակ եւ ապակի՝
\$60.00

Առաջ գիծի
հետու եւ մետիկ
Երջանակ եւ ապակի՝
\$100.00

Ձեր բոլոր ակնոցի
կարիքներու կեդրոնը

CALL (626) 791-8844

Washington Medical Blvd.
2595 E. Washington Blvd. (at Altadena)
Suite # 105 A
Pasadena, CA 91107

Store Hours:
Monday 9am - 12pm
Thursday 2pm - 5pm

(818) 757-1211

massispost.com
daily news updates

72,000 ՏՈՒՆ ԿՐ ԶԱՒԱՔՈՒԻ «ՍԱՅԱԿ-ՍԵՍՐՈՊ»Ի ՏԱՐԵԿԱՆ ՅՅՐԴ ԵՎՇԿԵՐՈՅԹԻՆ



ՍՕՆԱ ՊԱՏԱԼԵԱՆ

Կիրակի Մայիս 5ը ուրախութեան եւ խնդութեան օր էր Սահակ-Մեսրոպ Հայ Քրիստոնէայ վարժարանի ընտանիքին համար, նկատի ունենալով, որ կրթական հաստատութիւնը բոլորած էր իր 33րդ տարին: Ծնողներ, բարեկամներ կը փութային «Փալատի» շքեղ սրահը, որուն մուտքին կային յայտնի արուեստագէտ Գագիկ Մանուկեանի իւղանկարները եւ հայկական ոճով զարդարուն առարկաներու վաճառք:

Ճաշկերոյթի յանձնախումբի փոխատենագետուհի՝ Սօսի Աստուրեանի բարի գալուստի խօսքերով բացուած յայտարարուեցաւ օրուան ձեռնարկը: Ան ողջունեց ներկաները դպրոցիս հիմնադրութեան 33րդ տարեդարձին առիթով շեշտելով, թէ՛ վարժարանը աննկուն կամքով եւ զօրաւոր հաւատքով կրցած է դիմազրաւել դժուարութիւններ՝ շարունակելով ջամբել հայեցի եւ քրիստոնէական կրթութիւն:

Ապա, երկու հանդիսավարներ Տենի Կէօզիւպէոյի քեան («Սահակ-Մեսրոպ» վարժարանի ընկերակցութեան ատենագետ) եւ Ռիթա Լամպաճեան («Սահակ-Մեսրոպ»ի շրջանաւարտ), ձեռնհասօրէն վարեցին յայտագիրը:

Ամերիկեան եւ հայկական քայլերգները երգուեցան Կարօ Սիւլահեանի կողմէ: Բացման աղօթքը կատարեց վարժարանի շրջանաւարտ պատուելի Հայկ Տարաքճեան, որ երիտասարդաց հովիւն է Միացեալ Հայ ժողովական եկեղեցւոյ:

Համադամ ընթրիքը ճաշակելէ ետք, հանդիսատեսները առիթը ունեցան վայելելու ճրգ դասարանին կողմէ անգլերէն բանաստեղծութիւններու կատարումը, որուն յաջորդեց հայկական պար մը՝ կատարողութեամբ վարժարանի խումբ մը հեղաձուլուն աղջիկներու, առաջնորդութեամբ Աստղիկ Սիւնանեանի:

Հայկական դասական եղանակներով եւ երգերով հանդէս եկաւ «Ջանգիլար» խումբը՝ մասնակցութեամբ տէր եւ տիկ. Արտաշէս

եւ Ժաննա Սիւնանեաններու եւ իրենց դստեր՝ Անի Սիւնանեանի, ինչպէս նաեւ Նեկտարինէ Զիլեանի:

Օրուան պատգամը փոխանցեց իրաւաբան Կարօ Ղազարեան, որ խօսեցաւ հայաշունչ եւ հայրենասիրական ոգիով տոգորուած: Ան յայտնեց իր հպարտութիւնը, իբրեւ հայ ազգի պատկանող անձ մը եւ ներշնչեց ներկաները, որ բարձր պահեն իրենց հայ ոգին, հաւատքը, սէրը եւ յոյսը՝ հանդէպ Աստուծոյ եւ հայ ազգին՝ վեր պահելով նաեւ հայկական դպրոցին կարեւորութիւնն ու դերը:

Պահն էր շնորհակալական խօսքեր ուղղելու. անոնց թարգմանը հանդիսացաւ դպրոցիս տնօրէն Յովսէփ Ինճէճիքեանը: Ան սրտագին շնորհակալութիւններ յայտնեց դպրոցի բարերարներուն, հոգաբարձական կազմին, ծնողական միութեան, ուսուցչակազմին եւ պաշտօնէութեան, իրենց տքնաջան աշխատանքին համար. անոնք միշտ նեցուկ կանգնած են բարոյապէս եւ նիւթապէս՝ սատար հանդիսանալով մեր դպրոցի բարելաման:

Հանդիսավարները խրախուսեցին ներկաները, որ իրենց սրտաբուխ նուէրներով բարելաւեն դպրոցիս տնտեսական վիճակը: Ներկաներուն գործակցութեամբ, բարերարներու կողմէ նուիրատուութիւններ կատարուեցան եւ այսպիսով գոյացուցինք 72,000 տոլարի հասոյթ մը:

Յայտագրի աւարտին Գ. դասարանի աշակերտները հայրենասիրական ոգիով երգեցին երկու հայերէն երգեր՝ առաջնորդութեամբ Սիւնանեան ամուլին, խանդավառելով ներկաները:

Օրուան յայտագիրը հասաւ իր աւարտին Ս. Սարգիս եկեղեցւոյ հովիւ Խորէն քհնյ. Պապօշեանի Պահպանիչով:

Ներկաները գոհունակ սիրտով բաժնուեցան սրահէն՝ դարձեալ համոզուած ըլլալով հայ դպրոցի կարեւորութեամբ՝ հայրենիքէն հեռու այս օտար ափերուն վրայ, ուր աշակերտները կը դաստիարակուին արդարացնելով դպրոցիս առաքելութիւնը՝ ըլլալ տիպար հայրերի եւ քրիստոնէաներ:

«ՅՈՎԱՏՓԵԱՆ» ՎԱՐժԱՐԱՆԻ ԱՇԿԵՐՏՆԵՐՈՒՆ ԶԱՆԴԻՊՈՒՄԸ ԵՐԿՈՒ ՅԵՂԻՆԱԿՆԵՐՈՒ ՅԵՏ



«Յովսէփեան» վարժարանի աշակերտները Մայիս ամսուան ընթացքին հաճելի հանդիպումներ ունեցան իրենց նախասիրած երկու հեղինակներու հետ: Առաջին հերթին, վարժարան այցելեց մեր աշակերտներուն կողմէ սիրուած մանկապատանեկան գիրքերու հեղինակ Ալիք Աղպապեանը: Ալիքին գիրքերը իբր արտադասարանային ընթերցանութիւն կը սահմանուին մեր նախակրթարանի աշակերտներուն համար: Դ. կարգի աշակերտները կ'ընթերցեն անոր հեղինակած «Մալապատիկ» գիրքը, որ մեր մայր գաղութի՝ Հայկալի մէջ ապաստան գտած ու Յեղասպանութենէն ճողոպրած հայ մամիկներուն, պապիկներուն եւ որբերուն առօրեայ կեանքը կը ներկայացնէ, լուսանկարիչ Վահան Տէրունեանի ոսպնեակով նկարուած պատկերներու ընդմէջէն: Աշակերտը սոցն գիրքով կը ծանօթանայ հայ ժողովուրդին ապրելու եւ գոյատևելու զօրաւոր կամքին եւ անպարտելի ոգիին: Աշակերտը նաեւ կը գիտակցի, թէ՛ վերապրող հայերը համագործակցութեամբ կրցած են դիմազրաւել իրենց բոլոր դժուարութիւնները:

Մեր վարժարանի Դ. կարգի աշակերտները անակնկալ մը ներկայացուցին հեղինակին այցելութեան օրը, երբ անոնք գիրքէն ընտրելով երկու պատկերներ՝ գանոնք ներկայացուցին իբրեւ «կենդանի պատկեր»ներ, իւրաքանչիւրը նկարներուն մէջ տեղ գտած անձի մը դերը ստանձնելով եւ անոր ապրումներն ու պատգամը փոխանցելով: Հեղինակը, իր կարգին, աշակերտներուն փոխանցեց իր գիրքի հրատարակութեան դրդապատճառը՝ հայ աշակերտը իրագոյն դարձնել մեր նախահայրերուն ցուցաբերած աշխատասիրութեան, հայ մշակոյթին եւ գրականութեան հանդէպ տածած սիրոյն ու յարգանքին մասին, որոնց շնորհիւ կրցած ենք գոյատևել Սփիւռքի մէջ: Աշակերտները նաեւ առիթը ունեցան գիրքին մասին իրենց ունեցած հարցումներուն պատաս-

խանները ստանալու հեղինակէն: Երկրորդ հանդիպումը՝ մանկապատանեկան անգլերէն գիրքերու սիրուած հեղինակ ձանձթ Թաշճեանին, անոր որդիին՝ ձեքին, եւ վարժարանիս Դ.-Ը. կարգերու աշակերտներուն միջեւ տեղի ունեցաւ: ձեք գիրքերուն գծագրիչն է, իսկ ձանձթը հեղինակն է «My Life as a Book» շարքին: Մայր ու որդի հետաքրքրական եւ ուշագրաւ ձեւերով ներկայացուցին իրենց գիրքերը եւ գանոնք գրելու շարժառիթներուն մասին արտայայտուեցան: ձանձթը ներշնչուած է իր գաւակին նոր բառեր ընկալելու եւ իւրացնելու ոճով եւ գայն օգտագործած է իր գիրքերուն մէջ, ուր դժուար բառերուն իմաստները գտնելու համար բառարան գործածելու պահանջը չկայ, որովհետեւ լուսանցքներուն վրայ անոնց իմաստները գծագրութիւններով բացատրուած են: ձանձթի հեղինակած գիրքերը մեր նոր սերունդին սրտին մօտիկ թեմաներ կ'ընդգրկեն: Ամէն գրող, հաճելի ժամանց եւ ընթերցանութեան գոհունակ պահեր տրամադրելու կողքին, կ'ուզէ դաստիարակել եւ աշակերտներուն բառապաշարը զարգացնել: Մայր ու տղայ այս գոյգը յաջողած է հարուստ բառացանկով եւ պարզ ու ընկալելի գծագրութիւններով ճոխացնել իր վէպերը: Այս նորարարութիւնն է, որ մեր աշակերտներուն մօտ աւելիով հետաքրքրութիւն ստեղծած է սոցն հեղինակին շուրջ, որուն գիրքերը շատ մեծ հաճոյքով կ'ընթերցուին: Հեղինակն ու գծագրիչը բացատրութիւններ տուին իրենց գիրքերը պատրաստելու եւ հրատարակութեան յանձնելու գործընթացին մասին: ձեքը աշակերտներուն համար խաղ մը կազմակերպեց եւ անոնց դիմաց գծելով՝ անոնց առիթ տուաւ կուսակցու գծուած բառերը: Հանդիպման աւարտին, աշակերտները գնեցին օրինակներ ձանձթին հեղինակած գիրքերէն եւ առիթը ունեցան հեղինակին եւ գծագրիչին կողմէ մակագրել տալու գանոնք:

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

OFFICE SPACE FOR RENT
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով ՅետաքրքրուողներԸ
հեռաձայնել՝ (626) 398-0506

ՍԻՆ ՊԱՏՐԱՆՔՆԵՐՈՒ ԵՒ ԴԱԺԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ

Շարունակում է՞ք 8-էն

պիտի գրէք, թէ Հայաստանն Անգլ-իայի գոհն եղաւ»:

Հայրենի պատմաբան Մհեր Կարապետեան իր. «Հայաստանը 1912-1920 թուականներին» (2003, Երեւան) հատորին մէջ կը գրէ. «Սակայն տասնամեակներ անց նոյն Ս. Վրացեանը Պէյրուսթում խորհրդահայ նշանաւոր արուեստագէտ Ռուբէն Զարեանի հետ գրոյցի ժամանակ պիտի անհուն արտասանքով խոստովանէր, որ եթէ իրենք խորաթափանց լինէին եւ իշխանութիւնը պոլշեւիկներին յանձնէին դեռեւս 1920 թ. Մայիսին, ապա խորհրդային Հայաստանի ներկայիս տարածքը կրկնակի աւելին կը լինէր: Ե՛, ինչ ըսեմ, ինչպէս արդարանամ», - հոգոց է հանել նախկին վարչապետը (Հայաստանի Հանրապետութեան օրաթերթ, Ռ. Զարեանի յուշերը, 24. 11. 1993): Իսկ հմուտ պատմաբան Մակիչ Արզումանեան կը նշէ. «Արեւմտեան օրիենթալոգիային հաւատարիմ դաշնակցական կառավարութիւնը չուզեց նոր ուղի բռնել եւ դրանով թոյլ տուեց ճակատագրական սխալ, որը մեծ վնաս հասցրեց հայ ժողովրդին»: Եւ այսպէս, ինչ որ 1920 Մայիսին չյաջողեցաւ, պիտի յաջողէր մի քանի ամիսներ ետք, Նոյեմբերին, եւ ապա 1921 Փետրուարին, անշուշտ յումպէտս մեծ կորուստներու գնով:

բ) Սեւրի դաշնագիրը ուղղակի գինովցուցած էր օրուան քաղաքական ղեկավարները, որոնք առանց նկատելու անոր սին պատրանք ըլլալու հանգամանքը կը բացատրէին ամէն իրապաշտ երկխոսութիւն անմիջական հարեւաններու հետ: Հայաստանի Հանրապետութեան առաջին վարչապետ Ալ. Խատիսեան կը գրէ. «Սահմաններու վերաբերեալ հայ ժողովուրդը՝ յանձինս իր ղեկավար շրջանակներուն, մեծ սխալ գործեց, չափազանց մեծ պահանջներ առաջադրելով, առանց հաշուի առնելու իր ուժերը: Մենք մինչեւ Կիլիկիա պահանջելով, անկարելի դարձուցինք որեւէ տրամաբանական համաձայնութիւն ոչ միայն թուրքերուն հետ այն պահուն, երբ անոնք տկար էին եւ անոնց հետ դեռ կարելի էր խօսիլ, այլ՝ նաեւ շահագրգիռ մեծ պետութեանց հետ (Հայաստանի Հանրապետութեան Մագոսթան Ու Զարգացումը, Պէյրուսթ, 1968, էջ 151): Իր հերթին հայրենի խորագրիտակ պատմաբան Գալուստ Գալոյեան կը գրէ. «Սեւրի պայմանագրի նկատմամբ ունեցած խանդավառ ոգեւորութիւնը Հայաստանի կառավարողներին մղել էր Ռուսաստանի դերի թերազնահատմանը Հայ դատի լուծման խնդրումը»: (Հայաստանը Եւ Մեծ Տէրութիւնները 1917-1923 թթ., Երեւան, 1999, էջ 286):

1920-ի կէսերուն, թուրքերու իրողական ղեկավարը Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքն էր: Անոր գլխաւոր մտահոգութիւնը Դաշնակիցներու դէմ պատերազմն էր, որոնց հակազուրկին տակ կը գտնուէին Պոլիսը, Զմիւռնիան, Կիլիկիան. յունական զօրքը Անգլիոյ համեմատութեամբ կ'ողողէր Անգարա խեղդելու քեմալական շարժումը: Քեմալ կը պատրաստուէր նաեւ պատերազմելու ֆրանսական եւ հայկական ուժերուն դէմ Կիլիկիոյ

մէջ. ուրեմն՝ խիստ վտանգուած էին արեւմտեան եւ հարաւային ճակատները: Ուստի ան շահագրգռուած էր ապահովելու արեւելեան սահմանները. արդէն խորամանկօրէն ապահոված էր խորհրդային Ռուսաստանի գինակցութիւնը, չէզոքացնելով ռուսական վտանգը. կը մնար հաշտութեան եզր մը գտնել Հայաստանի Հանրապետութեան հետ:

Այս առումով խիստ ուշագրաւ վկայութիւն մը ունի Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանի նախագահութեան անդամ, Հ.Յ.Դ.-ի գործիչ, բանասէր Յակոբ Տէր Յակոբեան (Իրազեկ). ան Պոլսոյ մէջ 1921-ին հրապարակած է. «Հայաստանի վերջին Աղէտը», փոքրածաւալ, բայց յոյժ կարեւոր գիրքը, որ զարմանալիօրէն վրիպած է շատերու աչքերէն: Էջ 18-ին եւ 19-ին մէջ ան կը գրէ. «Թուրքերը միլի շարժումը ստեղծած էին անգործութեան մատնելու համար յաղթական Եւրոպայի պարտադրելիք հաշտութեան դաշինքը: Եւ որովհետեւ ինչ որ գէնքով կարելի է ձեռք բերել, նախապատիւ է միշտ դիւանագիտութեամբ շահիլ, անոնք ճշտողական մասնակի միջոցներով եւ Մոսկուայի հետ իրենց համաձայնութիւնով, կը յուսային մեղմացնել հայոց մոլեռանդ համաձայնասիրութիւնը:

Ուստի, մէկ կողմէ երբ պոլշեւիկներն ու ազերիները կը ճնշէին Հայաստանը, ինքը, Քեմալի կառավարութիւնը շարունակելով հանդերձ հայկական սահմանին մէջ թուրքերն ու քիւրտերը գրգռելու եւ գինելու իր քաղաքականութիւնը, կը ջանար դիւանագիտութեամբ ալ գործել:

Իր նպատակն էր Հայաստանը շահիլ եթէ կարելի է առանց արիւնահեղութեան եւ նոյն իսկ յանձնառու էր իր յաւակնութիւններէն գիջումներ ընել, որպէս զի Հայաստան բաժնուի Դաշնակիցներէն եւ եթէ բարեկամ ալ չըլլայ, գէթ բարեացակամ եւ վստահելի չէզոք մը դառնայ: Քեմալ երկու պատուիրակներ կ'ողողակէ Երեւան բանակցելու համար. Այս պատուիրակները մէկ պայման ունէին հայոց համար.- Մերժել Սեւրի դաշնագիրը եւ Հայաստանի սահմաններուն մասին պայմանագիր մը կնքել:

Անոնք կ'առաջարկէին սա տեսակ սահման մը. Երեւանեան հանրապետութիւնը պիտի ընդարձակուէր դէպի վան եւ անկից դէպի հիւսիս բարձրանալով պիտի հասնէր Սեւ Ծով ուր Բիզիկ նաւահանգիստը պիտի թողուէր հայոց, սակայն էրզրում քաղաքը պիտի մնար Թուրքիոյ: Հայկական կողմը շլացած Սեւրի սահմաններով, կը պնդէ էրզրումի վրայ: Ապա՝ Թուրք պատուիրակները երկար փաստաբանեցին իրենց պահանջը: Պնդեցին թէ Հայաստան կրնայ ըլլալ որ զղջայ, թէ Համաձայնականք հակառակ խոստումներու ռեւէ իրական օգնութիւն չեն ընձեռեր, քանի որ քանիցս յայտարարեցին, թէ չեն կրնար գոհողութիւն ընել ուրիշներու համար, թէ հայերը խորհրդային Ռուսաստանն ալ իրենց թշնամի դարձուցած են պոլշեւիկներու դէմ հարձակումով, եւ թէ Ռուսիա եւ Թուրքիա իբր երկու դաշնագիր կողմեր, երբ սեղմեն Հայաստանը երկու կողմէն, այն ատեն, փճացումը վերջնական պիտի ըլլայ:

Այս բոլոր պատճառաբանու-

թիւնները, որքան ալ ճշդութիւններ պարունակէին, չէին կրնար իր գոյութեան երիզը Դաշնակիցներու գլխին վրայ դնող հայութիւնը տարհամոզել եւ հեռացնել զայն իր երկարամեայ քաղաքականութենէն, որ էր միշտ քաղաքակիրթ Եւրոպայի հետ ըլլալ եւ իր ճակատագիրը կապել անոր անիւին:

Ահա թէ ինչո՞ւ թուրք պատուիրակները մեկնեցան Երեւանէն իրենց հետ տանելով բացարձակ մերժում:

Նոյն էջի տողատակին կը կարդանք հետեւեալ խիստ հետաքրքրական տեղեկութիւնը. (Այս բանակցութիւնը թէեւ զաղտնի մնացած է, սակայն Երեւանի խորհրդարանին Նոյ. 11-ի նիստին մէջ խնդրոյ առարկայ եղած է):

Ինչո՞ւ խորհրդարանը ուշ իմացած է այս մասին. ինչո՞ւ այդ բացայայտուած է, երբ թրքական զօրքերը գրաւած էին Կարսը, եւ կ'արշաւէին Ալեքսանդրապոլի ուղղութեամբ: Ինչո՞ւ օրին այս ընտրանքը մերժուած է. ո՞վքեր հայաճեպօրէն եւ առանց խորհրդարանի քննարկումին փակած են բաւականին ձեռնտու այս թղթածրարը: Կը պատկերացնէ՞ք առաջարկուած քարտէզին տարողութիւնը բաղդատած այժմու Հայաստանին: Սակայն հայկական զոյգ պատուիրակութիւնները (գլխաւորութեամբ Պօղոս Նուպար Փաշայի եւ Աւետիս Ահարոնեանի) Փարիզի խորհրդաժողովին կը պնդէին նաեւ էրզրումի վրայ առարկելով որ առանց էրզրումի հայերը գոյութիւն չեն կրնար ունենալ: Իսկ Անգլիոյ վարչապետ Լոյս ձորձ կը պատասխանէր. «Եթէ Հայաստանը չի կարող գոյութիւն ունենալ առանց էրզրումի, հայերը չեն կարող գոյութիւն ունենալ առհասարակ: Տէրութիւնները չեն կարող վերցնել այն եւ յանձնել նրանց, իսկ նրանք էլ իրենք չեն կարող վերցնել»:

գ) Հայկական կողմը միջազգային դիւանագիտութեան բարձր ասպարէզ կը ներկայանար երկզլխանի կարգավիճակով: Փարիզ մէկտեղուած հայկական պատուիրակութիւնը ունէր երկու պարագլուխ. անոնք ազգային շահերու շուրջ նոյնիսկ հակադրուած էին իրարու. պատմաբան Մ. Արզումանեան կը գրէ. «Հայկական երկու պատուիրակութիւնները գործում էին բաւականաչափ անմիաբան, մինչեւ իսկ միմեանց դաւաճան եւ մատնիչ էին անուանում»:

Ինչ անհեթեթութիւն, Եգիպտոսի մէջ հասակ նետած, ֆրանսական միջնավայրի մէջ կրթութեան, հայրենի հողէն մէջ շուրջին կորուած Պօղոս Նուպար Փաշայ կը յաւակնէր Հայաստանի վարչապետութեան: Նոյնիսկ պատուիրակութիւն մը ուղարկուեցաւ Երեւան (Վահան Թէքէեան եւ Նշան Տէր Ստեփանեան) բանակցելու Հայաստանի վարիչներուն հետ նախարարական աթոռներու շուրջ: Ամերիկահայ գրող, հանգուցեալ Նուպար Ակիշեան 1990-ին Լոս Անճելըսի մէջ հրատարակեց. «Մեծերէն Տասը» խորագիրով հատորը, որուն 90-99 էջերը յատկացուած են այս բանակցութեանց մանրամասնութիւններուն, գրուած Վահան Թէքէեանի գրիչով.

պէտք է կարգալ տեսնելու թէ հայրենիքի համար ճակատագրական այդ օրերուն ինչպիսի՞ մասնութեանը վերջը գեաղած էին մեր ջոջերը: Մեր Փաշան, մինչ յաւակնորդ օրօրներով Փարիզ-Լոնտոն կ'երթեւեկէր, Աւետիս Ահարոնեան սին պատրանքներու ետեւէ կը վազէր, անդին Քեմալ-Լենին Հայաստանի ճակատագիրը կը դարբնէին, ռազմական ուժով եւ քաղաքական հաշուարկներով: Դաժան իրականութիւնը սա էր եւ չտեսնելը քաղաքական տհասութիւն կը նշանակէր:

Դիպուկ է մատնանշել, որ միջազգային դիւանագիտութեան այդ կրկեսին մէջ, ուր կը մենամարտէին անգլիացի, ֆրանսացի, թուրք, ռուս, գերման, ամերիկացի աղուէսներ, գայլեր եւ արջեր, մեր քաղաքական մտամարզանքով կը գեղէին հայ գրականութեան կարկառուն դէմքեր, փիրուս սիրտի տէր գրիչներ՝ Վահան Թէքէեան, Աւետիս Ահարոնեան, Լեւոն Շանթ, Եղիշէ Արք. Գուրեան, Արշակ Զօպանեան:

Եւ պատմութիւնը թաւալեցաւ ոչ թէ ի նպաստ սին պատրանքներու, այլ՝ դաժան իրականութեան, երբ 1920-ին Քեմալիմ Քարապէքիր խուժեց Հայաստան, պարտադրեց Ալեքսանդրապոլի դաշնագիրը Հայաստանի իշխանութիւններուն: Վերջ գտաւ Հայաստանի Հանրապետութեան երկուքուկէս տարիներու պատմութիւնը: Քեմալ-Լենին գործարքով կորսնցուցին քանկախութիւնը, բայց Նոյեմբեր 29-ի խորհրդայնացմամբ պահեցինք հայրենիքն մաս մը, որ գրեթէ հասած էր վախճանման եզրին:

Հայ Սահմանադիր Ռամկավար Կուսակցութեան հիմնադիրներէն, Հ.Բ.Լ.Մ.-ի երկարամեայ քարտուղար եւ բանաստեղծ Վահան Մայլեգեան ունի. «Ճամբուս Մայրը» (Ա. Հատոր) (Փարիզ, 1954) գործը, որուն էջ 298-299-ին մէջ կը նկարագրէ Պօղոս Նուպար Փաշա-Աւետիս Ահարոնեան անձնական ատելութեան տարողութիւնը: Փաշան մերժելով Ա. Ահարոնեանի յոբելեանին ներկայ գտնուիլ կամ գրաւոր ուղեղձ մը ուղարկել, կ'ըսէ. «Ամէնուն ներեցի, բացի Ահարոնեանէ...»:

Հարցադրումներ, եթէ 1920 Մայիսին հայ պոլշեւիկներուն յանձնուէր Հայաստանի իշխանութիւնները Հայաստան աւելի ընդարձակ չէ՞ր ըլլար այսօր:

Եթէ Քեմալ Աթաթուրքի առաջարկին հետ համաձայնէին եւ լեզու գտնէին արիւնալի պատերազմի մէջ խրած քեմալականներուն հետ՝ փրկուած չէի՞նք ըլլալ Արեւմտեան Հայաստանի մէկ մասն ու Կարսը իր յարակից շրջաններով:

Եթէ հայկական պատուիրակութիւնները սին երազներու փոխան գործնապաշտ քաղաքականութիւն որդեգրէին եւ դաժան իրականութեան հետ հաշտուէին, աւելի դրական արդիւնքի չէի՞նք հասնել միթէ:

Եզրակացութիւն՝ Հայաստանի առաջին հանրապետութեան կարճատեւ կեանքի պատմութիւնը ես կը կոչէի սին պատրանքներու եւ դաժան իրականութեան միջեւ գոյապայքարի պատմութիւն:

ԳՐԱԻՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆ
Կիրակի, 14 Յուլիս, 2013, «Մասիս» շաբաթաթերթի Տիկնաց օժանդակ Մարմնի նախագահը («Պրանչ»): Վայր՝ 1400 Coronet, Pasadena: Մուտքի սակ՝ \$50:

«ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆԸ» ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ Է

Շարունակում էք 13-էն

տարած քննարկում ապրած հայերի մասին: Վահէ Թաշճեանը դրանով է բացատրում «Յուշամատեան» կայքում «օսմանեան հայեր», «օսմանեան հայկական» եւ ոչ թէ «արեւմտահայեր», «արեւմտահայկական» բառակապակցութիւնները գործածելը:

Յեղասպանութեան ժամանակ լեռնաքնակ հայերը զէնք վերցրին, իսկ քաղաքաքնակները փորձեցին լեզու գտնել քուրքերի հետ

«Յուշամատեանի» նիւթերն ուսումնասիրելով՝ Վահէ Թաշճեանը միշտ էլ հետաքրքրական նորութիւններ է իմանում: Օրինակ՝ Արեւմտեան Հայաստանի գիւղերում տները մէկ շարկանի էին, իսկ եթէ մէկ շարկանի էին, ապա կամ պատուհան չունէին, կամ վերելում միայն մէկ փոքր լուսամուտ ունէին: Նորութիւնն այն է, որ 1908-ից յետոյ այդ մէկ շարկանի տները դարձան երկշարկանի, եւ պատուհան սկսեց բացուել:

«Պատուհան ունենալ կը նշանակէ՝ դուրսը քեզի պիտի նայի: Առաջ դրսեցին չէր կրնար ներս նայիլ, այսինքն՝ դրացի քիւրդը կամ թուրքը պիտի սկսի դէպի

ցեղասպանութեան են ենթարկուելու, թէ՞ ամէն ինչ խաղաղ է, Վահէ Թաշճեանը կարծիք է յայտնում, որ հայերը կամ չէին ուզում տեսնել այն հսկայ ալիքը, որն իրենց պիտի ոչնչացնէր, կամ չէին կարողանում լաւ հասկանալ, թէ դէպի ուր է ընթանում այդ ալիքը, քանի որ հայերն ամէնից թոյլ տարրն էին մի կայսրութիւնում, որը սկսել էր ընթանալ ցեղասպանութեան ակտի ուղղութեամբ:

Միաժամանակ նա նշում է, որ երբ դեռեւս չկան պատերազմ եւ քեզ ոչնչացնելու գործնական քայլեր, հեշտ չէ յանկարծ որոշել թողնել հայրենի տունը: Հայերի առաջին նպատակն էր մնալ Օսմանեան կայսրութիւնում եւ ապահով, լաւ ապրել: Նրանք մտածում էին, թէ ինչո՞ւ այս իշխանութիւնը մեր կեանքի եւ գոյքի ապահովութիւնը չի երաշխաւորում քուրդ բէյերի կեղեքումներից, փնտուռ էին այդ նոյն իշխանութեան եւ դրան ծառայող հայկական հաստատութիւնների օժանդակութիւնը: Երբ այստեղ էլ լուծում չգտնուի, նոր կամայականաց սկսում են մտածել բոլորովին այլ լուծումների մասին: Այդպիսի լուծումներից մէկը ներկայացրել է Խրիմեան Հայրիկը: Բայց մէկ օրում չես կարող վերցնել «երկաթէ շերեփն» ու գործածել: Հարցին, թէ «Յուշամատեանի» նիւթերն ուսումնաս-



Քեսիրիկի գիւղի Յակոբ Բահանայ Տէր Յակոբեանն ու իր ընտանիքը (աղբիւր՝ Վահէ Հայկ)

ներս նայիլ: Եւ իրենց համար այդ հոգեբանական փոփոխութեան պահը կը ստեղծուի 1908-էն յետոյ», - ասում է Վահէ Թաշճեանը:

Շատ կարճ ժամանակ անց՝ 1909-ին, Ադանայի հայերի ցեղասպանութիւնը փոխեց այդ նոր կեանքի յոյսը. աւելի վաղ շրջանում ԱՄՆ գաղթած եւ ընտանիքներով Արեւմտահայաստան վերադարձած հայերից շատերը 1909-ից յետոյ, բոլորովին յուսալքուած, նորից գնացին ԱՄՆ կամ Եգիպտոս:

Անդրադառնալով հարցին, թէ Օսմանեան կայսրութեան հայերի նախադեռնեան ընկերային միջավայրը, հայերի առօրեան յուշումն են, որ տարիներ անց այս մարդիկ

սիրելով՝ պարզուէ՞լ են տարբերութիւններ ինքնապաշտպանութիւն կազմակերպած եւ չկազմակերպած հայկական բնակավայրերի կենցաղում, Վահէ Թաշճեանը պատասխանում է, որ լեռնցիները, ովքեր ապրել էին ինքնանկախ եւ դրսի հետ յարաբերութիւն շատ քիչ էին ունեցել (օրինակ՝ Մուսալեռում, Ձէյթունում, Շատախում), ընդվզեցին, գէնք վերցրին ու պայքարեցին, երբ իրենց ասացին, որ հիմա տունը, գոյքը պէտք է այստեղ թողնես ու գնաս: Իսկ քաղաքներում ապրող հայերը փորձեցին լեզու գտնել, իրենք իրենց համոզել, որ սա ժամանակաւոր գաղթ է, հաւատացին համայնքային հայկա-



ԺՈՂՈՎԻ ԵՐԱԿԵՐ
Ս.Դ.Հ.Կ. «Սապահ Գիւլ», «Ժիրայր Մուրատ», «Փարամագ» եւ «Արսէն Կիտուր» մասնագիտորէն ընդհանուր ժողովրդ տեղի պիտի ունենայ Զորեմի 12 Յունիս, 2013, երեկոյեան ժամը 8ին, Հնչակեան Կեդրոնին մէջ, 1060 Norht Allen Avenue, Pasadena: Ներքին Դիւան

ԳԻՆԵՉՕՆ ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆԻ «ՍՈՐՍՈՔՈՂ ԱՆՑԵԱԼԻ ԱՐԱՅԵՏՆԵՐՈՎ» ԳՐՔԻ

Շարունակում էք 8-էն

զունեան շահեկան հատուած մը կարողաց վերոյիշեալ հատորէն:

Իր շնորհակալական խօսքին մէջ Դոկտ. Մինաս Գոճայեան ըսաւ. «Այս գիրքին նպատակը հրաշքներ գործել չէ, այլ ծրագրուած է դուռ բանալու համար նոր որակի երկխօսութեանց, մեր միջեւ կատարուելիք նոր քննարկումներու եւ արժեւորումներու: Այդ իսկ պատճառով մտադիր ենք զայն հրատարակել նաեւ թրքերէն եւ անգլերէն լեզուներով:

Երեկոյի գեղարուեստական բաժինին իր մասնակցութիւնը բերաւ շնորհակալ երգիչ Դաւիթ Սամուէլեան: Ան յաջորդաբար երգեց՝ «Կարաւան», «Ձէյթունցիներու Քայլերգ» եւ «Կիլիկիա», դաշնամուրի ընկերակցութեամբ Արամ Լէփէճեանի:

Արեւմտեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի ողջոյնի խօսքը փոխանցեց եւ իր անձնական շնորհաւորութիւնները յայտնեց, ապա՝ «Պահպանիչ» աղօթքով հանդիսութիւնը փակեց Արթ. Դոկտ. Տ. Զաւէն Ա. Քնչյ. Արզումանեանը:

կան հաստատութիւններին, որոնք եւս, ազդուած լինելով իշխանութիւններից, ասում էին, որ յետոյ բոլորս վերադառնալու ենք:

Թուրքիայի դեսպանատունը հետաքրքրուած է «Յուշամատեանով»,

Հայաստանի պետութիւնը՝ ոչ Վահէ Թաշճեանի խօսքով՝ Հայաստանի Հանրապետութիւնում եւ սփիւռքում մոռացուած է Արեւմտեան Հայաստանի կենցաղի, մշակոյթի պատմութիւնը: Այժմեան հայերը թերեւս կարող են ասել, թէ իրենց պապերը որտեղից են եկել, իսկ թէ իրենց պապերն ինչպէս էին ապրում, շատ լաւ գիտէին 50 տարի առաջ ապրողները, բայց այդ սերունդն արդէն գնացել է, եւ առաջ է եկել նոր, վերակառուցուած պատմութիւն: Հայկական նոր պատմագրութեան մէջ տեղական պատմութիւններն այնքան էլ տեղ չունեն: «Յուշամատեանի» տնօրէնը կարծում է, որ Հայաստանի Հանրապետութիւնն՝ որպէս անկախ պետութիւն, բաւարար աշխատանք չի կատարում Արեւմտեան Հայաստանի պատմութիւնն ուսումնասիրելու համար: Յեղասպանութիւնն ուսումնասիրում է, իսկ 1915-ից առաջ հայերի կեանքի մասին ուսումնասիրութիւնները հագուազիւտ են: Մանաւանդ ՀՀ արխիւներում արեւմտահայ ժամանակների մասին շատ նիւթեր կան, բայց այդ բոլորը պէտք է պեղել, հետազօտել, հրատարակել:

Այս տարուայ վերջին «Յուշամատեանը» Պեռլինում լոյս է

ընծայելու իր առաջին գիտական հրատարակութիւնը՝ «Օսմանեան հայեր» 1-ին հատորը: Գիրքը պարունակելու է մօտ 10 մասնագիտական յօդուած եւ լուսանկարներ՝ հայերի սոցիալական կեանքի, մշակոյթի մասին: «Յուշամատեանի» յետագայ ծրագրերից է նաեւ դասախօսութիւններ, համագումարներ, ցուցահանդէսներ կազմակերպելը:

Հայաստանի իշխանութիւնների որեւէ ներկայացուցիչ, այդ թւում նաեւ սփիւռքի եւ արտաքին գործերի նախարարութիւններից, չի հետաքրքրուել «Յուշամատեանի» աշխատանքով: Փոխարէնը Գերմանիայում թուրքիայի դեսպանատնից ցանկացել են իմանալ, թէ ինչով է զբաղում «Յուշամատեանը», ովքեր են դրա անդամները, եւ խորհուրդ են տուել ցեղասպանութիւն բառը չնշել:

«Յուշամատեանի» կայք ամէնից շատ այցելում են ԱՄՆ-ից, այնուհետեւ ՀՀ-ից եւ թուրքիայից, մանաւանդ թուրքիայի գաւառներից:

«Յուշամատեանը» ֆինանսաւորում են անհատ բարերարները՝ սփիւռքահայ ընտանիքները:

Բացի հիմնական աշխատակազմից՝ միութիւնն ունի կամաւորների ցանց: Հիմնական ինդիւրը, որին հանդիպում է «Յուշամատեանը», ֆինանսների եւ հետեւաբար մարդոյժի պակասն է: Բայց Վահէ Թաշճեանն ասում է, որ չնայած դրան՝ աշխատանքը գոհունակութիւն պատճառով է, քանի որ իրենք մի աշխարհ են վերակերտում:

VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles
Նոր Գիրքերու Տպագրութեան եւ Հին Գիրքերու Նորոգութեան Համար Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ

Vahe Atchabahian
1870 E. Layton St. • Pasadena, CA 91104
626-354-5924 • vamedia@yahoo.com

ՀԱՄՇԵՆԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 14-էն

Սուլթան Ապտիւլ Մեծիտի կողմէ Հաքքը Հոծայուն օրինագիծը գործադրութեան դրուեցաւ, որ իրաւունք կու տար կայսրութեան տարածքին իրենց կրօնքը պահելու եւ դաւանելու իրենց լեզուն եւ մշակոյթը պահպանելու: Այս պարագան յատկանշական եղաւ մանաւանդ Արտուին նահանգին համար, ուր համաշխարհային կայսրութեան համար կարելի եղաւ պահել իր աւանդութիւններն ու հայկական բարբառը:

Իսկ աւելի ուշ 1877-78 տարիներու ռուս-թրքական պատերազմին որպէս հետեւանք, Արտուինը մաս կազմեց Յարական Ռուսաստանին:

1895ի Համիտեան ջարդերուն գոհ պիտի երթային բազմահազար Համաշխարհային կրօնափոխութիւնը չընդունելու որպէս հետեւանք՝ Տրապիզոն նահանգէն ներս, իսկ նոյն շրջանին բազմահազար Համաշխարհայինը ալ փախուստ կու տան դէպի Աբխազիա ու կը պահեն իրենց Հայ առաքելական դաւանանքը:

Իսկ 1915ին Համաշխարհային թիւնն ալ Մեծ Եղեռնի տարիներուն, թրքական վայրագ յարձակումներուն գոհ պիտի տար քանի մը տասնեակ հազար հոգի, իրենց կրօնքին համար: Աւելի ետք, Խորհրդային Վրաստանի կողմէ Աճարիան ներառուածով, Համաշխարհային թեմքը կը մնար Թուրքիոյ սահմաններէն ներս: Թուրքիոյ մէջ աչլեւս չէին մնացած քրիստոնեայ Համաշխարհային, մնացողներն ալ ստիպողաբար կրօնափոխ դարձած էին:

1944ի Նոյեմբեր 24-26ին, Ստալինի հրահանգով, Վրաստանի Աբխազիոյ եւ Աճարիոյ շրջաններուն մէջ ապրող Համաշխարհային ընտանիքներ պարտադրաբար չոն բնակող լազերու, մսխէթ թուրքերու եւ իսլամացած Վրացիներու եւ Յոյներու հետ կը տեղափոխուին Կեդրոնական Ասիա՝ Ղազախստան, Կիրկիզիա եւ Իւզպէքիստան:

Իսկ նոյն ժամանակաշրջանին, եւ Համաշխարհային Բ. Պատերազմէն ետք՝ մինչեւ 1953 թուականը, Թուրքիայէն փախստական Հեմշիլներ, յատկապէս Օրտու, Տրապիզոն եւ Կիւմիւշլիանէ շրջաններէն եկան ապաստանելու Աբխազիա ու աւելի ուշ Քրասնոտար, ուր Խորհրդային շրջանին, Մարզի հարաւային մասը կը կոչուի «Հայկական ազգային շրջան» իր 63 աւաններով:

1980էն ետք Կիրկիզիոյ Հեմշիլ ընտանիքներուն արտօնուեցաւ հաստատուիլ Քրասնոտարի շրջանը ու միանալ Համաշխարհայինը բնակեցուած աւաններէն ներս, պահելով Հայ Առաքելական Եկեղեցւոյ իրենց պատկանելիութիւնը:

Իսկ 1989էն ետք, մանաւանդ Կիրկիզ եւ Իւզպէք սահմանային բախումներուն, Իւզպէքիստանի Հեմշիլ ընտանիքներն ալ եկան հաստատուելու Քրասնոտարի Հայկական ազ-

գային շրջանէն ներս, ու հետագային դարձան ռուսահայատակ:

Դաւանանք եւ բարբառ

Ներկայի կարգ մը աղբիւրներու համաձայն, աշխարհատարած համաշխարհային թիւր կը գնահատուի շուրջ 700.000: Բացի Թուրքիոյ, Հարաւային Ռուսիոյ եւ Աբխազիոյ համայնքներէն, Հեմշիլներ կ'ապրին Անգարայի եւ Կոստանդնուպոլսոյ մէջ, ինչպէս նաեւ շատեր որպէս Թուրքիոյ հպատակ գաղթած են Եւրոպայի զանազան երկիրները:

Պատմական Համաշխարհային իշխանութեան տարածքէն ներս կազմուած էր Խաչ Քարի Հայ



Վախան Ամատունիի գերեզմանաքարը, Աշտարակ, Կիւմիսայի ձայաստան

Առաքելական թեմը (Ամատունի Տոհմի հզօրութեան շրջանին) որ պահեց իր քրիստոնեայ դաւանանքը մինչեւ 1530 թուականը, որմէ ետք օսմանցի բռնակալները հայկական եկեղեցիները մզկիթի վերածեցին ու ծայր տուաւ բռնի իսլամութիւնը:

Ըստ ռուս պատմաբաններու, 19րդ դարու երկրորդ կիսուն, Արտուին նահանգի եւ Աբխազիոյ մէջ բնակող Համաշխարհային պահպանած էին Հայ Առաքելական Եկեղեցւոյ աւանդական տօները՝ Տեառնընդառաջ, Համբարձում, Վարդավառ եւ այլն, ու այդպէսով իրենց հայկական արմատները:

Այսօր այդ երեւոյթը միայն կարելի է տեսնել Քրասնոտարի կազմաւորուած համայնքէն ներս, ուր կան նաեւ Հայկական եկեղեցիներ:

Համաշխարհային թեման օգտագործած Հոմաշիմա բարբառը այսօր կը գործածուի Արտուին (Թուրքիա) նահանգի Հոփիա քաղաքը բնակող Համաշխարհային կողմէ, ինչպէս նաեւ Քրասնոտարի Քուպան քաղաքի համաշխարհային կողմէ:

Պատմական Համաշխարհային մէջ իսլամացած հայերուն թիւը կը գնահատուի շուրջ 70.000, փոքր համայնքներ ալ գոյութիւն ունին Էրզրումի եւ Կիւմիւշլիանէի եւ Սամսունի մէջ: Իսկ Քրասնոտարի

մարզէն ներս Համաշխարհային թիւնը կը գնահատուի 150.000ի շուրջ. աւելի նուազ՝ շուրջ 50 հազար ալ կը բնակին Աբխազիոյ տարածքին: «Երկրամաս» թերթի վերատուրութիւնը

«ՀԱՄՇԵՆ» Կեդրոնը

2000 թուականի Մարտին Հարաւային Ռուսիոյ Քրասնոտար Մարզի Քուպան քաղաքէն ներս որոշուեցաւ կազմել «ՀԱՄՇԵՆ» գիտական-լրատուական-մշակութային կեդրոն մը, որ ունեցաւ հիմնադրման իր առաջին ժողովը նոյն տարուան Յուլիս 15ին:

Այս հիմնադրման ժողովին որոշուեցաւ կեդրոնի գերագոյն նպատակ որպէս՝ վերածնունդն ու պահպանումը շրջանի հայութեան ազգային ինքնագիտակցութեան:

Անդրանիկ այս ժողովին նախագահ ընտրուեցաւ 1983ին Իւզպէքիստանէն գաղթած Հեմշիլ ընտանիքի գաւակ Արտաւազը Թոգուճեանը, որ որպէս գիտաշխատող կ'աշխատէր Քուպանի համալսարանէն ներս, իսկ որպէս տնօրէն՝ Քրասնոտար հրատարակուող «Երկրամաս» թերթի գլխաւոր տնօրէն՝ Տիգրան Թաւադեանը: Նոյն տարուան Նոյեմբերին «ՀԱՄՇԵՆ» կեդրոնը ձեռնարկեց «Համաշխարհային Գրադարան» մատենաշարին, որուն առաջին հրատարակութիւնը դարձաւ Բարունակ Թորլաքեանի «Համաշխարհային Էթնոկրաֆիան» աշխատասիրութիւնը: Իսկ Սոչի ծովեզերեայ քաղաքի «Միութիւն» կեդրոնին մէջ կազմակերպուեցաւ «Քրասնոտար Երկրամասի Հայերը» խորհրդակցութիւնը՝ ՀԱՄՇԵՆ կեդրոնի նախաձեռնութեամբ: Առնուած այս քայլերը սկսած են վառ պահել, կազմաւորուած Համաշխարհային թեման Քրասնոտարի համայնքին ազգային ինքնագիտակցութիւնը:

Համաշխարհային Շաբաթ Երեւանի մէջ

Քուպանի մէջ գործող ՀԱՄՇԵՆ կեդրոնի նախաձեռնութեամբ, 2008 թուականի Յուլիսի 21-27ին տեղի ունեցաւ Համաշխարհային շաբաթ Երեւանի «Նարեկացի», Արուեստի Միութեան կեդրոնէն ներս: Միջոցառման կազմակերպութիւնը իրականացաւ «Նարեկացի» ար-

ուեստի կեդրոնի «Հայրենադարձութեան եւ Հիմնաւորման Երկիր» Միութեան, «ԲԱԳԱՐԱՆ Հայ Կանանց Հասարակական» կազմակերպութեան եւ «Հայկական Ճարտարապետութեան Ուսումնասիրող» կազմակերպութեան միատեղ գործակցութեամբ: Միջոցառման ներկայ եղաւ եւ իր խօսքով հանդէս եկաւ Գուգարքի թեմի (Վանաձոր) քաջարի առաջնորդ՝ Սեպուհ Եպս. Զուլճեանը (Մալաթիոյ ծնունդ): Զուգահեռ տեղի ունեցաւ Համաշխարհային պատմութիւնը նկարագրող պատկերներու ցուցահանդէսը, ինչպէս նաեւ Յուլիս 23ին «Գոնկրէս» պանդոկէն ներս գիտաժողով մը «Համաշխարհային հայութիւնը Պետութիւն եւ Մշակոյթ» նշանաբանով:

Եզրակացնելու համար կրնանք աւելցնել, որ Երեւանի մէջ կը հրատարակուի «Ձայն Համաշխարհային» ամսաթերթը, խմբագրութեամբ հրատարակախօս եւ ազգագրագէտ Սերկէյ Վարդանեանի: Ամսաթերթը ունի իր յատուկ կայքէջը որպէս տեղեկատուութեան միջոց Համաշխարհային թեման:

Յաւելուած

Որպէս նմոյշ հայկական Հոմաշիմա բարբառին, ընթերցողները կրնան գաղափար կազմել հետեւեալ օրինակներէն.

- Օրդի-Որդի Հոյիլ-Հովիլ Էլլող ես-Ըլլաս Լոս Անճելլա Օգտագործուած Աղբիւրներ- 1) The HEMSHIN-HOVANN H. SIMONIAN London: Rutledge, 2006
- 2) Կրօնափոխ Համաշխարհային բարբառը, բանահիւսութիւնը եւ երգարուեստը Սերկէյ Վարդանեան, 2009-Երեւան
- 3) Hemshinli-BERT VAUX The Forgotten Black sea Armenians Harvard University, 2001
- 4) TURKIFICATION OF THE TOPONYMS IN THE OTTOMAN EMPIRE AND THE REPUBLIC OF TURKEY 2011 Montreal -Arod Books

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳԵԱՅՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ քննարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

Մանրամասների համար հեռաձայնել՝ (818) 246-0125

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ

ՓԱՍՍԻՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈԳԻ ԸԱՍԱՐ) ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104 ՍԱՆՐԱՍԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԸՆՈԱՉԱՅՆԵԼ (626) 797-7680

HyeAID2



**BENEFIT CONCERT FOR
SYRIAN ARMENIAN
RELIEF FUND**



GEVORKIAN DANCE ACADEMY

Directors **VARTAN & SIRANUSH GEVORKIAN**
Choreographer **SONA GEVORKIAN**

Special Guests from Armenia



LEYLA SARIBEKYAN



SILVA HAKOBYAN

DOLBY THEATRE

6801 HOLLYWOOD BLVD LOS ANGELES, CA 90028

(FORMERLY KODAK THEATRE)

JUNE 9, 2013 6:00 PM

FOR TICKETS

818.618.2348 - Itsmyseat.com/HyeAid

818.265.0506

ticketmaster

www.SyrianArmenianReliefFund.org

